

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՐՈՎՅԱՆԸ

Հայրը պատմում էր, և սենյակի մտերիմ լռության մեջ նրա պատմությունը հեքիաթի նման կախարդիչ էր դառնել՝ թեև պատմում էր մեծ հայրենասերի մասին:

Իսկ փոքրիկը հմայված լսում էր և երագում: Նա իրմանկական աչքերով կարծես տեսնում էր այդ անձնվեր, խանդավառ գրողին, հետևում էր նրա բոլոր շարժումներին:

Հայրն էլ տարված էր իր նյութով: Նրան թվում էր, թե ինքն էլ նվագում է մի երկարաշունչ, սքանչելի սիմֆոնիա:

Երաժշտական դրվագների պես հնչեց գրողի բարձրանալը Արարատ, նրա Դորպատի երազներն ու հայրենակարոտը, նրա վերադարձը հայրենիք, նրա վսեմ ստեղծագործությունը, նրա այրվելը հայրենիքի սիրուց և անհայտացումը:

Հայրը վերջացրեց և սկսեց ծխել: Եվ սենյակի խորին լռության մեջ՝ փոքրիկը ոտների ծայրերով մոտեցավ փարվեց հորը, նայեց շուրջն ու փսփսալով հարցրեց.

— Հիմա Արովյանի ոտնատեղերը կա՞ն Արարատի վրա:

ԱՐՈՎՅԱՆԸ

(Էջ 210)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 373 պահվում է մեկ ինքնագիր: ԳԱԹ ԴՖ N 374 պահվում է նաև մեկ մեքենագիր օրինակ, վերնագրված «Հետքերը»: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Կովերի նախիրը, ոչխարի հոտը իրար մեջ անցած, հորթերի հետ խառն անցնում են դաշտով: Մի քանի մարդ էլ քշում են նրանց շտապով: Առատ խոտը տրորվում է նրանց կճղակների տակին: Իսկ շուրջը դաշտեր են՝ ընդարձակ, ազա՛տ, անծայրածիր:

Բայց սա նախիր չէ և ոչ էլ հոտ: Սրանց դուրս չեն բերել գյուղից արածելու և ոչ էլ քշում տուն՝ կթելու:

Սրանց քշում են հրդեհված, վտանգված գյուղերից, ազատում վերահաս թշնամուց, հապճեպ ստիպում արագ անցնել դաշտավայրը: Բայց ո՛ր են քշում, ինչո՞ւ, ի՞նչ կարիք կա հեռանալ այս խոտավետ, խաղաղ դաշտերից: Այս լայնարձակ արոտներում կարելի է ազատ ապրել, շնչել աշխարհում:

Խեղճ անասուններ, ի՞նչ լեզվով հասկացնես նրանց երկոտնյա գազանների տաժանամիտ արարքները: Որ պետք է գնալ, ազատվել նրանցից, որ պետք է շտապե՛լ, շտապե՛լ... Եվ ահա կովերից մեկը դուռնչը հպել է գետնին և հանգիստ պոկում է հյութալի խոտը:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

(Էջ 246)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, N 9 —10, այնուհետև ԵԺ, հ. I. 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՆՄԻՏ ՋԱՐՑԵՐ

Մա՛րդ զարմանալի: Քեզ բնությունը կանչել է կյանք, որ գործդ կատարես. աշխատես, պայքարես, ստեղծագործես, վայելես, ուրախանաս, պարես, երգես և հետո,— դե ի՞նչ անենք... զնաս:

Իսկ դո՞ւ, գործդ թողած՝ ընկել ես բանի հետևից. ո՛ր բերին քեզ, ինչո՞ւ բերին աշխարհ, որտեղի՞ց, ո՛ր են տանելու:

Մեկը հարցնի քեզ,— ախր քե՞զ ինչ, ի՞նչ ես մաշում կյանքդ, ապրիր էլի՞:

Անմի՛տ, անմի՛տ:

ԱՆՄԻՏ ՋԱՐՑԵՐ

(Էջ 211)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՆՑՅԱԼԻ ՀՈՒՇԵՐ

— Լավ հիշողություն ունեմ,— դա՛ է վատը:

Այսպես ասաց ինձ մի օր մի ծանոթ երաժիշտ: Ասաց տխուր շեշտով, գլուխը ծանր շարժելով և մտքերով խորասուզված ինչ-որ հուշերի մթին անդունդը:

Ես առարկեցի.

— Լավ հիշողությունը գանձ է, բարեկամս: Դա օգնում է գլխում պինդ պահելու որքան գիտելիքներ, որքան գեղեցիկ բաներ:

Երաժիշտն առարկեց.

— Օ՛, մի՛ ասեք: Այնպիսի մանրամասնություններով հիշում եմ ո՛վ ինձ վիրավորեց, ո՛րտեղ և ի՞նչ խոսքերով, այնպե՛ս հիշում եմ խոր մանկությունից մինչև այս հասակս բոլոր տգեղ ու վիրավորիչ դեպքերն ինձ հետ, ուրիշների հետ... Անհամար, անվերջ... և այդ ամենն այնքան կենդանի, վառ, ուժեղ, կարծես այս րոպեիս է կատարվում այդ բաները: Դաժան բան է...

Ես հարցրի.

— Բայց չե՞ որ ձեր ուժեղ հիշողությունը դառն ու տխուր դեպքերի հետ պետք է նաև ձեր հոգում զարթեցնի պայծառ անցքեր, ուրախ ժամեր:

Երաժիշտը թախծալի նայեց աչքերիս մեջ և գլուխը տխուր թափահարելով պատասխանեց.

— Ա՛խ, տխուր, վիրավորիչ, տգեղ դեպքերի հուշերը թունավորում են բոլոր պայծառն ու գեղեցիկը: Վիշտը, վատը ուժեղ են տպավորվում, վերքը սպիներ է թողնում, մինչև ուրախությունը ցնդում է արևի շողքի պես անհետ ու անվերադարձ:

ԱՆՑՅԱԼԻ ՀՈՒՇԵՐ

(Էջ 210)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ № 375 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ջլապինդ բազուկները լարած, քլունգը արկուն ձեռքերում շարժելով նա զարկում էր սարի կրծքին, շարժում, տեղահան էր ուզում անել մեծ քարաբեկորը:

Նա մերկացել էր, և ուռուցիկ կրծքի վրայով կաթում, գլորվում էին քրտնքի կաթիլները: Իսկ շառագույն դեմքը ժպտում էր:

Երբեմն էլ ատամները պինդ սեղմելով կծկում էր դեմքի մկանները, զայրանում և մռնչալով քլունգը ետ էր տանում և ուժգին հարվածում սարի կրծքին: Ապա կրկին խաղաղ քանդում էր քարաբեկորի շուրջը պնդացած քարահողը:

Երբեմն էլ կատակով փնթփնթում էր ու երգում:

Մոտեցա.

— Զը՛, դժվար է:

Զդադարեց հարվածելուց: Միայն հարվածների ռիթմի միջով դեպի իմ կողմը նետեց.

— Բա ի՞նչ... զոռո՛վ կլի, խաթրով չի՛ ըլի:

— Աշխատա՞նքը:

— Աշխատանքը: Այ էս սարը: Խաթրով չի տա, զոռո՛վ կտա:

— Ճշմարիտ է:

— Բա՞... կռվե՛նք, որ վերցնենք:

Ասաց, ուժգին հարվածեց ու երգեց, ինչպես կռիվ մտնող մարտիկ:

ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Էջ 204)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, № 6, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, Զ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 376 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՊՐՈՂԸ

Ինքը ուսուցիչ էր: Մի ծեր հայր ուներ, մի կին, որ հիվանդ էր, պահանջկոտ, դժգոհ, քմահաճ:

Պիտի մեռնեն— հաստատ էր այդ:

Հայրը ուտել էր ուզում (սովի ժամանակն էր). չէին տալիս: Բոլորը գնում էր հիվանդին:

Եվ մի օր հայրը մեռավ: Նա, որ առողջ էր: Բայց դեռ մնում էր մեռնող հիվանդը, դեռ երկար տարիներ չէր մեռնում, դեռ մնում էր ու տանջո՛ւմ, տանջո՛ւմ, տանջո՛ւմ...

ԱՊՐՈՂԸ

(Էջ 238)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՏԱՄՆԵՐ

Նա ռազմաճակատում իրեն համար մի նոր գործ է գտել, նոր արհեստ, ոսկի ատամներ է պոկում բերաններից, հավաքում մի տոպրակի մեջ:

Առաջ սկսեց պոկել սպանված բանակայինների բերաններից: Հետո սկսեց վիրավորներին սպանել և ատամները հանել: Վերջն անցավ առողջ զերիներին և թիկունքում մնացած գլուղացիներին:

Հարստանալու կրքով մոլեգնած նա մի գլուխ ոսկի ատամներ է որոնում: Ամենուրեք ոսկի ատամներ, որ հավաքում է ու հավաքում իր տոպրակը: Ազահության կրակն այրում է նրա սիրտը. զազանային ուրախություն է լցվում նրա անասնական աչքերը, երբ նա զգում է, որ իր ոսկիների տոպրակը լցվում է, ծանրանում ու մեծանում:

Այսպես կարելի է սնդուկներ լցնել, միլիոններ կիտել, ուռճանալ: Կիրքը արբեցրել է նրան: Նա այլևս մարդ չի տեսնում իր շուրջը, այլ ոսկի ատամներ, մանր, միջակ, խոշոր, փայլուն, որ լցվում են նրա տոպրակները, ծոցերը, սնդուկները, իր տունը, քաղաքը, հայրենիքը...

Եվ այլևս նա մարդ չէր որոնում, ավելորդ էին բերանները, դեմքերը, գլուխները, աչքերը, մարմինները: Ավելորդ էին մարդիկ: Նա ատում էր մարդկանց, մարդիկ խանգարում էին նրան՝ փախցնելով, թաքցնելով ատամները, որոնց ծարավից այրվում էր նա անասնական տանջանքով:

Եվ ահա մի օր նա տեսավ մի ատամ, որ զարհուրելի կրճտոցով փայլատակեց մի բերանի մեջ: Նայեց այդ ատամի շուրջը և տեսավ մի սարսափելի դեմք, մկանային, հուժկու ձեռներ, որ սվինը սեղմած վագեցին դեպի նա և խոցեցին նրա ազահ սիրտը:

Մի վայրկյանում նա առաջին անգամ վերջապես տեսավ մարդուն:

Դա մի զարհուրելի էակ էր:

Սարսափելի մի ատամ...

ԱՏԱՄՆԵՐ

(Էջ 219)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 9—10, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՐՁԸ

Մի սպիտակ արջ էր փախել գազանանոցից: Քաղկոմից գանգադարեցին զինվորական իշխանությամբ, որ զինվորներ ուղարկեն ոչնչացնելու նրան՝ երկյուղ կրելով, որ անշուշտ կարող է վնասել բնակիչներին: Չինվորներն եկան ավտոմատներով պաշարեցին արջին: Հենց այն է հրամանատարը կարգադրում էր, որ կրակեն արջի վրա՝ մի սիբիրյակ նրանից թույլտվություն խնդրեց՝ փորձել արջին վերադարձնելու գազանանոց: Հրամանատարը թույլ տվեց: Չինվորը անվախ մոտեցավ արջին, կանգնեց շատ մոտ և... ականջի տակ ինչ-որ բաներ փսփսաց, խոսեց և արջը, կհավատա՞ք, իսկույն գլուխը կախեց ու հանդարտ վերադարձավ գազանանոց:

Բայց ի՞նչ մի այնպիսի բան ասաց զինվորը, ի՞նչ հասկացրեց արջին: Անշուշտ ոչինչ արտակարգ ու հանճարեղ բան: Արջն էլ հո լեզու չի՞ հասկանում: Պարզ է, գազանին ազդեց հանգիստ, բարյացակամ ձայնը, խաղաղ հայացքը, վստահ շարժումները...

Գազանն անգամ հակամետ է ավելի դեպի խաղաղ կյանքը:

ԱՐՁԸ

(Էջ 231)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՐՑՈՒՆՔ

Արցունքը անգույն հեղուկ է՝ բաղկացած ինքսուրուր ամբողջ մեկ տասներորդական տոկոս ջրից, մեկ ամբողջ քառասունվեց տոկոս օրգանական աղերից և զրո ամբողջ չորս տասներորդական տոկոս սեղանի աղից:

Բայց արդյո՞ք այդպես:

Օ՛, եթե արցունքներն իրենք լեզու առնեին և ասեին, թե ինչ են իրենք իսկապե՛ս...

ԱՐՑՈՒՆՔ

(Էջ 231)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 439 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԲՆՈՒԹՅՈՒՆ

Օրն այսօր դերասանի է նման: Մեկ մնայլվում է, ամպակուտակ ունքերը վրա տալիս, մեկ պայծառացնում է դեմքը և մտախոհ աչքերով նայում, երբեմն փոթորկում է, գոռում, շանթում հիագարիւր, երբեմն լաց լինում ողբաձայն, որ մի փոքր հետո քրքջա լիաթոք ու ազատ: Ներկայացում է կատարյալ: Օրն այսօր դերասանի է նման:

Ո՛վ բնություն, ի՞նչ ես զայրանում, գոռում, տանջվում, ծիծաղում, ի՞նչ ես խորհում: Դերասա՞ն ես դու, խա՞ղ ես խաղում, դերե՞ր զանգան, և ուրիշներին ես ներկայացնում:

Իսկ դո՛ւ, դու ի՞նչ ես, ո՞վ ես դու, ի՞նչ է քո իսկական իսկությունը:

Բա՛ց դեմքդ, ո՛վ անհանգիստ բնություն:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

(Էջ 209)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946: Այնուհետև ԵԺ, հ. II, 1955: ԳԱԹ ԴՖ N 382 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԲՈՔՈՆԸ

Շաքքով կանգնեցրել են գերիներին նրանց հաց բաժանելու:

Բարի կարմիրբանակայինն իր լայն կրծքին բոքոններ գրկած անցնում է նրանց առջևով և ամեն մեկին տալիս երկուական բոքոն:

Առատ, թող ուտեն...

Նրանք առել են այդ բոքոնները:

Նայում ես, թե ինչպե՛ս են ստանում նրանք բոքոնը: Նրանցից մեկը հացը գոհունակ պահում է մի թևի մեջ և ուղիղ զինվորավարի ձգվում: Այսինքն՝ «զգաստ»... Նրա համար ամեն ինչից մեկը դիպցիային է.

զնալ կռվել, երբ հրամայում են, սպանել, երբ հրամայում են, գերի ընկնել, հաց ստանալ և զգաստ կանգնել, երբ ինչպես նրան թվում է այդ, հրամայում են:

Բայց այդպես չի կանգնած նրա կողքինը:

Սա հացերը սեղմել է մի թևի մեջ, մյուս թևը թափով վայր է կախել: Վայր է հակված նաև նրա գլուխը: Դեմքը մտախոհ է, աչքերը սևեռել է գետին: Անհանգիստ է: Նա խոր ապրումներ ունի: Ի՞նչ է մտածում նա: Արդյոք ափսոսո՞ւմ է, որ իրեն պոկել են սպանելու, ավերելու գործից: Ինքնասիրությունն է վիրավորվել՝ թշնամու ձեռքից հաց ընդունելով: Գուցե տենչում էր ձեռ գցել մի ամբողջ երկիր և ոչ թե մի բոքոն և դա զայրացնո՞ւմ է նրան:

Գուցե խելքի է գալիս՝ թե ինչացո՞ւ էր այս պատերազմը:

Թվում է, թե նա մտածում է այդ հացի մասին, թե ինչպես է ձեռք բերում այն:

Ո՞վ գիտե:

Մտածի՛ր, մտածի՛ր: Այդ հացը, որ դու բռնել ես քո զենքի սովոր ձեռքում՝ բուսել է մի արդար երկրի աշխատավորի ձեռքով: Դա երկրի մարդու հացն է, որ ապրեցնում է աշխարհը և քեզ, որ այս թուփա բռնադատված ես մարդկայնորեն ստանալու և մարդու պես ապրելու նրանով:

Առայժմ այդքանը՝ սոցիալիստական բոքոնը...

ԲՈՔՈՆԸ

(Էջ 243)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, N9—10, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

Գարնան վերջն էր: Սկսեց մի բարակ անձրև անուշ ցողալ: Ջրերը օձերի նման արագ-արագ սողեսող վազվզեցին ճաքճքված հողի վրայով:

Այգու կավե պատին հենված կանգնել էի: Տեսնեմ ինձնից ոչ շատ հեռու պատի անկյունում նույնպես մի գյուղացի է կանգնել և նայում է դաշտին: Նրա գոհունակ դեմքին մի մանր ժպիտ էր խաղում: Եվ նկատեցի, որ մեղմաձայն էլ խոսում էր անկյունից այն կողմ ինչ-որ մեկի հետ: Անշուշտ իր կովն էր, կամ եզր, որոնց ես չէի տեսնում:

Մի փոքր մոտեցա:

— Խմի՛ի՛, ազի՛զ ջան, խմի՛ի՛, օխա՛նայ, — ասաց խանդադատած, ջերմագին սիրով:

Գնացի նրա մոտ: Այս ո՞ւմ հետ է: Պատի տակ ոչ ոք չկա: Նրա առջև սևահողն էր գոմշի նման փռված և իր ճաքվածքի երախով ֆոտացնում, խաշտում էր կենսալի ջուրը:

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

(Էջ 232)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԳԱՐՈՒՆ

Բարձրանում էի փողոցով դեպի բլուրները:

Արև օր էր և լուռ չորս կողմս: Հագիվ մի որևէ անցորդի քայլեր վրդովում էին փողոցի լռությունը: Հեռվից միայն լսվում էին ծտերի մոլեգին դժժոցը և երեխաների սուր կանչերը: Առուն քլքլում էր, զարթնած հողի հոտն էի առնում:

Հարթ մայրի վրա երեխաները, դե նրանք կլինեին, ուրիշ էլ ո՛վ, կավճով գրել էին՝ գարուն:

Անհուն զգացմունքով կարդացի այդ բառը և լցվեցի նրա իմաստով: Ի՞նչ լավ էին արել, գրել էին՝ գարուն: Դա շա՛տ գեղեցիկ բառ է, այո, դա ամենալավ բառն է աշխարհիս երեսին: Դա մանկությունն է, պատանեկությունն է, դա սե՛ր է, կյա՛նք է, ուրախությունն է:

ԳԱՐՈՒՆ

(Էջ 200)

Առաջին անգամ տպագրվել է ԳԱ, 1941, N 6, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, «Անի», Բեյրութ, 1946, N 6—7, «Նոր գիր», Նյու-Յորք, 1950, № 2, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ N383 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ

Լայնալիճ, հեռաձիգ գետափով ձգվում է և գնում կորչում հեռվում, հորիզոնի մեջ, գետնիվեր, մի մեծ բազմություն կանանց: Գեղջկուհիներ են, բահերով փորում են մի երկայն փոս:

Ջրա՛նցք է սա, որի միջով պիտի հոսի կենարար ջուրը դեպի անվերջ դաշտավայրերի հողը: Ծուտով, ահա շուտով կբացվի գյուղական մեծ հանդեսը, դրոշակներով ու ծաղիկներով զարդարված գյուղացիք կգան դիմավորելու կապուտաչյա արծաթափեր հեղուկին: Նա կվազի և տենչանքով կփարվի սևաչյա հողին: Եվ կծնվեն բյուրավոր ծաղիկներ, դաշտերում կալեկոծվեն ոսկեծղի արտերը և երկրի դուստրերն ու պատանիները երգելով կանցնեն կերթան հեռուն, հեռուն:

Չո՛ւր մտքեր. սա մի երկար, չարագույժ խրամատ է. այստեղ մարտ պիտի մղվի՝ կատաղի, համառ և արյունահեղ...

Մի պառավ կին, սակայն թողել է մի պահ փորելը և կոր մեջքը դրստած նայում է դեպի գետը, դեպի հեռուն: Նայում է և մտածում: Նա պնդակազմ է կոճղի պես, կարճավիզ ու կռացած: Նա լիքն է ցասումո՛ւմ, անեծքո՛ւմ... ո՛չ, ավելի սարսափելի մի ուժով: Ահա՛, ահա՛ վայր կշարտի նա բահը, աշխատավոր ձեռքը կկարկառի օդի մեջ և գերբնական ուժով կորոտա դեպի հեռուն մի ինչ-որ սասանիչ խոսքով և դրանից կավերվեն երկրներ, կկործանվեն պետություններ և աշխարհը ջրաճգորեն կցնցվի...

ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ

(Էջ 246)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 9—10, այնուհետև «Անի», Բեյրութ, 1946, N 6—7, ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԳՐԱԴԱՐԱՆ

Մի ամբողջ մարդկության աչքեր նայում են այս պահարաններից: Բազմահազար այս գրքերում մտածում և լռում է պայքարող, հիացող և թախծող մի մարդկություն:

Ահա սեղանների շուրջը բազմաթիվ գլուխներ, նույնպես խորհող և ստեղծագործող՝ կքվել են այդ գրքերից շատերի վրա: Մարդկային հոգու անհուն աշխարհը:

Ի՞նչ են որոնում նրանք այդ գրքերում: Կյանք և հավերժություն:— Ապրե՛լ, մնալ անվե՛րջ, հասնել ապագայի՞ն, գնալ նրա հետ դեպի անմահություն...

Բայց սա ի՞նչ է թրթռում օդի մեջ:

Պլպլացող փոքրիկ աղոտ լույսի պես անցնում է նա այդ գլուխների վրայով, կտրում գրադարանի տարածությունը:

Օ՛, ցեցն է դա:

Ցեցը՝ գրադարանների տխուր բնակիչը: Սպառնալիքը ամեն տեսակ գրքերի: Այնքան փոքրիկ է նա, բայց ինչքան մեծ սառնություն է փչում նրա թևիկներից: Չար մահվան շունչը կա այդ սառնության մեջ: Ես կարծեմ տեսնում եմ նրա փոքրիկ միկրոսկոպիկ դեմքը, որ անհուն թախիծով և իրոնիայով նայում է չորս կողմ... Նայում բոլոր ստեղծագործողներին, մտածողներին, հավերժության համար գրողներին:

Կարծեմ ժպտում է նա օձային ժպտով, թե՞ մռայլվում է իբրև մահվան դիմակ: Եվ ճախրում է նա այդպես մարդկային մտքի և ստեղծագործության վրայով: Իմաստության վրայով:

Զգո՛ւյշ նրանից: Դա մտքի, հոգու ցեցն է:

ԳՐԱԴԱՐԱՆ

(Էջ 237)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 386 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

Ե՛-Ե՛-Ե՛Ս... Ե՛-Ե-Ե՛Ս...

Նախասովետական ժամանակ խմբագիրը մի տեղագրական ակնարկ էր տպել իր ամսագրում, իր ստորագրությամբ: Խմբագիրը վաղուց մեռել էր: Ամսագրի աշխատակից մի գրող շարունակ գանգատվում էր, որ խմբագիրը իր՝ չեմ հիշում՝ հողվածն էր յուրացրել, թե՞ մտքերը, թե՞ գրողը պատմել էր նյութը, թե՞ գրած էր տվել այն:

Հիշում եմ կաֆեում մինչև հոգու խորքը զայրացած գրողը խոսում էր այդ մասին, փաստարկում, ճշգրտում, ապացուցում, իր այլ հողվածները մեջ բերում, նշում որոշ բառեր, դարձվածքներ: Եվ բռնկված թակում էր օդը, խեղդված ձայնով վնգում էր, նվում:

— Ե՛-եւ-եւ եմ գրել ե՛-ե՛-եւ եմ գրել, եւ, եւ, եւ:

Պետք էր տեսնել, թե ինչպես էր դողում նա, թե այդ պահին ինչպես էին ուռչում նրա վզի երակները, ինչպես կապուտակում էին նրա դեմքի մկանները, ինչպես արյուն կոխած աչքերի բիբերը դուրս էին ընկնում, չարության թույնով պսպղում:

Օ՛, այն՝ մինչև հոգու հատակը ատելավառ՝ հայացքը, այն կիրքը, այն վրդովմունքը, այն աններող ոգին, երբ կոկորդում խեղդվում էր բառը և նա դողահար վնգում էր:

— Ե՛-ե՛-եւ եմ գրել, ե՛-եւ-եւ, ե՛-ե՛-եւ...

Ո՛ր է հիմա այդ եսը: Կարելի լինե՞ր գտնել այն խմբագրին, խոստովանել տալ, որ յուրացրել է այս գրողի հողվածը: Ապա և գտնել սրան և ասել. այո՛, այո՛, այո՛, դո՛ւ ես գրել, դո՛ւ, դո՛ւ, դո՛ւ: Կարո՞ղ է այս գրողը հիմա լսել այս, հասկանալ, գոհանալ... Ո՞րտեղից... Ավա՛ղ, նա հիմա միայն մի՛ բան է կարողանում անել. փոշիանալ և փոշիանալ: Ինչպես «ամենահանցավոր», «ամենատեղի» այն մարդը, որ (ո՛վ ոճիր) յուրացրել է այս գրողի հանճարի արգասիքը:

Ե՛-Ե՛-Ե՛Ս... Ե՛-Ե-Ե՛Ս...

(Էջ 238)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, Հ. II, 1956: ԳԱԹ N 387 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Ինքնագրում մանրապատումն սկսվում է այսպես. «Մի հին խմբագիր մի տեղագրական ակնարկ էր տպել նախասովետական ժամանակ իր ամսագրում, իր ստորագրությամբ: Խմբագրի աշխատակից մի գրող իրենն էր համարում այդ ակնա՛րկը թե մտքերը»:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԵՐԱԺԻՇՏԸ

Նստած էր երաժիշտը դաշնամուրի մոտ և շարադրում էր մի վսեմ սիմֆոնիա: Ի՞նչ վսեմ. մի նորօրինա՛կ, ինքնատի՛ւ ստեղծագործություն: Ալեգրոն հյուսվում էր անդանտեի հետ, ընդհատվելով մի ինչ-որ չարաճճի սկերցոյով, կրկին վերադառնում հիմնական չափին, որպեսզի հանկարծ գրոհի մի բուռն պրեստոյով:

Քրտինքը հեղեղում էր ստեղծագործողի ջերմ ճակատը, նա հևում էր և գրում, գրում:

Եվ նա չէր նկատել, թե ինչպես իր հետևից թաքուն ներս էին մտել մի խումբ քննադատներ, որ դառն ճղափոցներով խորհրդակցում էին երաժշտի սիմֆոնիայի մասին: Առավելապես նրանք զայրացած էին այն խրոմատիկ գամմաներից, որ գլխավոր թեմայից անկախ ընկերակցում էին սիմֆոնիային և խլացնում այն: Անդանտեն շատ էր անհարմար կցվում ալեգրոյին, սկերցոն խանգարում էր նրա վեհությանը՝ միջամտելով տեղի-անտեղի: Իսկ այդ խրոմատիկ գամմանե՛րը, որ խենթացնում էին մարդու:

Հանկարծ քննադատներից մեկը բռնեց երաժշտի ականջից.

— Սա ի՞նչ սկերցո է: Ռ՞ւր է քո անդանտեն:

Երաժիշտն ականջն ուսին քսելով ազատեց և ետ դարձավ դեպի քննադատը: Բայց այդ վայրկյանին մյուսներն սկսեցին քաշել նրա ականջը և ճղավել.

— Ինչո՞ւ չես ավարտում ալեգրոն, ալե՛գրո տուր, ալե՛գրո...

— Թողե՛ք, հարկավոր չէ, բոլորովին հարկավոր չէ այդպես,— խնդրում էր նրանց երաժիշտը,— ախր ինչացո՞ւ է այդ ձևը,— այ, սպասեցե՛ք բացատրեմ, նու, ի՞նչ կարիք կա այդպես անելու...

Այդ ժամանակ քննադատներից մեկը եղունգով ճանկեց երաժշտի ականջը և ճվաց.

— Փակի՛ր խրոմատիկ գամման:

— Բայց նախ լսեցե՛ք ինձ, ես շատ հարգում եմ ձեր կարծիքը... լսեցե՛ք, սիրելի՛ բարեկամներս...

Հանկարծ երաժիշտը զարթնեց ավելի սուր մի ծակոցից: Ոչ ոք չկար սենյակում: Ինքը անկողնում էր, քնած: Միայն ականջն իսկապես ճանկռտված էր:

Առնետներն էին...

ԵՐԱԺԻՇՏԸ

(Էջ 205)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. 1, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956, ԳԱԹ ԴՖ N 388 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԵՐԱԽՏԱՎՈՐ ԳԱՅԼԵՐԸ

(Կատակ)

Չէ՛, սիրում եմ նրանց, այդ գայլերին... Խորապես հարգում եմ, անչափ երախտապարտ եմ նրանց: Ուղղակի նրանց եմ պարտական իմ առողջությունը: Նրանք ինձ տալիս են, ի՞նչ եք կարծում, դեղորայք, երկաթի կաթիլներ, էլեկտրաբուժում... Ո՛չ իհարկե: Ի՞նչ բաներ են սրանք: Նրանք ինձ շնորհում են ամենանճիշտ բուժման միջոցներ, բնության ամենամեծ բարիքը:

Երբ մտնում եմ անկողին և ինձ պաշարում են զանազան հոգսեր կամ զբաղեցնում ինչ-որ արտառոց միտք և քունս խանգարում՝ ես ինձ հանձնում եմ զանազան երևակայական արկածների: Իբրև թե մենակ անցնում եմ անտառի միջով: Ձմեռային խուլ, ահավոր գիշեր է: Ահա լսվում է մի ոռնոց... Հետո երկրորդը, երրորդը: Ահա բացատում երևացին նրանք՝ գայլերը... Նրանք տեսնում են ինձ և... վազում դեպի ինձ... Ես մագլցում եմ բարձր ծառի վրա: Սկսվում է պաշարումը: Փաթաթվում եմ տաք մուշտակիս մեջ և սպասում լուսանալուն և անցորդներին:

Սահում են իբրև թե ժամերը, ես բոլորովին էլ չեմ շտապում: Հանկարծ հիշում եմ, որ գրպանումս ատրճանակ կա: Հասնում եմ, հանգիստ նշան բռնում գայլերից մեկի վրա և կրակում: Գայլն ընկնում է վիրավոր, մյուսները հարձակվում են վրան և սկսում նրան լափել: Հետո կրակում եմ երկրորդին, երրորդին: Ժամանակ է անցնում: Գայլերն սպասում են իմ իջնելուն: Չեմ իջնում և ապահով բարձրությունից տաք, անվտանգ դիտում եմ նրանց, որ ճրագների նման նայում են ինձ, բայց ձեռները չեն ընկնում և հետո...

Չարթնում եմ: Առավոտ է: Զնել եմ ամենաարդար, անվրդով քնով, կազդուրված ու պատրաստ նոր օրվա աշխատանքի:

Չէ՛, սիրում եմ այդ գայլերին:

ԵՐԱԽՏԱՎՈՐ ԳԱՅԼԵՐԸ

(Էջ 214)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ N 389 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԵՐԵԽԱՆ

Որդեգրել են երեխային, և նա առաջին օրերից ազատ էր պահում իրեն, պահանջում էր, զայրանում, թավալվում հատակին, ոտներով ծեծում:

Բայց որքան սաստկացնում էր այս բաները, որքան շատ էր նեղություն տալիս, ավելի էին սիրում նրան, կապվում հետը:

Այդպես է: Նեղությունը, ջանքը, տանջանքը, հոգսը՝ կապում են...

Մի անգամ էլ ծանր հիվանդացավ, հազիվ մահից ազատվեց:

Ավելի՛ և ավելի՛ ուժեղ կապվեցին:

ԵՐԵԽԱՆ

(Էջ 239)

Առաջին անգամ տպագրվել է «Համբավաբեր», 1915, N 1, այնուհետև տպագրվել ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՉԱՎԱԿՆԵՐ, ՄԱՅՐԵՐ

Օ՛, երբեմն ինչե՛ր են քաշում մայրերը:

Երբեմն չգիտես ինչ անես, ինչ ասես:

Դե իհարկե, իսկապես կարելի է և կանենք և կասենք ինչ-որ պետք է անենք, ասենք:

Ես հիշում եմ մի դեպք. քաղաքացիական պատերազմի ժամանակ կար մի մայր, որի մի որդին Կարմիր բանակումն էր, մյուսը՝ սպիտակգլարդիականների մեջ:

Դե՞ որդիները զարմանքով, զայրույթով, ատելությամբ կմտածեին իրար մասին:
Սպիտակգլարդիականը մի անգամ տեսավ մորը և ասաց. «Ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս համարձակվեց անցնել կարմիրների կողմը: Դրան այրելն անգամ քիչ է»: Մյուսն էլ պատահեց մորը. «Ախր ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս համարձակվեց մտնել սպիտակների մեջ: Ես ցույց կտամ նրան դավաճանել ժողովրդին»:

Լսու՛մ էր այս ամենը նրանց մայրը:

Մի անգամ էլ տեսավ նա նրանց միասին, երբ կարմիրբանակային որդին ընկավ սպիտակների ճանկը և նրան տանում էին գնդակահարելու, և այս տեսարանին ներկա էին երեքով. երկու եղբայրները և մայրը...

Պատկերացրեք այս մոր սիրտը:

Իհարկե, մենք գիտենք, թե ի՞նչ կանեինք և ի՞նչ կասեինք, թե կարմիրբանակայինին և թե սպիտակգլարդիականին:

Բայց մա՛յրը, մա՛յրը...

Իսկ ահա Հայրենական պատերազմում մարտնչող որդիներից մեկն իր և եղբայրների անունից այսպես գրեց իրենց մորը:

— «Այնպե՛ս արա, որ մենք հպարտանանք մեր ծնողով»:

Մի ուրիշ որդի գրում էր.

— «Մենք ոչնչացնում ենք մարդկության թշնամուն: Էլ ի՞նչ՝ դու, էլ ի՞նչ՝ ես»:

Բայց ահա մի մայր էլ այսպես գրեց իր զավակին.

— «Միայն առա՛ջ, ո՛չ մի քայլ ետ. մի՛ խնայիր կյանքդ. ազատեցե՛ք Ուկրաինա՛ն»:

Ահա:—

Զավակներ...

Մայրեր...

ՉԱՎԱԿՆԵՐ, ՄԱՅՐԵՐ

(Էջ 225)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 396 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԷԶՍՊՈՆԱՏՆԵՐ

Արվեստի թանգարաններից մեկի վարիչն է: Սիրում է իր գործը: Հավաքել է բավականին նյութեր: Կարգավորել է, սիստեմի վերածել, բաժանել.— արկղների, դարակների, էպոխաների, ըստ անձերի ու նյութերի:

Ուսումնասիրողներ է հավաքագրել:

Գրել է տալիս և ինքն էլ գրում է մոնոգրաֆիաներ՝ կլասիկ ու կենդանի նշանավոր անձերի մասին: Շարունակում է հավաքել ամեն տեսակ նյութեր, պատառիկներ՝ հներից, նորերից, ինչ որ պիտի դառնա պատմության ուսումնասիրության առարկա:

Մի հիշատակարան էլ ունի՝ դա իր անձնական գիրքն է առայժմ, ուր ամեն օր, ամեն դեպք գրի է առնում նշանավոր ժամանակակիցների, նրանց հետ կապված մարդկանց պատմածներից՝ դեպքեր, խոսքեր, կատակներ... Ամեն, ամեն բան պիտի անցնի, գնա թանգարան, դառնա ցուցահանդեսների էքսպոնատ և քարանա:

Եվ այդպես վարվելով իրերի, դրկումենտների հետ՝ կամաց-կամաց այդպես էլ սովորել է նաև իր շուրջն ապրող կենդանի մարդկանց: Անցնում են նրանք, դառնում թանգարանային էքսպոնատ:

Նրա ապագան անցյալն է. անցյալ կատարյալը:

Թռչում է մտքով նա դեպի այդ ապագայի գիրկը: Եվ ի՞նչ...

Ամեն, ամեն ինչ այնտեղ անցել է արդեն, դառել անրջոտ հուշ:

ԷԶՍՊՈՆԱՏՆԵՐ

(Էջ 207)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. 1, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 398. պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Առաջին հրատարակության մեջ «Ուսումնասիրողներ է հավաքագրել» նախադասությունից հետո՝ «Արվեստի պատմությունն են ուսումնասիրում»:

ԻՄ ՄՈՍԿՎԱՆ

Մոսկվա՝... Աշխարհագրորեն նա մարմնավորված է մի պունկտում, իբրև մի մեծ ժողովրդի մի հնամենի և այժմեական քաղաք՝ դեմքը շրջած դեպի այն հավիտենականությունը, որից չպիտի բաժանվի նա: Սակայն ներքնապես, հոգեպես անհուն է Մոսկվան: Նա ծավալվում, աճում է, դառնում ինչ-որ պատկերների շարան, հնչյուններ, խոսքեր, մտքեր... Մերթ լսում ես դղրոյունը Բորոդինյան ճակատամարտի¹, մերթ դաշտերի լռության մեջ հասնում են քեզ գոգոյան տրոյկայի զանգակների դողանքը: Երբեմն լսվում են անձայն մի փողոցից «ռուսական երկրի մեծ գրողի» քայլերը, և լռում է ողջ Ռուսիան՝ ականջ դնելով դրան: Մոսկվային նայել են Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենևի, Գոգոլի աչքերը: Մոսկվայում է խորհել իր հսկայական խոհերը և խորհում է այժմ նոր մարդկության նոր աշխարհի ստեղծողներից մեկը: Մոսկվան լիքն է համաշխարհային մտքերով, Մոսկվան դուրս է հոսում և լցվում ողջ երկրագունդը և սփռում է լույս, հույս, կյանք և բերկրանք: Համայն աշխարհի մարդկությունը նայում է Մոսկվային: Երբ խուժադուժ ֆաշիզմը որոնելով իր մահը գալիս էր Մոսկվայի վրա, Մոսկվայի բազուկներում գտավ այդ մահի վճիռը: Ամեն ժողովուրդ ամեն տեղ ունի իր նվիրական զգացմունքը Մոսկվայի հանդեպ: Իմ ժողովուրդը ևս... Երբ ահա մի որևէ անքուն գիշեր մտքիս առջև ծառանում են չարագույժ ուրվականներ, հայացքս հառում է դիմացի լեռներին և հոգիս ուզում է սողոսկել մի ինչ-որ տարակուսանքի, չար խաղ՝ ես շնչում եմ. «Մոսկվա կա»: Եվ խաղաղ քունն իջնում է հոգուս և աչքերիս: Մոսկվան նաև իր սիրելի ույուտներն ունի: Սիրում եմ նրա խաղաղ, դեկտեմբերյան երեկոն: Սիրում եմ նրա մետրոների ուրախ դղրոյունների սյուլիտան: Սիրում եմ Մոսկվայի թեթև շունչը, հյուրասիրությունը, սիրալիր հիմնարկները, բարեկամական խմբագրությունները, սիրում եմ Ֆադեևին, Տիխոնովին, առաջինի զվարթ բացականչությունը և համբույրը՝ հանդիպելիս, երկրորդի ծխամուրձի օգնությամբ անլույսի և հյութալի պատմությունները: Սիրում եմ կախարդիչ Մխատը², Ստալինի անվան գործարանը³, գործին նվիրված բանվորներին, նրանց հետ գրական հանդիպումները: Սիրում եմ Կարմիր հրապարակը, ուր ռուս մեծ ժողովուրդը իր եղբայրակից ժողովուրդների հետ, տոնից տոն երգում է իր հաղթանակները:

ԻՄ ՄՈՍԿՎԱՆ

(Էջ 188)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Կարելի է ասել միայն, որ գրված է Հայրենական մեծ պատերազմից հետո դեկտեմբեր ամսին, Մոսկվայում դատելով «Սիրում եմ նրա խաղաղ դեկտեմբերյան երեկոն» նախադասությունից:

ԳԱԹ ԴՖ N313 պահվում է մեկ ինքնագիր:

Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

1 Նկատի ունի ռուսական բանակի մղած ճակատամարտը Նապոլեոնի զորքերի դեմ 1812 թ. օգոստոսի 26-ին, Մոսկվայի մոտ՝ Բորոդինոյի դաշտում:

2 Մոսկվայի գեղարվեստական ակադեմիական թատրոնը:

3 Այժմ Մոսկվայի Լիխաչովի անվան ավտոգործարան՝ ԶԻԼ:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԼՈՒՍԱՆԿԱՐ

Անցնում էի գավառական քաղաքով, գնացի այցելության մի վաղեմի բարեկամ լուսանկարչուհու։ Նա ինձ հետ շատ էր մտերիմ եղել իմ պատանեկության խենթ օրերին։

Օրը ամպամած էր, մռայլ, երբ ձգտում ես մի հարմարավետ մտերմիկ անկյան։

Մտա ընդունարանը։ Նա ինձ ընդունեց այն մտերիմ, բարի ժպիտով և մեղմաձայն բարևով, որ իսկույն ջերմացնում է մարդու հոգին և հանգստացնում է, տրամադրում։

— Ես իսկույն կգամ, կխոսենք երկար, մի՛ թուպե,— ասաց բարեկամուհին և դուրս գնաց ընդունարանից։

Ես մնացի՝ սպասելով նրան։

Ընդունարանը մի կոկիկ սենյակ էր, մեղմ լուսավորված ու խաղաղ։ Գեղեցիկ լուսանկարներ, բարեկամուհու խստապահանջ ճաշակով՝ հատուկ ընտրված իր համար, պատերից խաղաղ նայում էին և կենդանացնում սենյակի լռությունը։

Մի լուսանկար նրանցից գրավեց ուշադրությունս։ Դա մի դեռահաս կին էր։ Գեղեցիկ էր նա՝ չեմ կարող ասել։ Բայց որքան ուշով ու երկար նայեցի— վերին աստիճան հետաքրքրական դառավ և գրավիչ։ Եվ կանացի էր և արծվենի, հպարտ։ Նա նայում էր՝ ճակատը մի փոքր բարձր պահած։ Բայց ինչ որ ամենից ավելի գրավիչ էր նրա մեջ,— դա անհուն մտերմությունն էր, ուղղակի հարազատությունը։

Ես այնպես զգացի, որ նրա հետ կարելի էր դիմանալ կյանքի բոլոր ճախորդություններին։ Նրա հետ կարելի էր ստեղծագործել, տանել պայքարի բոլոր պերիպետիաները։ Նրա հետ կարելի էր աշխարհն ըմբռնել իր ողջ խորությամբ։ Տխուր օրեր չէին լինի։ Նա ինքը մի անսպառ ուրախություն կլիներ... Եվ ի՞նչ կլինի՝ եթե պատահեմ նրան... Հը՞...

Երբ բարեկամուհին ներս մտավ՝ ես հայացքս չհեռացնելով լուսանկարից՝ վեր կացա և մոտեցա պատին։

— Սա ի՞նչ լուսանկար է։

— Ախ, նա ձեր ուշադրությունը գրավեց...

— Նայում եմ և ուղղակի կասեմ. արտակարգ դեմք է։ Ի՞նչ խարակտեր։

— Այո, վսեմ խարակտեր և սրտալի մարդ, այն որ ասում են՝ իսկական մարդ հազվագյուտ։

— Եվ գեղեցիկ,— հարեցի ես։

— Այո՛, անցյալ տարի վախճանվեց...

— Ախ նա մեռած է...

ԼՈՒՍԱՆԿԱՐ

(Էջ 201)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 1, այնուհետև ԵԺ, հ. 1, 1946, ԵԺ, հ. II, 1956։
Ինքնագիրը չի պահպանվել։ ԳԱԹ ԴՖ N 406 պահվում է մեկ տպագիր օրինակ։ Տպագրվում է ԵԺ, հ. II- ից։

«Եվ ի՞նչ կլինի՝ եթե պատահեմ նրան... Զը՞...»,— նախադասությունը առաջին երկու հրատարակություններում չկա:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԼՔՎԱԾ ՇՈՒՆԸ

Առաջ սիրելի էր նա այն տան մեջ և բոլորի փայփայանքին արժանացած: Շոյում էին, խաղում հետը, կերակրում, զրոսանքի տանում:

Բայց այն տանը հայտնվեց մի սիրունիկ մանուկ, և բնականաբար, չգիտեմ ինչպես՝ շանը մոռացան: Դե նա էլ մի փոքր ծերացել է և մոտենում է իր վախճանին:

Հաճախ տեսնում եմ նրան մի անկյունում կծկված:

Հազիվ լսելի նվում է...

Մեղքանում եմ...

ԼՔՎԱԾ ՇՈՒՆԸ

(Էջ 226)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 266 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԽԱՂ

Գյուղացին ինչպե՞ս է անցնում քաղաքի փողոցներով: Արդյոք մտի՞կ է տալիս չորս կողմը, մի բան տեսնո՞ւմ է... Կարծես այո, կարծես՝ ոչ: Աչքերի մեջ ինչ-որ մշուշ կա, դեմքը կենտրոնացած, մտքերով ծանրաբեռնված: Ասենք նա գործով է եկել քաղաք:— Ծախի, փոխանակի՝ գնա տուն: Թերևս միայն այդ:

Բայց մի անգամ մի գյուղացի խուրջինն ուսին՝ կանգնել էր մանկապարտեզի առջև:

Դասամիջոց էր կարծեմ: Բայց ո՞վ գիտե, գուցե և դա՞ս...

Երեխաները դուրս էին թափվել փողոց ու վժվժում էին մայթին թափած աղյուսի ու ավազի վրա: Գյուղացին աչքերը լարած հետաքրքիր հետևում էր նրանց: Երեխաները գոգնոցներում մի-մի աղյուս, ոմանք էլ իրենց փոքրիկ թիակներով ավազը պատգարակի վրա ածած՝ կրում էին բակը, վարպետների մոտ: (Ներսը ինչ-որ տուն էին շինում):

— Ի՞նչ կար հետաքրքիր այդ մանուկների խաղի՞, թե «դասի» մեջ:

Շատ բան: Ախր շինարարություն՝ քաղաքացի թե գյուղացի հասակավորների ձեռքով նա շատ էր տեսել և էլ չէր նայում: Եվ որ դպրոցի երեխան շինարարություն խաղա, այդ էլ էր տեսել շատ: Բայց որ մանուկը շինարարության մասնակցի անմիջապես...

Ես չէի նկատել: Բայց նա նկատեց...

Գյուղացին մանր ու չարաճճի ժպտում էր: Հետո գլուխը թափ տվեց ու գնաց իր բանին: Նրա աչքերում սրբվել էր սովորական մշուշը՝ աչքերը պայծառ էին, իմաստավոր:

ԽԱՂ

(Էջ 197)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946, այնուհետև՝ ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ N 426 պահվում է մեկ մեքենագիր օրինակ վերնագրված «Շտրիխներ»: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴՐ

Հասարակ լուսանկար է «Советский Союз» ժուռնալի առաջին էջում: Տարին՝ հազար ինը հարյուր հիսուն և մեկ, համար տասնմեկ:

Ես կխնդրեի նայել:

Դա մի վեհ պատկեր է:

Լենինի անվան գյուղատնտեսական արտելի կոլտնտեսականներ: Ստորագրել են Համաշխարհային Խորհրդի Խաղաղության Պակտի դիմումի տակ¹: Առջևում բրիգադի Սոկոլովան է, սեղանի հետև կանգնած, մի ձեռքում գրիչը, որով ստորագրել է, մյուսը թղթի վրա:

Վճիռն արձակված է: Բոլորն ստորագրել են և կանգնել իրենց բրիգադիի հետևը հպարտ ու վճռական պոզաներում: Նրանք հասարակ գյուղացիներ են, ազնիվ աշխատավորներ, բայց և հրաշալի հագնված են, կերպարանքները կիրթ, տեսքերն ինտելիգենտ: Ամեն մեկը մի շնորհալի տիպար, աչքերը իմաստնալի:

Իսկ ֆոնի վրա ցորենի հսկա դեզն է՝ նրանց աշխատանքի արդյունքը:

Պետք է նայել, սակայն, նրանց աչքերին: Ի՞նչ ազնիվ կշտամբանք, պահանջ: Նրանք պարզորեն խոսում են.

— Ահա, ստորագրեցինք: Եթե դուք կարծում եք, թե մենք չգիտենք, թե ինչեր եք անում դուք այդտեղ՝ գիտցեք, որ դա շատ լավ գիտենք:

Եթե դուք ուզում եք իմանալ, թե ինչ ենք վճռել մենք՝ ահա՛. աշխատել և ազնվորեն ու հաստատ պաշտպանել խաղաղությունը:

Իսկ եթե դուք կարծում եք, թե մենք մոռացել ենք մեր վերքերն ու կորուստը:

Եթե դուք կարծում եք, թե մենք մոռացել ենք Մոսկվան, Լենինգրադը, Ստալինգրադը, Օրյոլ-Կուրսկը և Բեռլինը²:

Այդ մե՛նք ենք:

Մի՛ վախեցնեք մեզ:

Է՛յ, դո՛ւ-դո՛ւք...

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴՐ

(Էջ 249)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 401 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

1 Նկատի ունի Մոսկվայի մոտ, Լենինգրադում, Ստալինգրադում, Օրյոլ-Կուրսկի աղեղում և Բեռլինում մղված ճակատամարտերը Հայրենական մեծ պատերազմի ժամանակ:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԾԱՂԻԿՆԵՐ...

Ծաղիկներ, սիրունաչիկ, սիրելի՛ ծաղիկներ, ի՞նչ գործ ունեք դուք այստեղ, այս համաշխարհային, ահեղաշունչ արհավիրքի օրերին:

Մի՞թե չի հասնում ձեզ այս զարիուրելի հրետանիների ահագնադորոք բառաչը: Մի՞թե չի խեղդվում ձեր նազանի շունչը վառողի այս թանձրամած ամպերի մեջ:

Նայում եք այնպես մեղմ և հեզ ժպտում:

Ահա փնջել են ձեզ, շուկա են բերել ձեզ, որ գնաք տները՝ աչք ուրախացնելու:

Ձեզ նայում են և միտքս գնում է հեռուն, հեռուն, ահեղ մարտերի դաշտերը, ուր դարձյալ այսպես գեղեցիկ ու հեզ, ինչպես այժմ ամեն թույլ դուք մարդու աչքի առջևն եք:

Ահա անցնում են սաղավարտավառ հերոսները գյուղերի ու քաղաքների միջով և դուք մատաղահաս աղջիկների ձեռքից նետվում եք հերոսների կրծքին:

Ահա օրորվում եք ընկած հերոսների գլխին և նայում էլի այսպես մտերիմ, դիպչում նրանց այտերին:

Ծաղիկներ, դուք գնում եք նստում նաև նրանց շիրիմների վրա ու վճիտ աչքերով էլի այսպես հեզանազ նայում, նայում...

Ի՞նչ եք ուզում ասել, սիրելի՛ ծաղիկներ...

ԾԱՂԻԿՆԵՐ

(Էջ 220)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, №№ 9—10, այնուհետև «Անի», Բեյրութ, 1946, № 6—7, ԵԺ, հ. I, 1956, ԵԺ, հ. 11, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԾԱՆՈԹՍ

Նրան ճանաչում էի: Հասարակ երիտասարդ էր: Հետը ոչ կապ, ոչ մի առանձին զգացում դեպի նա՝ համակրանք, հակակրանք: Կար իրեն համար: Միայն ճանաչում էի և ուրիշ ոչինչ:

Նա պատերազմ գնաց:

Մի օր էլ լսեցի, որ նա սպանված է:

Չգիտեմ ինչու՝ սկսեցի այնուհետև մեկ-մեկ հիշել նրան: Ու քանի միտքս զբաղվում էր նրանով, այնքան ափսոսում էի նրան, վշտանում անգամ: Եվ ասում էի՝ տես, երբ կար, կարևոր չէր թվում, սպանվեց՝ կարիքն զգացվում է: Կենդանություն էր, լավ էր՝ ջերմացնում էր կյանքը: Ուրեմն նա կարևոր

անհրաժեշտություն էր կյանքում և ես չէի նկատում, որ մեկ-մեկ մարդուց է բաղկացած կյանքը: Եվ ահա այդ կյանքը չկա, հանգավ կրակը՝ իր չափով սառեցրեց կյանքը:

Այնուհետև ո՛րքան երագել եմ, թե ինչ լավ կլինեիր, որ չսպանվեիր:

Թանկացավ նա ինձ համար անսպասելիորեն, անհուն կերպով: Բայց մի օր, ի՞նչ եք կարծում, նրան տեսա փողոցում: Նա կենդանի էր մնացել: Չարմացա, չհավատացի աչքերիս:

Օ՛, ի՞նչ ուրախ եմ, ի՞նչ ուրախ եմ: Նրա գտնվելը, հավատացե՛ք, դեպք եղավ ինձ համար: Կարծես մի շատ թանկարժեք նվեր եմ ստացել:

Որովհետև գտնվեց **մա՛րդը** նրա մեջ,— խորհեցի շատ նրա մասին՝ իմաստավորվեց, «կիսատը» դառավ **լրիվ մարդ...**

ԾԱՆՈԹՍ

(Էջ 230)

Առաջին անգամ տպագրվել է «Մարտակոչ», 1925, N 20, այնուհետև ԵԺ, հ. II 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԿԱՏՈՒՆ

Ձագեր ունի, ուստի և ինչ տալիս ենք իրեն՝ չի ուտում, տալիս է նրանց:

Ուղղակի սպառվում է սննդից զրկվելով: Ստիպում ենք՝ համառում է, չի ուտում: Փակում ենք խոհանոցում, միսը դնում առջևը: Դարձյալ չի ուտում. կանչում է ձագերին: Նրանք շարվում են փակ դռան մոտ, իսկ նա մլավում է, կանչում: Ուղղակի լաց է լինում:

Բայց և չի կարողանում մինչև վերջը զսպել նաև ի՛ր ախորժակն ու քաղցը:

Եվ... ուտում է...աղիոդորմ լաց լինելով:

ԿԱՏՈՒՆ

(Էջ 239)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 404 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԿԻՆՏՈՆ

Անցնում էի Թբիլիսիի աղմկալի փողոցներից մեկով: Մի ցանկապատ բակի մեջ հավաքվել էր երեխաների բազմություն: Տան կենտրոնները դուրս էին եկել պատշգամբ և զսպված ժպիտներով նայում էին ներքև: Երեխաների բազմության միջից, որ զարմացած և զվարճանալով նայում էր բակում կատարվող մի բանի՝ երբեմն լսվում էր մի քրքիչ ու իսկույն դադարում:

Ներս մտա բակը: Մի հասակավոր կինտո կրկին կինտոյական կարտուզ գլխին, կոզիրյուկը ականջին թեքած, ալեխառն կարճ խուզած կզակով, արխալուղով ու լայն շալվարի մեկ տոտը բաց թողած, մյուս տոտը գուլպայի մեջ, ուսից կախել էր շարմանկան և պտտեցնում էր կոթը:

Բայց ի՞նչն էր զվարճալին և հետաքրքրականը՝ շարմանկան ձայն չէր հանում: Ոչ մի հնչյուն: Անգամ չէր լսվում շարմանկայի կոթի պտտվելու ֆասոցը, իսկ ինքը՝ կինտոն՝ լուռ էր և լուռ:

Չէր նայում ոչ ոքի, չէր արձագանքում, ոչ մի նկատողության, ոչ մի ծիծաղի: Վերևից երբեմն դրամներ էին նետում ներքև, նրա ոտների մոտ: Չէր նայում:

Չես հասկանում չէ՞ր կարողացել, թե՞ չէր կամենում տորոգել կոտրված շարմանկան, կատա՞կ էր անում այնպիսի լուրջ դեմքով: Եվ ի՞նչ էր նվագում՝ լռություն, թե՞ անցյալ:

Բայց նրա անձայն շարմանկայի վրա դեռ մնում էին ծաղկավոր նախշերը, իսկ իր՝ կինտոյի հագուստի, կեցվածքի և կոմիկ-լուրջ դեմքին հին օրերի հումորն ու աշխույժը:

ԿԻՆՏՈՆ

(Էջ 202)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 1, այնուհետև ԵԺ, հ. 11, 1956: ԳԱԹ ԴՖ . N 405 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆԸ

Դիմել է ՀԼԿԵՄ կազմակերպության, որ կամենում է մարտի գնալ իբրև կոմերիտական: Ցանկությունը հարգել են, նա քաջարի և անձնվեր մարտիկ է, և ահա քաղաքական բաժնի պետը ժպտալով նրան հանձնում է կոմերիտականի տոմսը: Նա ձեռքը մեկնել է, որ ընդունի:

Բայց նախքան տոմսն ստանալուն ներկայանալը... Լավ հագնվել է, պատրաստվել: Ֆրանտավարի, կոկ սանրվել է, ճակատին ծեփել սև փայլուն մագերը, գլխարկը ծռել և խնամքով դրել մագերի վրա, օձիքը կանոնավոր կոճկել... Մաքուր ածիված դեմքը մի փոքր չարաճճիորեն ժպտում է:

Երևում է, որ մի քիչ զարդարվել է քաջարիությամբ, սիրում է կռվել... Դե, կտրի՛ճ է, երիտասարդ...

ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆԸ

(Էջ 245)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, N 9-10, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

Նրանք, այդ երկու երաժիշտները՝ իրար թշնամի էին: Ավելի ճիշտը՝ մինն էր թշնամի մյուսին, անտաղանդը և անհաջողակը: Մյուսը՝ տաղանդավորը, պաշտպանվում էր միայն իր նախանձորդի հարձակումներից, ու երբեմն էլ, երբ սա չափից դուրս էր գալիս և փրփրալի կատաղությամբ չարախոսում էր իր մասին, տաղանդավորը մի գայրալի խոսք էր ասում, թերևս վիրավորիչ խոսք:

Անտաղանդը զրպարտում էր իր արվեստակցին, թե սա է պատճառն իր անհաջողության: Հարձակվում էր նաև հասարակության վրա, որ սա կողմնակալ և նախապաշարյալ վերաբերմունք ունի դեպի տաղանդավոր երաժիշտը և անարդար է դեպի ինքը:

Բայց, ինչպես միշտ, բնությունն ու հասարակությունն անտարբեր են այդ գանգատների ու հարձակումների դեմ: Եվ ահա տաղանդավորը բարձրանում էր օրեցօր դեպի իր փառքի գագաթնակետը, մինչ անտաղանդը տանջվում էր անփառունակ: Առաջինին հոբելյան տվին, համազգային պարծանք կոչեցին:

Անցավ ժամանակ, և տաղանդավորը մեռավ: Համազգային սուգը, որով արձագանքեց հասարակությունը այդ թանկագին կորուստի համար՝ ծանր ու չափազանց ուռեցրած թվաց անտաղանդին:

Սակայն մի գաղտնի ուրախություն սողաց նրա սիրտը: Ա՛, տաղանդավորը գնաց, և ասպարեզը մնաց... Երևի՛, արդեն... անտաղանդին: Կարծես եկավ ժամանակը, որ հիմա էլ սա ճաշակի փառքի երջանկությունը: Եվ այդպես էլ պիտի լիներ անշուշտ: Չէ՞ որ ասպարեզն էլ թափուր է:

Բայց օրեր անցան, մեջ ընկավ անտաղանդը, ջանք թափեց և սպասեց հետևանքի:

Ոչ մի հետևանք: Հասարակությունն անտարբեր էր, ինչպես և առաջ:

Տաղանդավորն էլ մեռավ, բայց անտաղանդը երջանկություն ձեռք չբերեց: Անտաղանդությունն՝ ինչպես մշուշ՝ եկավ ավելի թանձր պաշարեց անտաղանդ վերապրողին:

Տխուր, անմխիթար օրերը շարունակեցին անցնել անպտուղ, անհետևանք, անփառունակ...

ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

(Էջ 203)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, № 6, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀԱՃՄԱՆԴԱՄԸ

Տրամվայի վագոնը քանի գնաց այնքան լցվեց բազմությամբ, որ սկսեցին իրար սեղմելով ճիգեր անել մի կերպ տեղավորվելու: Պետք է խոստովանեմ, այնքան նեղվածք էր, որ մեծ փափկանկատությունների ոչ մի հնար չկար: Չգիտեմ ինչպես, որտեղ, բայց կանգնեցի մի կերպ:

Բազմությունը չէր կարողանում տեղավորվել, մարդիկ հրմշտկվում, մեղադրում իրար, վիճում և անդադար ալեկոծվում էին ետ-առաջ, ետ, այս կողքի, այն կողքի:

Ուշադրությունս գրավեց կողքիս երկու հենակները թևերի տակ մի երիտասարդ հաշմանդամ կիսագինվորական զգեստով: Չեռքին մի ինչ-որ մեքենայի մաս ուներ, ըստ երևույթին իր արհեստի գործը, որ ձեռքի երկաթի մատներում պինդ սեղմել՝ երբեմն նայում, սրբում, շոյում էր:

Բազմությունը չէր հանգստանում և շարունակելով իր ավելոծումը, տանում, բերում, տրորում էր նաև ամենից շատ... հաշմանդամին: Բայց նա չէր բողոքում: Միայն հոգածու դեմքով, հանգիստ կարգադրում էր. «Դուք այստեղ նստեք, բեռը դրեք իմ կողքին, ընկեր, տեղ տվեք մորը, երեխան ինձ տուր...»:

— Ընկեր, դո՛ւք նստեք, դո՛ւք ախր, դուք, որ իսկի՛ էլ չպետք է կանգնեք,— ասաց կողքին կանգնած մի կին:

Հենց ահա այդ էր, որ նա չէր նկատում: Չլսեց, շարունակեց ուրիշներին տեղ զիջել, տեղավորել, հանգստացնել:

Որտեղի՞ց էր բերել նա այս... Հոգածությունը, ուրիշներին պաշտպանել, իրեն մերժել, ուրիշներին զիջելը, գոհելը: Որտեղի՞ց էր, ուզում եմ ասել, այս գեղեցիկ սովորույթը, իրեն համար աննկատելի, բնական դառած գիծը: Հասկանալի էր. և այսպիսի՞ բաներ էր զիջել նա «այնտեղ»... Իհարկե այնտեղից էր այս: Նայեցի նրա հոգածու, մի փոքր թախծոտ դեմքին և խոստովանում եմ՝ հարգեցի նրան և խորին ակնածանք զգացի դեպի նա:

ՀԱՅՏԱՆԴԱՄԸ

(Էջ 226)

Առաջին անդամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ N 409 պահվում է մեկ մեքենագիր օրինակ, հեղինակի մասնակի ուղղումներով: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից: Հաշվի են առնված հեղինակի ուղղումները:

Արտատպված է՝ Գերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՁԻՆ

Ձիերը կանգնել՝ չէին գնում: Բաց ֆուրգոնը բեռնավորված էր քարով. պետք էր շենքի բակից անցնել և տանել ներսի բակը: Բայց ձիերը չէին շարժվում: Գուցե հոգնած էին, գուցե ֆուրգոնի ականները քարերի կոշտերի դեմ առել՝ խանգարում էին ֆուրգոնը շարժել:

Սակայն բեռը ծանր չէր, և թվում էր, որ ձիերը կարող էին քաշել ֆուրգոնը: Ֆուրգոնապանը մտրակը պտտեցրեց օդի մեջ, ձիերը մի շարժում արին, բայց հանկարծ շինության վրա աշխատող մշակներն օգնելու համար վրա վազեցին և սկսեցին ձեռքերով ծեծել ձիերից մեկին: Սա կանգնեց: Մշակները փայտերը վերցրին, որ խփեն:

— Մի՛ ծեծեք,— խիստ ձայնով արգելեց նրանց ֆուրգոնապանը և ձեռքը բարձրացնելով պաշտպանեց ձիերին:

— Բա ո՞նց, չեն գնում,— բացատրեցին մշակները:

— Ոչինչ, հանգիստ թողեք:

Մշակները ետ քաշվեցին և զարմացած նայեցին անփույթ ֆուրգոնապանին: Սա ետ քաշվեց և ծխախոտ վառեց, ու ծխելով մեղմ նայեց ձիերից մեկի կողմը, որին զարկել էին մշակները: Անցավ մի երկու րոպե: Ֆուրգոնապանը քթի տակ ժպտաց, մոտեցավ ծեծված ձիուն և ականջին շատ փաղաքշոտ ու մտերմական ձայնով մեղմ ասաց.

Hy, Ba-аська, пое-едем!

Ձին շարժվեց: Մյուսն անմիջապես հետևեց նրան: Գնացին:

Ձին նեղացել էր...

ՁԻՆ

(Էջ 213)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 1, այնուհետև ԵԺ, հ. I, 1945, ԵԺ 1950, ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ № 411 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԱՀԸ ԻՆՔԸ

Ե՛վ բժիշկն է հայտնել և՛ ամեն ինչ պարզ է, վերջացել է, պատրաստ է—հիվանդը պիտի մեռնի: Հաշտված են ամենքը **բոլորովին**:

Բայց բոլորովին այլ բան զգացվեց և խորը ազդեց, երբ հիվանդը մեռավ:

Մեկ ուրիշը ասելի, անտանելի մարդ էր, և ամենքն ուզում էին, որ մեռնի:

Հիվանդացավ. անբույժ էր. վճռված էր, որ կմեռնի: Եվ մեռավ: Բայց ի՞նչ, ոչ ոք ուրախ չէր: Մի ծանր լռություն տիրեց նրա սենյակում, որ ժայռի պես ճնշում էր:

Ի՞նչ սենտիմենտալություն, ի՞նչ պատիվ նրա հանդեպ — կասի որևէ մեկը մեզանից:

Ո՛չ, դա մարդկայնությունն է, այդ պատիվը մարդու մարդկայնության «պաշտոնին» է տրվում, որ ամեն մարդու պոտենցիալում կա: Դա նրա մարդկային իրավունքն է: Հակառակ իրեն՝ մարդը ունի այդ իրավունքը:

Մարդո՛ւ իրավունքը: Նա մարդ է...

ՄԱՀԸ ԻՆՔԸ

(Էջ 237)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԱՅՐԸ

Անցնում էի գետափով: Մարգագետնի վրա մի քանի կով ու եզներ էին արածում: Դալար խոտը ցողաթուրմ էր ու առատ: Եվ անասունները մեծ ախորժակով ծամում էին երկրի հյութերով լի խոտը: Նրանք ցրված էին և գլուխները կախ:

Նրանցից երկուսը միայն կանգնած էին մեկուսի: Միևը երբեմն դունչը քսում էր դալարին, թեթև պոկում ու ծամում: Իսկ մյուսը լիզում էր նրան: Լիզում էր գավակը, մեջքը, դունչը: Ապա դադարում էր, նայում նրան, կրկին լիզում:

Մյուսը կարծես չէր նկատում այդ:

Մի փոքր ուշով նայեցի նրանց երկուսին:— Դե, իհարկե մայր ու զավակ էին...

Եվ նոր նկատեցի— զավակն ավելի քնքուշ մորթ ուներ և ավելի միամիտ, անփորձ աչքեր... Հասել էր, մեծացել, մարմնով համարյա հավասարվել մորը: Եվ արդեն վերջին օրերն էին՝ շուտով նա կգնար իր սայլին, լծին ու ճիպոտին: Իր անուրախ կյանքը: Այլևս կարիք չկար նրան խնամելու, հսկելու, անգամ լիզելու: Բայց... մայրական սիրտ է, ասում է չլինի՝ թե մի բանի կարիք է զգում, չլինի՝ թե... Մի խոսքով՝ չի համբերում, կրկին, մի փոքր, էլի՝ գուրգուրում է, շտկում մազերը, լիզում...

Քիչ է մնում լացո գա խանդաղատանքից...

ՄԱՅՐԸ

(Էջ 199)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, N 6, այնուհետև ԵԺ հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ 416 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԱՐԴԱՌԹՅԱՆ ՄԱՅՐԸ

Թուրք կանանց ակումբն այն լույս աշխարհին է, ուր դուրս է գալիս թուրք կինը մուկ աշխարհի զնդաններից: Ահա ընդունարանի նստարաններին շարվել են նորեկները: Հերթի են սպասում, և հերթը հասարակ բանի համար չէ: Ազատագրման, նոր կյանքի հերթի են կանգնած նրանք: Եվ իրոք՝ թե՛ այստեղ, թե՛, ինչպես հետո կտեսնենք, մանածագործարանում և թե՛ տաղանդավոր Ջաբարլիի «Սևիլ»¹ ֆիլմում բացահայտորեն շեշտված ենք տեսնում մի իմաստուն միտք—թուրք կնոջ ազատության հետևյալ իսկ օրն ապահովել նրա նյութական անկախությունը —աշխատանք տալ նրան: Ակումբը կանանց տալիս է այդ աշխատանքը: Շենքի ներքին հարկերում կար ու ձևի արհեստանոցներն են: Ամփոփապես իջնում ենք ներքև: Ահա նրանք նստած են կարի մեքենաների հետև: Միաժամանակ կարող մի չորս-հինգ տասնյակ մեքենաների դողդոցը սիմվոլիկ կերպով հայտնում է հնազանդ ու լուռ թուրք կնոջ ազատագրության կոչը: Որքա՞ն տրագեդիա ունի՝ թողած նա տանը՝ երբ դուրս է վազել այնտեղից հրապարակ, պատռել չադրան և գրվել նոր կյանքի ցուցակում: Եվ ահա, երբ վայրկյաններ են լինում տարակուսանքի և վախի՝ իրեն սպասող ո՞վ գիտե ինչ թաքուն բռնությունների, ծեծի, անգամ դաշույնի իր «նախկին տիրոջ» կողմից՝ այս դողդույնը, մեքենաների միահամուռ «ուռուռ» սիրտ են տալիս նրան.

— Բարձր խոսիր, առա՛ջ գնա, մի՛ վախի, մենք քեզ հետ ենք միասին:

— Սա թո՞ւրք է,— ցույց տալով մի կնոջ հարցնում է ինձ մեզ հետ եկած պրուլետ գրող երիտասարդ Նարինան Ֆախրին²:

— Այո՛, ապա ի՞նչ,— ասում եմ և մտածում՝ երբ պիտի վերջանա այս հարցն ու զարմանքը:

Նոր թուրք կնոջ պատկերը— կապույտ սպեցիագուստը, կարմիր գլխանոց, երբեմն՝ փուշի թաշկինակը վզին կամ գլխին: Դեմքը համեստ է ընդհանրապես, հանգիստ, տամուկ աչքերը նայում են մտերմորեն և վստահ: Կազմվածքի և դեմքի վրա հետքերը դարավոր ստրկացման— շարժումները դեռ անվարժ, քայլվածքն՝ անհարթ: Խոսում են բարեկամաբար: Կան և լեզվանիկներ, նաև ռուսերեն իմացողներ:

Արհեստանոցում ձևում են, կարում, նախշում մեծ արվեստով, ամեն տեսակ բան՝ կանանց, երեխաների սպիտակեղեն, կոֆտաներ, ժանեկավոր, պարանոցի մասեր, մասեր, թաշկինակներ, բլուզներ՝ հասարակ և շքեղ: Ամեն ժամ հինգ թուրք դադար:

Դասարան, բեմ, զինանկյուն, ընթերցարան: Ահա և գեղարվեստի այլ բաժին— գորգեր մանր ու խոշոր, թաշկինակներ, աթոռներ, խաղալիքներ, զամբյուղ, լուսամուկի, սափոր, ինչ որ կուզես: Դպրոցական կաբինետը— պատկերներ, համրիչներ, կուբիկներ...

— Հայաստանում էլ սարքենք էսպես բաներ,— ասում է Ֆախրին:

— Կլինի, ամեն բան կլինի:

Վերջին անգամ դիտում ենք ընդունարանում շարված նանգ, որոնցից ոմանք իրենց ծծկերներով նստած սպասում են իրենց տնտեսական և հոգեկան ազատագրման, որոնց սպասում և դիմավորում է ակումբի ժպտացող, հոգատար և ջերմ վարչությունը:

Հեռանում ենք ակումբից, որ կատարում է Արևելքի ամենանշանակալից, պատմական գործը— ազատագրում է մարդկության մորը, քրոջը և ընկերուհուն:

ՄԱՐԴԱՌԹՅԱՆ ՄԱՅՐԸ

(Էջ 104)

Առաջին անգամ տպագրվել է Կ, 1929, № 146: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Ջաֆար Ջաբարի (1899—1934)— ադրբեջանցի գրող, բանաստեղծ և դրամատուրգ: «Սևիլ» պիեսը գրել է 1928 թ., ապա դրա հիման վրա նկարահանվել է նույնանուն ֆիլմը:

2 Նարիման Ֆախրի— ադրբեջանցի գրող: Հայաստանի պրոլետգրողների ասոցիացիայի ադրբեջանական սեկցիայի անդամ: Ֆախրին Բաքու է մեկնել Հայաստանի գրողների պատվիրակության կազմում (տե՛ս «Ճանապարհին» ակնարկի ծանոթագրությունը):

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԱՐԴԱՌԹՅԱՆ ՄԱՅՐԸ

Թուրք կանանց ակումբն այն լույս աշխարհին է, ուր դուրս է գալիս թուրք կինը մութ աշխարհի գնդաններից: Ահա ընդունարանի նստարաններին շարվել են նորեկները: Հերթի են սպասում, և հերթը հասարակ բանի համար չէ: Ազատագրման, նոր կյանքի հերթի են կանգնած նրանք: Եվ իրոք՝ թե՛ այստեղ, թե՛, ինչպես հետո կտեսնենք, մանածագործարանում և թե՛ տաղանդավոր Ջաբարիի «Սևիլ»¹ ֆիլմում բացահայտորեն շեշտված ենք տեսնում մի իմաստուն միտք—թուրք կնոջ ազատության հետևյալ իսկ օրն ապահովել նրա նյութական անկախությունը —աշխատանք տալ նրան: Ակումբը կանանց տալիս է այդ աշխատանքը: Շենքի ներքին հարկերում կար ու ձևի արհեստանոցներն են: Ամիջապես իջնում ենք ներքև: Ահա նրանք նստած են կարի մեքենաների հետև: Միաժամանակ կարող մի չորս-հինգ տասնյակ մեքենաների դրդոցը սիմվոլիկ կերպով հայտնում է հնազանդ ու լուռ թուրք կնոջ ազատագրության կոչը: Որքա՛ն տրագեդիա ունի՝ թողած նա տանը՝ երբ դուրս է վազել այնտեղից հրապարակ, պատռել չադրան և գրվել նոր կյանքի ցուցակում: Եվ ահա, երբ վայրկյաններ են լինում տարակուսանքի և վախի՝ իրեն սպասող ո՞վ գիտե ինչ թաքուն բռնությունների, ծեծի, անգամ դաշույնի իր «նախկին տիրոջ» կողմից՝ այս դրդոյունը, մեքենաների միահամուռ «ուռռան» սիրտ են տալիս նրան:

— Բարձր խոսիր, առա՛ջ գնա, մի՛ վախի, մենք քեզ հետ ենք միասին:

— Սա թո՛ւրք է,— ցույց տալով մի կնոջ հարցնում է ինձ մեզ հետ եկած պրոլետ գրող երիտասարդ Նարիման Ֆախրին²:

— Այո՛, ապա ի՞նչ,— ասում եմ և մտածում՝ երբ պիտի վերջանա այս հարցն ու զարմանքը:

Նոր թուրք կնոջ պատկերը— կապույտ սպեցհագուստը, կարմիր գլխանոց, երբեմն՝ փուշի թաշկինակը վզին կամ գլխին: Դեմքը համեստ է ընդհանրապես, հանգիստ, տամուկ աչքերը նայում են մտերմորեն և վստահ: Կազմվածքի և դեմքի վրա հետքերը դարավոր ստրկացման— շարժումները դեռ անվարժ, քայլվածքն՝ անհարթ: Խոսում են բարեկամաբար: Կան և լեզվանիկներ, նաև ռուսերեն իմացողներ:

Արհեստանոցում ձևում են, կարում, նախշում մեծ արվեստով, ամեն տեսակ բան՝ կանանց, երեխաների սպիտակեղեն, կոֆտաներ, ժանեկավոր, պարանոցի մասեր, մասեր, թաշկինակներ, բլուզներ՝ հասարակ և շքեղ: Ամեն ժամ հինգ թոպե դադար:

Դասարան, բեմ, գինանկյուն, ընթերցարան: Ահա և գեղարվեստի այլ բաժին— գորգեր մանր ու խոշոր, թաշկինակներ, աթոռներ, խաղալիքներ, զամբյուղ, լուսամուկոփ, սափոր, ինչ որ կուզես: Դպրոցական կաբինետը— պատկերներ, համրիչներ, կուբիկներ...

— Հայաստանում էլ սարքենք էսպես բաներ,— ասում է Ֆախրին:

— Կլինի, ամեն բան կլինի:

Վերջին անգամ դիտում ենք ընդունարանում շարված նանգ, որոնցից ոմանք իրենց ծծկերներով նստած սպասում են իրենց տնտեսական և հոգեկան ազատագրման, որոնց սպասում և դիմավորում է ակումբի ժպտացող, հոգատար և ջերմ վարչությունը:

Հեռանում ենք ակումբից, որ կատարում է Արևելքի ամենանշանակալից, պատմական գործը— ազատագրում է մարդկության մորը, քրոջը և ընկերուհուն:

ՄԱՐԴԱՌԹՅԱՆ ՄԱՅՐԸ

(Էջ 104)

Առաջին անգամ տպագրվել է Կ, 1929, № 146: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Զաֆար Զաբարի (1899—1934)— ադրբեջանցի գրող, բանաստեղծ և դրամատուրգ: «Սևիլ» պիեսը գրել է 1928 թ., ապա դրա հիման վրա նկարահանվել է նույնանուն ֆիլմը:

2 Նարինան Ֆախրի— ադրբեջանցի գրող: Հայաստանի պրոլետգրողների ասոցիացիայի ադրբեջանական սեկցիայի անդամ: Ֆախրին Բաքու է մեկնել Հայաստանի գրողների պատվիրակության կազմում (տե՛ս «Ճանապարհին» ակնարկի ծանոթագրությունը):

աԱրտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԵԾ ՍԻՐՏԸ

Հռչակավոր գյուտարարներ չէին Մոսկվայում ապրող Գավրիլին ամուսինները: Մարդը՝ գիտությունների դոկտոր չէր. նա սովորական հաշվապահ էր գործարանում: Իսկ կինը՝ տան տնտեսուհի: Մի վաղամեռ զավակ էին միայն ունեցել: Այրել էին անզավակ և ծերացել: Կյանքը չորացել էր աշնան դաշտի պես և սկսեց փչել սառնաշունչ հյուսիսը: Ի՞նչ էր սպասում ավելի հետո: Խորին ծերություն, մռայլ տխրություն և մահ:

Հնար չկար առաջն առնելու: Ծերության, մահի դեմ ի՞նչ հնար: Թերևս մի գերահանճար գիտնական անի նաև այդ անհնարին գյուտը...

Բայց ամուսիններն այդ գյուտն արին: Հենց ուղղակի ծերության և մահի դեմ: Եվ ի՞նչ եք կարծում՝ վիտամիններ, հանքային ջրեր— կումի՞ս...

Ո՛չ այս և ո՛չ այն:

Նրանք որդեգրեցին պատերազմի զոհերի որբ երեխաներ: Առաջ եկավ մեկը: Սա եղավ զարնան ավետաբեր ձնծաղիկը: Դրան հետևեց մանուշակը և մյուս ծաղիկները: Եկան իրար հետևից վեց երեխաներ և տունը լցրին այնպիսի մի զարնան բուրմունքով ու ջերմությամբ, որի դեմ ոչ մի ծերություն և մահ չէին համարձակվում գրոհել:

Մռայլ սենյակները լցվեցին թռչունների ճռվողյունով: Ե՛րգ, խա՛ղ, ծիծա՛ղ... Մեկը նկարում է, մյուսը նվագում, երրորդը տիկնիկ է խաղում, չորրորդը նստում է պապիկի ծնկան, մյուսները տատիկի ծնկներին, զրուցում, քրքում, կատակում... Ահա շարվել են սեղանի շուրջը՝ գեղեցիկ, ուշիմ, առողջ: Հրաշալի երեխաներ: Եվ ի՞նչ ուրախություն, ա՛յդ ասա:

Եվ հիմա ծերության ժամանակ էլ չկա: Եվ ո՞ր է նա: Հազիվ մարդ ու կին հասնում են մանկության գործերին. ա՛յս մանկապարտեզ է, ա՛յս դպրոց է, ա՛յս ծնողական ժողով է: Ծերության մի րոպե իսկ ժամանակ չկա...

Մա՛հը, ո՞ր է նա: Թող և նա՛ գա: Նրա համար է՛լ ժամանակ չի լինի:

Ամուսինները, որ կորցրել էին իրենց երիտասարդությունը, ինչպես երևաց մի բան չէին կորցրել և դա փրկեց նրանց: Եվ ի՞նչ էր դա, որ դառավ գյուտ ծերության և մահի դեմ: Հանճարեղ ինտուի՛ցիա և երջանիկ վայրկյա՛ն:

Ինչո՞ւ չէ: Այո, հանճարեղ ինտուիցիա, և երջանիկ վայրկյան, եթե կարելի է այդպես կոչել **մեծ սիրտը**:

ՄԵԾ ՍԻՐՏԸ

(Էջ 241)

Առաջին անգամ տպագրվել է «Անի», Բեյրութ, 1946, N 7, այնուհետև ԵԺ, հ. 1, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ամբողջ աշխարհը նրանց է նայում, իսկ նրանք չեն նայում ոչ ոքի:

Նրանք հասարակ են, պարզ, մարդկային: Նրանք փոխում են ամբողջ աշխարհը, նրանք գործեր են կատարում, որոնց դիմաց զարմացած ու հիացած է ամբողջ աշխարհը: Սակայն նրանք չեն էլ տեսնում այդ, չգիտեն:

Միայն երբեմն ծիծաղում են նրանք՝ երեխաների պես...

Իսկական սասունցի դավիթներ...

ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

(Էջ 245)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 9—10, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Մեքենաների դորդոց է լսվում ինչ-որ տեղից: Հանգստանում եմ. սիրտս լցվում է քաղցր ուրախությամբ և ջերմությամբ: Աշխատում են այնտեղ. աշխատանքի ձայներ են դրանք: Ինձ սիրտ են տալիս դրանք, լավ է կյանքը, **կյանքն ապրում** է այնտեղ:

Եվ վերցնում եմ գրիչս:

ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

(Էջ 232)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 420 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԱՂՋԻԿ

Մի գեղեցիկ աղջիկ պիտի մեռնի այս առավոտ: Բժիշկները ոչ մի հույս չեն տալիս:

Բայց ինչպե՞ս պիտի լինի դա...—

Ախր արդեն գարունն եկել է: Ախր ծառերը ծաղկել են, անգլիներն անգլիներն փթթել են: Լեռները մանուշակագույն փայլում են հեռվում:

Այսքան էլ սև՝ առավոտ...

ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ԱՂՋԻԿ

(Էջ 235)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 417 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԻ ՄԱՅՐ ՈՐԴԵՆՈՐՈՒՅՍ

Մի մայր կար որդեկորույս: Մենք, երեխաներ անգետ ու անցավ՝ միշտ պատահում էինք նրան: Այդ մոր զավակը խելագար էր: Երբեմն հիվանդությունը ծանրանում էր, և նա օրերով կորչում էր սրա-նրա տանը, փողոցներում, դաշտերում: Գնում տուն էին բերում:

Հարազատները, որոնց խնդրում էր մայրը՝ տուն բերել իր զավակին՝ նեղվում էին, անհիծում խելագարին, տրտնջում էին, որ նրա պատճառով հարկ էր լինում զիջել մոր պահանջներին, աղաչանքներին, գնալ բերել, պահել նրան, սնել վերջապես:

Տանջվում էր պառավը, չգիտեր ինչ անել:

Մի անգամ էլ ձմռան բուքի օրերին խելագարը գնաց դաշտերն ու անհետ կորավ: Անշուշտ սառեց կամ գայլերին զոհ գնաց:

Երբ մորը հայտնեցին նրա մահը, սաստիկ վշտից մայրն սկսեց... պարել, երգել...

Չարմացանք, անգամ զվարճացանք:

Եվ այնուհետև պատահում էր, որ մայրը այստեղ-այնտեղ նստում, խոսում էր իր կորած զավակի մասին: Մենք, երեխաներս մոտ էինք գնում, որ նայենք: Նա լաց էր լինում, ծնկները ծեծում, հառաչում: Եվ ծալապատիկ նստած տեղը այս-այն կողմ էր շրջվում և թիթմիկ վշվշում:

— Վո՛ւշ Կարապետս, վուշ Կարապետս:

Ուղղակի պարում էր:

Նայում էինք երեխաներս, ծիծաղում, ու հեռանալով կրկնում էինք նրա պարային շարժումներն ու խոսքերը՝ «վուշ Կարապետս», «վուշ Կարապետս»:

Չվարճանում էինք անվերջ:

Անցել են շատ, սարսափելի՝ շատ տարիներ, և ես գրող եմ դառել, բայց հիմա չեմ կարող նկարագրել այն զգացումը, այն ծանր թախիծը, որով լցվում եմ, երբ հիշում եմ որդեկորույս մորը: Միայն այդ խոր ցավը, որ մտել է սիրտս իբրև պատիժ՝ կարողանում է մի փոքր մեղմել իմ մանկական հանցանքը՝ ծիծաղը այն տարաբախտ մոր վշտի վրա:

Եվ ո՛րքան կյանքումս բարձրացրել է ինձ այդ վիշտը, ազնվացրել, կրթել...

ՄԻ ՄԱՅՐ ՈՐԴԵԿՈՐՈՒՅՍ

(Էջ 235)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ № 419 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԻ ՇԱՏ ՊԱՐԶ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի սկզբից (որ նա չի ունեցել) մինչև նրա վախճանը (որ չի լինելու)՝ ոչ մի հրաշք չի պատահել: Ամեն ինչ, որ պատահել է՝ եղել է, լինում է և կլինի օրինաչափ ու բնական:

Սակայն ամենից զվարճալին այն է, որ անգամ հրաշքը, որ պատկերացրել է այնքան դարերում մարդկությունը— այդ հրաշքը ինքը ևս չունի ոչ մի հակաբնական, գերբնական ոչինչ: Նրան ստեղծող միտքը բխեցրել է բնականից, բնականին նման, «ի պատկերի բնականին»¹:

Բնականից դուրս ոչինչ չկա:

ՄԻ ՇԱՏ ՊԱՐԶ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

(Էջ 232)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 420 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

1 «Ի պատկերի բնական» — ձևափոխված օգտագործում է Աստվածաշնչի տերմինը, ըստ որի աստված մարդուն ստեղծեց իր նման՝ «Ի պատկերի իւրում»:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԻ ԲՈՊԵ

Մեկ-մեկ թվում է թե կյանքդ հեղեղի պես արագ սլանում է, շռայլվում է իզո՛ւր, անմտորե՛ն, հիմարաբա՛ր...

Կծկվում ես, ուզում ես բռնել, պահել, որ չշռայլվի՛, չհատնի...

ՄԻ ԲՈՊԵ

(Էջ 232)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Հենակն աջ թևի տակ, փայտե պրոտեզը ձախ ոտին և մուրացկանի պրոֆեսիոնալ աղաչական ժպիտը շրթունքներին անցնում էր նա ամառանոցի փողոցով:

Երբեմն կանգ էր առնում, ճակատի քրտինքը սրբում և դեմից եկող ամառանոցավոր մեկին ձեռքը մեկնում՝ ողորմություն հայցելով:

Ստանալով կամ մերժվելով՝ նա շրթունքների արանքում քանի բառ էր ծամծմում դառը մաստակի նման և մռմռում ու լնգլնգալով անցնում առաջ:

Ուշի ուշով նայեցի նրան և հանկարծ հիշեցի: Ծանոթ մուրացկան էր: Հաճախ տեսել էի նրան քաղաքում ողորմություն հայցելիս: Նույն աղաչական կոտրված ժպիտը, նույն լնգլնգոցը, նույն անորոշ քրթմնջոցը, դառնացած շրթունքներին:

Մոտեցավ ինձ և ձեռք մեկնել էր ուզում, որ խոսեցի հետը.

— Դու քաղաքի՞ց ես եկել:

— Հա՛:

— Հիմա էլ այս գյուղո՞ւմ պիտի ապրես:

Մուրացկանը տխուր ծիծաղեց.

— Չէ, ջանքւմ, ի՞նչ էստեղ ապրել: Զաղքցի մուշտարիներիս հետ եկել եմ ամառանոց: Էսոնք կերթան քաղաք, ես էլ հետները կերթամ:

— Հիմա հասկացա,— ասացի ես:

— Ապա ի՞նչ,— տխուր խոսեց մուրացկանը:— Իմ մարդիկս են, ուր էսոնք՝ Էստեղ էլ ես: Իմ էլ կյանքս էս է:

Նայում ենք իրար: Ես նայում եմ նրան՝ նոր սկսվող ծիծաղս արդեն սառած աչքերիս մեջ: Նա էլ՝ անկարող ծիծաղելու և ի՞նչ էր վիճակը, որ ծիծաղեր, նայում էր աչքերիս տխուր, խորը մարդկային վշտով...

ՄՈՒՐԱՑԻԿԸ

(207)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. 1, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 421 – պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄՏՔԵՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մարդ այն ժամանակ է ապրում կյանքը, երբ չգիտի իր մահվան օրը, երբ չունի այնպիսի հիվանդություն, որից մեռնելու ժամանակը կամ գոնե հիվանդության մահացու լինելը հայտնի է իրեն:

Հենց որ իմացավ, նա արդեն մեռնող մարդ է, մեռնում է արդեն, դա՛ է արդեն մահը, դա մահ է:

Կյանքը պարադոքս է: Մենք միայն ապրում ենք և միայն մեռնում: Մեկն ու մեկը դրանցից:

Մահի ժամանակ հո չենք իմանա կյանքը: Դա պարզ է: Բայց կյանքի ժամանակ էլ երբե՛ք չենք իմանում մահը:

ՄՏՔԵՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(Էջ 234)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՆԱԽԻՐԸ

Բուքը խելագարվել, մոլեգնորեն զգգգում էր անծայրածիր տափաստանը: Հովիվները շղթա կապած հուսահատ կռվում էին բուքի դեմ, կատաղի ճիգեր էին թափում ահաբեկված նախիրը քշելու, փախցնելու դեպի արևելք:

Ժողովրդական մի հեծ գանգված նահանջի մեջ էր:

Հարկավոր էր իրենց գցել որևէ ապաստան, փրկել նախիրը, այլապես նա կթափվեր գետին, կմնար ձյան վրա:

Շատ վաղուց բուքի համատարած վարագույրի մեկ երկու բուպե բացված ճեղքից երևացել էր հեռավոր մի գյուղ:

Այնտեղ էին շտապում հասնել հովիվները, և կովերը կփրկվեին, եթե գյուղը հեռու չլիներ: Հովիվներն իրենք էլ շշմել, վայրենացել էին անքնությունից, հոգնածությունից:

Հույսները կտրվում էր: Եվ իրոք էլ բան դուրս չեկավ, անասունները վերջնականապես ուժասպառվեցին և սկսեցին մեկ-մեկ չոքել և տփկած մնալ՝ մերկ ստինքները խրելով սառը ձյան մեջ:

Ահա այստեղ էր, որ հովիվները խելքները կորցրին, կորցրին ամեն հասկացողություն: Ի՞նչ, կովերը սառը ձյան վրա թափվա՞ծ...

Դա արհավիրք էր արդեն: Խելքից մտքից վեր բան: Դա ամենամեծ սարսափն է գյուղացու համար, որ միայն գյուղացին կհասկանա: Կաթի, անասունի շահից զրկվելու վտա՞նգը: Ամենևին ոչ: Այդտեղ ուրիշ բան կար: Արդյոք ինչ-որ մնացո՞ւկ նախնական մարդուց: Դա մի փոքր նման է այն զգացումին, որ լուռ դաշտով գնալիս տիրում է մարդու: Հանկարծահաս երկրաշարժ, և ահա լսում ես երկրի անդունդներից հասնող մի օտարոտի որոտ-մռնչուն: Մի տեսակ «երկրագնդի ձայնը»: Կամ երբ հանկարծ տեսնում ես լեռան ահագին լանջը գահավեժ իջնում է խոր ձորը:

Հովիվներից մի քանիսը սարսափահար վազեցին դեպի գյուղը, լուր հասցրին: Եվ ահա ուրիշ տեսարան բացվեց: Իրար ձայն տվին այնտեղի գյուղացիները և սահնակներով հասան աղետի վայրը: Նրանք ևս սարսափահար եղան, հեռվից տեսնելով գետնամած նախիրը: Եվ կատարվեց մի իսկական

մեծագործություն: Խորին ակնածանքով, խնամքով, գուրգուրելով՝ թոկերը գցեցին կովերի փորների տակ, բարձրացրին սահնակների վրա և տարան իրենց տաք գոմերը:

Փրկվեցին այնքան սիրելի կովերը: Ի՞նչ հաճույք և հանգստություն:

Բայց արժի խորհել այն սարսափի մասին:

ՆԱԽԻՐԸ

(Էջ 248)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Երկու երեխա՝ քույր և եղբայր կռվում էին տան առջև, մայրի վրա դեմ դիմաց նստած:

— Դու լավ կանես՝ ձայնդ կտրես:

— Լավը դո՛ւ կանես. դո՛ւ ձայնդ կտրի, ապա ի՞նչ ճաշեր են, որ պատրաստում ես:

— Ես ի՞նչ մեղավոր եմ: Տվածդ ի՞նչ փող է, որ կարգին մթերք բերեմ, կերակուր եփեմ:

— Դու որ անշնորհք ես՝ մթերքն ի՞նչ մեղավոր է, անխելք:

— Անխելքը դո՛ւ ես:

Մի փոքր լռում են: Ապա կրկին մի այլ վեճ, այլ վիրավորական խոսքեր:

Տարօրինակ գործի վրա են կարծես: Բայց հասկանալի է. իրենց տան դեպքերն են խաղում, իրենց կռվարար ծնողների: Ու պահանջում են՝ ա՛յս գնիր, ա՛յն կարիր, ա՛յս ձեռք բեր, ա՛յս պատրաստիր: Ու իրար հայիոյում են: Հետո տղան վրա է վազում որ... «կնոջը» ծեծի:

Ծնողներ, զգո՛ւյշ երեխաներից՝ նրանք ձեզ են խաղում:

Վե՛հ գործեր կատարեցեք:

Խոսեցեք Հայրենիքի՛ մասին:

Հերոսական, սխրագործական դեպքերի՛ մասին:

Ասպետներ եղեք, գեղեցիկ եղեք:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

(Էջ 233)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 424 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՆՎԻՐԱԿԱՄ ԱՆՈՒՆ

Մա՛յր... ո՛րքան նվիրական անուն: Բնության պես խորիմաստ, ամենակարող:

Եվ կարծում եք միայն երեխա՞ն է, որ նեղն ընկած ժամանակ «մայրիկ» է կանչում:

Որքա՛ն պատահած կլինի վտանգավոր, ծանր հիվանդ պահին մտածել ես միամտորեն, որ մայրդ գար, նա կօգներ:

Շողիսովը մեկին պատմել է, որ Հայրենական պատերազմում մարտի ժամին իր կողքին կանգնած մի հայ մարտիկ ընկեր ծանր վիրավորվեց ու ընկավ և մեռնելիս հայերեն անձանոթ մի խոսք ասաց: Ու Շողիսովը միտն էր պահել այդ խոսքը և հետո հայերին հարցրել,— ի՞նչ է նշանակում «օ՛ֆ, մայրիկ»:
Արդյոք ձեզ չի՞ պատահել երազում, վտանգի պահին կանչել.

— Մայրի՛կ...

Դուք՝ մի՛ ծիծաղեք, ինձ պատահել է: Չարթնել եմ ու **ի՛նքս ծիծաղել վրաս**, բայց և լաց եմ եղել խանդաղատանքից:

ՆՎԻՐԱԿԱՆ ԱՆՈՒՆ

(Էջ 234)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 425 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

1 Ռուս գրող Միխայիլ Ալեքսանդրովիչ Շողիսովի (ծնվ. 1905 թ.) հետ պատահած դեպքը մեզ հայտնի չէ: Հնարավոր է, որ Դեմիրճյանը այդ իմացել է բանավոր աղբյուրից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՊԱՌԱՎԸ

Աշխույժ փողոցը լիքն է երեխաների կանչերով, տրամվայի զնգոցներով և անլռելի, անորոշ մարդկային խոսակցության սիմֆոնիայով:

Երիտասարդ արևը խաղում է երկնքի թավիշ մովի մեջ: Ճնճողուկները ծառերի վրայից հարձակվում են ինչ-որ չոր հացի կտորի վրա, իսկ փողոցի բացվածքից երևում են կապույտ լեռների ալիքները՝ ձյունեղեն փրփուրները գազաթներին:

Գարուն է:

Մի ուրախ պառավ նստել է դռան առջև քարին և գիրկն առել մի փոքրիկ երեխա: Թոռն է անշուշտ: Փոքրիկը ձեռները պարզում է , որ բռնի... ծառը, շենքերը, աշխարհը... Ու ժպտում է: Ժպտում է և պառավը: Նա երկու ձեռների մատները հագցրել իրար՝ պինդ բռնել է խայտացող երեխային: Չլինի թե ընկնի: Ու կպել է նրան: Ինձ թվում է նա էլ կառչել է երեխային... չլինի թե ինքը ընկնի անեության մեջ:

Ու փարված կյանքին ժպտում է նա...

ՊԱՌԱՎԸ

(Էջ 216)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 1, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ № 428 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՊԱՏՐԱՆՔ

Երագո՞ւմն է սա, թե՞ արթմնի:

Ի՞նչ առասպելական ֆիգուրներ են եկել շարվել գետնի այս մեծ պատռվածքի եզրին և ինչ-որ գոհերի սպասում:

Հսկայական ընձուղտի երկարաձիգ վզների վրա թռչնի երկարակտուց գլուխներ: Իսկ գետնի վրա քառակուսի ձևով ծանրացել, ճնշում են հողը չորս-չորս, կարճ ու հաստ ոտներ:

Իխտիոզավրներ՞ են, թե՞ նրանց կմախքները:

Երևի հազարավոր դարերը ետ են դառել, երկրի պատմությունը կրկնություններ է անում՝ տանելով մեզ դեպի այդ հրեշների դարերը:

Եվ նրանք եկել են ճարակելու, ոչնչացնելու մեր անտառներն ու դաշտերը, կործանելու քաղաքներն ու շենքերը:

Եվ ի՞նչ սարսափ. պետք է կրկին սկսենք անցնել վայրենի, բարբարոս դարաշրջաններ:

Իրոք՝ երագո՞ւմ ենք տեսնում սրանց, թե՞ արթմնի:

Ո՛չ երագ. ո՛չ առասպել:

Ո՛չ իխտիոզավրներ և ո՛չ նրանց բրածո կմախքները:

Դրանք կոմունիզմի քայլող էքսկավատորներն են:

Սա մեր հրաշալի իրականությունն է:

Եվ դարերը չեն շրջվել ետ դեպի մղձավանջային մի պատմություն, այլ ընդհակառակը՝ հսկայաքայլ առաջ են սլացել դեպի ապագան:

Սլացել են կոմունիզմի՞ն ընդառաջ:

Կոմունիզմն է սկսվում:

ՊԱՏՐԱՆՔ

(Էջ 250)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 429 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՊԱՐՏԻԶԱՆԻ ԳՆԴԱԿԸ

«Իմ գնդակն իմ սրտից է թռչում...»

Սրտից և ոչ հրացանից:

Դա պարտիզանի գնդակն է: Այդպես պարտիզանն ասաց: Դա այն մարդու խոսքն է, որ աչքով տեսել է երեխաների խողիտողումը, նրանց մայրերի բռնաբարումը, գյուղացիների խոշտանգումները, թշնամու դաժան բռնություններն ու բոլորենական ծիծաղը...

Այո՛, ոչ հրացանից, սրտից է թռչում պարտիզանի գնդակը դեպի թշնամին: Սիրտը, սիրով դեպի մարդը լցված սիրտը չորանում է, հրացան է դառնում, գնդակ է նետում հիմա...

ՊԱՐՏԻԶԱՆԻ ԳՆԴԱԿԸ

(Էջ 220)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, № 21, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ № 392 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՊԱՐՏԻԶԱՆԻ ԿՈՉԸ

Մի պարտիզանի էին կախում ֆաշիստները: Ողջ ավանի բնակչությանը հրացանի կոթերով հավաքել էին հրապարակը, որ տեսնեն, սարսափեն և հնազանդվեն ֆաշիզմին: Բնակիչները աչքները գետնին էին գցել, որ չտեսնեն հրապարակի մեջ ծառ կախված պարանը, որ օձի պես օղակվել, կախվել էր և որի տակին բերել կանգնեցրել էին պարտիզանին:

Պարտիզանը մռայլ և հպարտ նայում էր բազմությանը: Նա այնպես էր սպասում մահվան, ինչպես մարտական պարտքի կատարմանը: Նա ցավում էր, որ բռնվել էր, բայց և չէր վախենում մահից: Դա էլ գործ է, այդտեղ էլ պիտի օգտակար լինել: Եվ պարտիզանը գործի անցավ: Մինչ օղակը գցում էին նրա վիզը, որ հետո աթոռը դուրս քաշեն ոտերի տակից՝ նա հանկարծ կրակվեց, դեմքի ու վզի մկանները ուռեցին, դողացին, և նա հրացայտ աչքերը բազմությանը սևեռելով՝ ուժգին մռնչաց.

— Վրեժխնդի՛ր եղեք:

Հրապարակը ավելի լռեց: Սպառնալի այդ լռության մեջ զգացվեց, թե ինչպես բազմությունը կլանեց այդ խոսքերը:

Եվ հանկարծ այդ լռությունը պատռվեց, և նրա խորքից դուրս թռավ մի պատասխան գոչ.

— Կլինե՛նք վրեժխնդիր...

Փաշիստները իրար անցան: Նրանք հարձակվեցին դեպի ձայնը և չարագույժ սպառնալիքով գոռացին.

— Ո՛վ էր, ո՛վ էր...

Ձայնը լռել էր, ձայնողը կորել բազմության մեջ: Սկսեցին որոնել: Բայց ո՞րտեղ կգտնես դրան: Նա թաքնվեց ողջ Ուկրաինայի մեծ սրտի մեջ. գնա գտի՛ր նրան:

ՊԱՐՏԻԶԱՆԻ ԿՈՉԸ

(Էջ 218)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 430 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՊԼԱՆԱՏՆԵՐ

Երևի մի փոքր հետո նրանք՝ այդ հերոս բանակայիները կգնան կրակի գիծը: Սվինները ցից, հրացանները ձեռքերին, ծալած վերարկուները վզներին, «մարտական պատրաստության մեջ», «յոթը քարի արանքում» նրանք խռնվել են մի պատի առաջ. և իրար հրելով, իրար գլխի վրայով կռացել են պատի կողմը: Խիստ հետաքրքրված: Ի՞նչ կա այնտեղ:

Ոչինչ: Պլակատներ են:— Մի գլուխ, որ ճեղքվել է վերևից իջնող ռումբից: Մյուսը՝ մի հրացանի կոթ զարկում է թշնամու ծոծրակին:

Կարծես արմանք-զարմանք մի բան է. այնպես գրավվել են, այնպես վրա են ընկել՝ նայում՝ ինչպես երեխաներ:

Բայց ի՞նչն է այդպես դուր եկել նրանց, սաստիկ զվարճություն պատճառել: Նրանք ծիծաղում են, կարծես կենդանի, ճշգրիտ իրականության վրա: Չէ՞ որ դա պատկեր է, հիպերբոլա, գրոտեսկ:

Ո՛չ, դա ճշգրիտ է, ճշմարիտ է նրանց համար: Նրանք այդ բաները տեսնում են ամեն օր, իրենց գործում:

Ծանոթ, նրանց համար խիստ ծանոթ բանը պատի վրա, պատահաբար աչքովն ընկած—դա է ծիծաղեցրել և զվարճացրել նրանց:

ՊԼԱՆՍՏԵՐ

(Էջ 251)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, № 27: ԳԱԹ ԴՖ N 431 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԳԹ-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՍԵՂԱՆԸ

Ո՞վ գիտե ի՞նչ թոպեի կամ ի՞նչ տրամադրության մեջ գրասեղանին մոտեցած էր փոքրիկ Երեխան: Նրան սիրող հայրն ասել էր.

— Այ, ես որ մեռնեմ՝ իմ այս գրասեղանը քեզ կմնա:

Երեխան ուրախացած այնուհետև ուշի ուշով զննում էր հոր գրասեղանը և երագում, որ մի օր էլ ինքը կնստի նրա մոտ և կսկսի գրել, կարդալ, ծխել, աչքերը կիսախուսի նայել հեռուն, պատուհանից դուրս:

Եվ օրեցօր սպասում էր այդ օրվան: Մի երկու անգամ անհուն բաղձանքով դիմեց հորը.

— Ես է՞լ այս աթոռին կնստեմ, ես է՞լ այս գրչով կգրեմ, և ե՞րբ կլինի:

— Կլինի՛, բայիկ ջան, կլինի:

— Ախր ե՞րբ է, ե՞րբ...

Փոքրիկն այրվում էր բուռն ցանկությունից: Բայց հայրը կրկին իր տեղն էր, դարձյալ նույն դիրքի մեջ և գրասեղանը դեռ չի անցնում փոքրիկին:

Մի օր էլ անհամբեր ու արտասովակալած դիմեց հորը.

— Բա ե՞րբ պիտի գրասեղանն իմը լինի:

Հայրը կրկին կատակեց.

— Այ, երբ որ մեռնեմ:

— Ասում ես, ասում ու չես մեռնում: Բա ե՞րբ պիտի մեռնես:

Հայրը ծիծաղեց, հետո մտախոհ ժպտով նայեց իր զավակին, որ նույնպես տխուր նայում էր իրեն:

— Կլինի՛ր, բայի՛ր ջան, կլինի՛ր,— շշուշաց հայրը մեղմ ու խուլ, և թախծալի նայեց մեռնող վերջալույսին, որ խորին տրտմությամբ մարում էր լեռների հետևում:

Երեխան հուսալից, բայց և համակված ինչ-որ վեհ մտքերով նայեց հորը և սկսեց երագել¹:

ՍԵՂԱՆԸ

(Էջ 206)

Առաջին անգամ տպագրվել է «ԱՆԻ», Բեյրութ, 1946, № 6—7, այնուհետև ԵԺ. հ. I, 1946, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 432 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

1 Նույն դիտարկումն արել է ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին, (1824 — 1871), տե՛ս նրա «От двух до пяти» գիրքը: Մոսկվա, 1940, էջ 70:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԱՎԵՏԱԿԱՆ ՈՃԸ

Արդյոք ո՞րն է լինելու սովետական ոճը:

Դա իսկույն կզգաք՝ եթե մի քիչ երկար աչքերդ փակեք ու նայեք:

Ձեր տեսողական դաշտում կբռնի կայծակնային զիզագների, սլացիկ գծերի մի հսկայական փոթորիկ, հետո հետզհետե կպարզվի գերակշիռ գծերի լեյտմոտիվը, և ձեր առջև կկանգնի մի հոյակապ ամբողջություն:

Դեպի լայնքը՝ շեշտակի:

Դեպի վեր՝ շեշտակի:

Դա գործարանաշարանների, հեռացող ջրանցքների, կամուրջների, հիդրոպատվարների երկայնաձիգ տողերն են:

Համարձա՛կ դեպի հեռուն:

Որոնք պիտի միարժեք կոլտնտգիզանտների, հսկայական կոմբինատների, փախչող դաշտերի միագծության ոլորտներում. մյուս կողմից՝ տիտանական էլևատորների, ռադիոկայանների երկնակարկառների սլացիկ ծառացումը:

Խիզախ՝ դեպի երկինք:

Նրա գույների մեջ պիտի տիրապետի հնոցների ծխասև ու բոցակարմիրը, հանքահորերի, երկրային ընդերքի լավայական այլ, պողպատի գուսպ սառնաշոյունի հետ:

Նրա ձայների մեջ՝ միլիոնավոր ոտքերի անլույի տրոփը պիտի հիշեցնի անխոնջ օվկիանի հավիտենական դողողը եզերքներին:

Նա սիմֆոնիկ է լինելու գերազանցապես և մշտաբնույթը հերոյիկ ու ֆուգայիկ, ուր պիտի մոնչան համաշխարհային սոցիալական մրրիկները, փոթորկալի ֆորտիսիմոները, կայծակնային կոն-ֆուռները, ուր նորանոր ուժերի կուտակները անհամբեր գեղումներով պիտի մակընթանան ցանցահարող սինկոպներով և ուր զիզանտ-մուրճերի մարտկնետով համերաշխված անդանտներին պիտի ընկերակցի հավիտենական քաղաքների կոնտրաբասների անլույի լեզատոն¹:

Ալեկոծ, հուժկու մրրկահույզ, բայց հաղթական հանգիստ:

Շարունակ անավարտ, մշտանորոգ, վերակառուցվող ինչպես բնությունը՝ շինանյութերի կուտակումներից խոյացած շենքերը գոտկող տախտաձեղումների զիզագները պիտի մտնեն նրա ոճի մեջ իբրև հավերժ կառուցվող կյանքի սիմվոլ՝ զիծը: Ինչպես օվկիանը, ինչպես լեռնագագաթը, ինչպես բնությունը նա՝ այդ ոճը կլինի պարզ, մոնումենտալ, վսեմ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՈՃԸ

(Էջ 198)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946, այնուհետև ԵԺ հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ N 426 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

1 Երաժշտական տերմիններ են, որ Դեմիրճյանը օգտագործում է գեղարվեստական պատկեր ստեղծելու համար:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԸ

— Աերոպլանը թռավ, աերոպլանը թռավ... — ճչում էր մի երեխա փողոցում և այնպիսի ահազանգի ձայնով, կարծես երկրագունդը թռավ:

Դեմքը շառագունած, աչքերը կրակված, հիացած՝ կասես հրաշքի էր հանդիպել:

— Աերոպլանը թռավ, աերոպլանը թռավ... — գոռում է դողալով հուզմունքից, ականջիս տակին վազվզելով դես ու դեն:

Աերոպլանն էլ ի՞նչ է՝ մի ծտի պես ծալած թուղթ, որ երբ փոքրիկ օդաչուն զցում է մի մետր վեր՝ մի վայրկյան թռչում է և իսկույն հավորեն (այլ ոչ արծվորեն) իջնում գետին ու մնում տակած:

Երբ ականջս ծակելով մի անգամ էլ ճչաց «աերոպլանը թռավ»:

— Ո՛ր է թե թռավ,— ասի ես,— տե՛ս տակել է գետնին:

Տղան ուղղակի հանգավ կրակի պես:

— Յա՛... դրո՛ւստ որ...

Ու այնպես կոտրած ժպտով, շփոթ մոլոր նայեց գետնին, շուրջը, հետո ինձ՝ կարծես ուզում էր փնտրել կորած իսկական մի աերոպլան:

Չկար անբողբուջի, չկար հրաշալի արծաթյին սլաքքը ավազած լեռներից ու փերուզ ծովերից վեր:
Կար մի թղթի ճմլած կտոր:

Ո՛հ, փոքրիկս, ներիր, որ քեզ խաբեցի— անբողբուջի կա՛ր, անբողբուջի կա՛ր: Դա քո ստեղծագործ
նգին է, որ ստեղծեց:

Եվ անբողբուջին այդպես էլ ստեղծված է...

ՍՏԵՂԵԱԳՈՐԾԸ

(Էջ 198)

Առաջին անգամ տպագրվել է «Անի», Բեյրութ, 1946, N 6—7, այնուհետև ԵԺ, հ. 1, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ N 426, պահվում է մեկ մեքենագիր օրինակ:
Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՎԱՂԵՄԻ ՎԱԼՍ

Հրճվալից մի վալս եմ լսում: Նվագախմբում առանձնապես անհոգ սուլում, շնկշնկում, գժվում է ֆլեյտը:
Ի՞նչ քաղցր է, ինչ թախծալի քաղցր: Ախ, գիտեմ, այդ սուլումը՝ իմ պատանեկությունը, իմ գիժ, անհոգ
պատանեկությունը:

Կարելի է այսպիսի խոսք ասել՝ սիրելի, ինչպես վաղեմի վալսը:

ՎԱՂԵՄԻ ՎԱԼՍ

(Էջ 217)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Գերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Շատ հերոսների վերջին խոսքերի մասին լսել ենք: Ռազմադաշտերում, կախաղանների տակ նրանք դիմադրել են մահին խիզախորեն, քաջաբար և թողել արիասիրտ մարտնչողների հիշելի խոսքեր: Ազնվություն ու վեհություն է բխում նրանց խոսքերից, նրանք վառել են մեր սրտերը, նրանք հիացք են զարթեցրել մեր հոգում:

Սակայն այն, որ ասաց հույն հայրենասեր Կոստաս Ցակոսը ֆաշիստների դատաստանի վճռով կայանալիք իր մահապատժից առաջ՝ գերազանց է բոլոր լսածներից: «Մա՛հն իսկ անակնկալի չբերեց ինձ: Ես դիմավորում եմ այն այնպիսի զգացմունքով, ինչպես գնայի տոնակատարության: Ո՛չ մի արցունք իմ մահվան առթիվ. ո՛չ թե արցունքների, այլ երգերի՝ է արժանի խիզախների մահը»:

Այո, ե՛րգ, միայն ե՛րգ Կոստաս Ցակոսին, հզոր երգի՛ է արժանի նա: Ե՛րգ՝ դա՛ գերազույնն է մարդկային հոգու թռիչքի՝ ընդդեմ թշնամու հարվածի, ընդդեմ մահի:

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

(Էջ 227)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1951, N 31, այնուհետև ԵԺ, հ. II, 1955: ԳԱԹ ԴՖ N 433 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՎԻՏՅՈՒՇԱՆ

Շատ է երիտասարդ: Ուղղակի բաց թողնես՝ գնա ֆուտբոլ խաղա կամ հեծանիվ նստի և զբոսնի դաշտերում: Եվ հիմա, որ ամբողջ մի լայնածավալ երկրի հերոս է, կրծքին «Ոսկի աստղ»՝ նրան երևի թվում է, թե ինչ-որ պատահաբար եղավ այդ:

Նա բաբանել է թշնամու մի ինքնաթիռ, որ կամենում էր ռումբեր թափել կանանց և երեխաների գլխին:

Լուսանկարել են նրան իր ծնողների հետ: Աջում կանգնած է մայրը, ձախում՝ հայրը: Սրանք էլ շատ հասակավոր չեն:

Ահա մայրը. դե՛ նա ավելի իրավունք ունի, քան մի փոքր խստակյաց հայրը. մի թևով գրկել է իր անտանելի չարանճի զավակի երկու ուսը: Հայրը գուսպ է և լրջադեմ:

Տարօրինակ պատկեր է ստացվել... Կարծես հերոսը չարանճի տղա լինի, որ իր խաղի ժամանակ մի շատ վտանգավոր գործ է կատարել և ազատել մահից հարյուրավոր կյանքեր:

Եվ ծնողները չգիտեն՝ կշտամբեն՞ նրան. «Վիտյուշա, ախր ինչպե՞ս կարելի էր...», թե՛ գովեն նրա սխրագործությունը:

Ծնողներն իրար են նայում...

Եվ ահա այդ թեթև երկյուղի հետ խառն նրանց հայացքը լցրել է մի երջանիկ գլուտի ուրախությունն ու հպարտությունը:

— Ախր նա հիմա ամբողջ աշխարհի առաջ հերոս է... իրենց Վիտյուշան...

ՎԻՏՅՈՒՇԱՆ

(Էջ 248)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, № 27, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

ՏՊԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԶԿԻՑ

«ԻԼՅԻՉԻ ԲՈՒՄՏԸ»

Այսպես է կոչվում Բիբի-Յեյբաթի ծովածոցը, ուր ծովի տեղը ցամաքացրած է և նավթահորերի մի անտառ տնկած:

«Ավտոմատիկ» բուրգեր: Նավթը հանվում է մեքենաների օգնությամբ և կարծես 5 թե 6 բուրգի վրա մի մարդ է աշխատում, այն էլ մեքենան յուղելու համար: Հին ժելոնկան մնում է պատմության հետևը:

Փորիչ մեքենաներն ահագին թնդյունով հարվածում են երկրի կրծքին և ջարդում են կարծր, ժայռեղեն սիրտը ու հանում երկրի արյունը— նավթը:

Ի՞նչ բան է «Իյիչի ծոցը», դա մի խիզախ գրոհ է բնության ահարկու տարերքներից մեկի— ծովի վրա: Դա սոցիալիստական և մարդկության «դասակարգային» պայքարն է «դասակարգային թշնամի» բնության դեմ: Ահա ապագա «դասակարգերի» պատմության փոքրիկ պատկերը: «Կյանքը բազմազանող», «անխուսափելի անհավասարության», «սոցիալիզմը երբեք չիրականացող» ինտելիգենտ տեսաբանների նվիրական տեսությունը և բաղձանքը, որ՝ կռիվը կյանքի շարժիչն է—ահա այսպես է լինելու:

Մարդկային դասակարգը պիտի կռվի բնության դասակարգի դեմ: Եվ թող չտխրեն նրանք—միշտ պիտի լինի այդ պայքարը և կյանքը պիտի «բազմազան» լինի:

Օդը մաքուր է, ոչ մի կեղտ, ոչ մուր: Հեռվից կապույտ, նենգավոր ժպիտով նայում է «թշնամին»— ծովը և «հաղթական բանակը» ամրացնում է իր գրաված դիրքերը:

Առաջախաղը կծավալվի դեպի թշնամին: Ծովը դեռ շատ հարստություն պիտի գիջի:

ՏԱՌԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի րոպե այնպես է թվում, թե քաղաքը գաստրոլ է եկել Եվրոպայից:

Նստած են կաֆեում, բուլվարում, մագազինի դիմաց: Ինչ-որ զգացում, մտապատկերների կապակցություն: Հուշեր Եվրոպայի քաղաքներից: Ինչո՞ւմն է բանը: Ռ՞ոտեղից և ինչի՞ց է այս պատրանքը, որ շարունակ, ենթագիտակցությանդ վրա ազդում է և տրամադրում քեզ հուշերի հետևից վազելու:

Հասարակ բան, դա ցուցանակների, աֆիշների տառերն լատինական տառերն են, որ ամեն րոպե խաբում են աչքդ: Սկսում են եվրոպական մի որևէ լեզվով կարդալ և հետո սթափվում:

– Ախր սա թուրքերեն է...

Լատինական տաճ¹. սա մի հանդուգն, մեծ թռիչք է մոսկովմանական միջնադարի աշտարակների և ամրոցների վրայից դեպի կուլտուրայի նոր աշխարհը: Այդ տառերի մեջ կա ռադիո, դինամո, պայթուցիկ տիտանական ուժ: Նա պիտի փշրի շղթաները, խորտակի ամրոցները, զնդանները, նա ուրագանի պես պիտի անցնի Արևելքի մի ծայրից մյուսը և հովհարի, փչի համատարած միջնադարյան խավարը:

Լատինական տառը ձուլված է արշալույսի ձուլարանում, արևի հալոցում, նա ճառագայթ է, որ մի վայրկյանում սլանում է միլիոնավոր մղոններ, նա կայծակի պես շանթելու է և բերելու Մեծ փոթորիկը և վերջը պիտի ծաղկի իբրև Արևելքի խաղաղության ծիածան:

Եվ Բաքուն լատինական տառերին անցնելով՝ անցավ Արևելքի լուսավորման գլուխ, ձեռքին բռնելով մի այնպիսի ջահ, որի ճառագայթները թափանցում են և՛ երկրի կեղևը, և՛ անդունդները, և՛ մարդկային հոգու ամենածածուկ դարանները:

Լատինական տառը թուրք կուլտուրական հեղափոխության առաջին մեծ հրդեհն է:

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԶԿԻՑ

(Էջ 100)

Առաջին անգամ տպագրվել է Կ, 1929, N145: Ինքնագիրը չի պահպանվել. Տպագրվում է նույնից:

1 Նկատի ունի աղբյուրներն տառերի ռեֆորմը, որը կատարվել է 1929 թ. հունվարին, արաբական տառերի փոխարեն ընդունվել են լատինական տառեր: 30-ական թթ. վերջերից լատինական տառերը փոխարինվեցին ռուսականի հիման վրա կազմված նոր տառերով:

Արտատպված է՝ Գերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՔՐՔԻՉԸ

Հեռու մայրից մի բարձրաձայն խմբական քրքիչ է լսվում: Կարծես զարնանային ջրեր են կարկաչում, հնչում՝ թռած քարեքար, բուռն ցայքուններով:

Աղջիկներ են դրանք:

Միավար հոսում է օդում նրանց քրքիչը: Երբեմն էլ հանկարծ այնպիսի մի ժխորով է պայթում այն, կարծես նորանոր ջրեր խուժեցին ջրերի մեջ:

«Անպատճաճ ոչինչ չի պատահել այնտեղ: Գիտեմ, երիտասարդ են, ծիծաղում են որևէ մի դատարկագույն բանի վրա» — խորհում եմ ես իմաստունի հատուկ լրջությամբ:

Բայց թո՛ղ, ի սեր չգիտեմ ինչո՛ւ և ո՛ւմ:

Որքա՛ն կկամենայիր նաև դո՛ւ ծիծաղել, քրքջալ այդպես որևէ մի դատարկագույն բանի վրա:

Երիտասարդություն:

Ամենաիմաստուն բանը աշխարհիս երեսին:

ՔՐՔԻՉԸ

(Էջ 217)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 438 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

Օ՝ ԵՐԵՒԱՆԵՐ, ԵՐԵՒԱՆԵՐ

...Կավիճն ուղղակի դադար չունի այս չարաճճիների ձեռքին: Ուր հասնում են գրոտում են՝ պատերը, մայթերը, սանդուղքները, իրարու մեջքի վրա:

Ահա մեկը, անշուշտ մի տղա, գրել է պատին. «Սիրուշը հիմար է»: Տեսնես վրեժն է հանել խեղճ աղջկանից կամ չար զգացմունք է դրդել դիմելու՝ իր դասընկերուհուն հրապարակով անարգելու այս միամիտ միջոցին:

Մեկ ուրիշը՝ երևի մի տղա, մյուսի մասին գրել է. «Սատկի Ռուբենը»: Երևի սա էլ խփել է նրան կամ խլել նրա խաղալիքը:

Օ՝ սիրելի՛ երեխաներ, սիրելի՛ Գուրգեն կամ Սուրեն, դու, որ այդ Սիրուշին այսպես անփույթ ու հեշտ հիմար ես ասում հիմա և անարգում՝ կարո՞ղ ես երևակայել, մի օր կգա, որ այդ Սիրուշը կդառնա քո ամենախոր սիրո առարկան, այնպես կտանջի, կտորորի քեզ, այնպես կբարկացնի սիրտդ, որ երբ քո բազմաթիվ սիրո ակնարկներին մերժումով պատասխանած, կյանքից հուսահատ՝ մի օր էլ նրա գողունի ժպտի մեջ, աչքերի խորքում կնկատես առաջին սիրո թաքուն ցույցը, որքա՛ն երախտագետ պիտի լինես նրան, որ քեզ փրկեց, կյանք տվեց: Պիտի երգես, վրնջաս նժույգի պես, գտնես որ աշխարհն ուրախության ծով է, իսկ դու վայելքի մակույկ նրա մեջ: Պիտի ոգևորվես, ձգտես գործունեության, փառքի, սխրագործության, հերոսության, անգամ աշխարհը վերափոխելու:

Իսկ դո՛ւ, ո՛վ Բաբկեն, որ գրում ես Ռուբենը սատկի՝ գիտե՞ս, որ դու և նա պիտի դառնաք մտերիմ ընկերներ, և երբ մի օր մարտի դաշտում լսես, որ նա ծանր վիրավոր է, որ նրան բերել են հիվանդանոց վիրահատելու, որ նա հազիվ թե ապրի՝ պիտի գլխիդ խփես մի այնպիսի ցավով, որ կարծես սրտիդ մեջ դաշույն են խառնում:

Օ՝ ԵՐԵՒԱՆԵՐ, ԵՐԵՒԱՆԵՐ

(Էջ 208)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. 11, 1956: ԳԱԹ ԴՖ № 440, պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Ինքնագրում «դաշույն են խառնում» բառերից հետո՝ «Եվ պիտի ասես, որ կյանքդ կտայիր՝ միայն թե նա ապրի: Եվ գիշերն անքուն պիտի լուսացնես դիրքում և գլուխդ կախ արցունք պիտի թափես սառը հողի վրա:

Ինչ ծանր, ծանր գիշեր...»:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՖԻԶԻԿՈՍԸ

(Արտակարգ դեպք)

Երագումն էր այդ, թե՛ վառ երևակայություն, հայուցինացիա. նա զգաց օդի սուրճ ականջի տակին և հանկարծ ընկավ լուսնի սառ մակերևույթի վրա:

Այո, լուսնի սառ մակերևույթի վրա:

Նա շատ պարզ ըմբռնեց այդ: Նա ֆիզիկոս էր: Ի՞նչ ըմբռնել՝ տեսավ, շոշափեց լուսնի սառ գետինը: Նայեց չորս կողմ. հրաբխային խառնարաններ, չոր ձորեր, կնճռոտ դաշտավայրեր:

Ելավ նստեց:

Այո, լուսնի վրա է: Հեռուն երկնքում ահա մի խոշոր մոլորակ է փայլում պղնձի խիստ գույնով: Հասկացավ. դա մեր երկրագունդն էր: Իսկ իր շուրջը ոչ ցերեկ էր, ոչ աղջամուղջ, ոչ խավար էր, ոչ երեկո: Ինչ-որ մոխրագույն պղտոր լույս: Ոչ մի ձայն, ոչ մի շարժում:

Արկածյալը կրկին նայեց շուրջը, հեռուն: Մտածեց, լավ մտածեց — այո, լուսնի վրա է ինքը: Լավ հասկացավ այս: Այստեղ չկա ոչ մի արարած, ոչ մի էակ, ոչ մի շունչ: Եվ ո՞ւր, ո՞ր կետում գտնվի նա, այս դժբախտ մարդը, որ միևնույն մենակությունը չլինի, այս անմարդ, անէակ մենակությունը:

Ոչ ոք չկա ամբողջ լուսնի վրա...

Սակայն ի՞նչ, ֆիզիկոսը վեր կացավ և սկսեց **գնալ...**

ՖԻԶԻԿՈՍԸ

(Էջ 215)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 441 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

«ԱՐՎԵՍՏԻ ՕՐԵՆՍԴԻՐԸ»

Մի հնդուհավ եմ հիշում: Դատարկ բակի մեջ մենակ շրջում էր գոռոզ ու մեծամիտ: Այնքան զբաղված չէր կուտ ու խոտ որոնելով, որքան ուշքը տվել էր ձայներ որսալու օդի մեջ: Ջայներ... օ՛, նրանցով լիքն էր օդը: Կյանքն ապրում էր և ձայներ էր արձակում ամենուրեք: Փողոցներն եռում էին մարդկանց բազմությամբ, աղմկում էին երեխաները, հեռվից հոսում էին Շոպենի վճիտ հնչյունները:

Հնդուհավն այդ բոլորն իրեն էր վերագրում: Ուղղակի իր հասցեին: Վիրավորիչ էր համարում այդ ձայները, զայրանալով ուռչում էր, փքվում և հանկարծ դվում:

— Ա՛լըլի-վուլի-դուլի...

Այսինքն՝ այդ ո՛վ էր, ո՛ւմ էր ակնարկում, ի՞նձ, ինչպե՞ս համարձակվեց: Ասացե՛ք նրան, որ այստեղ հանճար է վիրավորվում, գեղարվեստական խոսքի մեծագույն օրենսդիրը...

Դվլում էր այսպես և հետո գլուխը... օ՛, այդ հիմարակա՛ն, գոռոզությունից կապտած, ինքնաբավականությունից կարմրած տխմար մտքերից անճոռնիացած, շլինքը կախ, գլուխը բարձրացնելով վեր՝ նայում էր շուրջը իբրև մի հրաշափառ հիմարություն:

Կուշտ էր նա, հղիացած էր տափակ, ապաշնոր մտքերով, հանգիստ ու ապահով էր նա իր փառքի հաստատունության մասին և կարծում էր թե աշխարհն ուշաթափված է իր՝ չգիտես ո՛ր մոնումենտալ գործի գեղեցկության ու վեհության առաջ:

Եթե հազա՛ր հառաչանք կարողանար մարդու թեթևացնել այդ կոշմարային պատկերից...

«ԱՐՎԵՍՏԻ ՕՐԵՆՍԴԻՐԸ»

(Էջ 211)

Առաջին անգամ «Հիմարությունը» վերնագրով տպագրվել է ԳԹ, 1941, N 6, այնուհետև ԵԺ, հ. 1, 1946, ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 379 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՆՀԱՆԳԻՍՏ ԺՈՂՈՎԱԿԱՆ

«Հարվածայինների օրվա» նիստը ընթանում է աղմուկի ու ժխտի մեջ: Ձեկուցողը ճգնում է գոռոցով ծածկել այդ աղմուկը:

Սակայն ո՞վ է աղմկում: Ուշացածների կոշիկները, պատշգամբների տախտակների ճռճոցը, աթոռների ոտները և... ծծկերները:

Բայց մի ծծկեր ուղղակի ռեկորդ է խփում: Ծոգից, նեղվածքից քրտնաթոր մայրն իր լի ստինքներով չի կարողանում փակել նրա ռամիկ, անքաղաքավարի կոնչոցը: Մշնում է նա, լափլփում ստինքը, հետո դնճրտում ու հանկարծ այնպես է ճղավում՝ կարծես միջից կես արին: Մյուս ստինքն է պահանջում:— Հրամցվում է մյուսը: Էլի՛ դնճրտոց, էլի՛ ճղավոց...

Ի՞նչ է պահանջում՝ գուցե լափել մո՞րթ, սրա՞հը, ամբողջ աշխա՞րհը... Կատարյալ պատիժ մոր կրծքին և անհանգստություն հարևան շրջապատի համար:

Եվ հարց է ծագում՝ ինչո՞ւ չեն թողել տանը. կամ վերջապես ինչո՞ւ չեն դուրս տանում այդ... նոր անհանգիստ մարդուն, որ երեկ աշխարհ եկել՝ այսօր հանգիստ չի տալիս ժողովականներին:

Բայց... ո՞ւմ մոտ թողնեն տանը: Ո՞վ տանի դուրս: Հա՛յրը՝ նա բանվոր զեկուցողն է հենց: Թերևս կասեք մա՛յրը: Նա հարվածային բանվորուհի է և ժողովական...

Եվ քանի՞ հազարավոր զեկուցումներ, քանի՞ ժողովներ, երեկույթներ, ներկայացումներ լցված են այժմ այսպիսի ժխտալիճ ճղավոցներով, ուր այս փոքրիկ նոր մարտիկները ուժգին ճիչերով պահանջում են իրենց կյանքը և աճում հարվածային մայրիկի գրկում...

ԱՆՀԱՆԳԻՍՏ ԺՈՂՈՎԱԿԱՆ

(Էջ 213)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ N 426 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԵՐԵՆԱՅԻ ՃԻՉԸ

Կայարանը որոտում է: Ռազմաճակատ մեկնողներին ճանապարհ է դնում ահագին բազմությունը:
Գնացքը լիքն է. նստում են հետզհետե: Մեկնողներից ոմանք դեռ պլատֆորմի վրա են՝ իրենց
հարազատների կողքին: Հրաժեշտի խոսքեր: Ասվում են, իսկույն մոռացվում և կրկին ասվում: Ասում է
սիրտը, որ լեզու չունի:

Վերջին զանգը դողանջեց: Սուլեց: Ծշակը ճչաց: Բազմությունը ցնցվեց, թնդաց. «Բարի ճանապարհ»:
«Գնաք բարով»: «Վերադարձեք հաղթանակով»:

Գնացքը շարժվեց: Իրար սեղմելով բազմությունը հոսեց գնացքի կողքից:

Մի երեխայական ճիչ միայն հանկարծ, կարծես մի բան հիշեց, մի սուր բան. մի բան, որի մասին լսել էր,
սովորել, խաղացել էին բեմի վրա, տեսել էր նկարների մեջ միայն և հիմա հանկարծ իրականություն
դառավ.

— Պա՛պա, պա՛պա, սպիտակների ձեռքը չընկնե՛ս, խփի՛ր նրանց...

ԵՐԵՆԱՅԻ ՃԻՉԸ

(Էջ 219)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, N 21, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել:
ԳԱԹ ԴՖ N 392 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

Երկրագունդը մղվում է առաջ տիեզերքյան տարածության մեջ և ոչինչ բան չի կարողանա կանգնեցնել նրան, փոխել ուղղությունը: Ի՞նչ ենք մենք նրա առաջ: Չնչին փոշիներ:

Սակայն ոչ, այդ չնչին փոշիներն են, որ երկրագունդ են դառել: Նրանք են երկրագունդ ստեղծողները:

Այդ նրանք են, որ գոյություն ունեն... իբրև երկրագունդ:

ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

(Էջ 231)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N393 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԼԵԶՈՒ

Նրանք, երկուսը, հանդիպեցին իրար: Չէր սպասում նրանցից մեկը, որ մյուսը կենդանի է: Լսել էր, որ նրան դժբախտություն է պատահել, որ նա չէր դիմանա այդ դժբախտությանը, կմեռներ:

Եվ ահա՛, ի՞նչ ուրախալի բան՝ նա կենդանի՛ է...

Իրար էին նայում և չէին խոսում: Ճիշտը՝ չէին կարողանում խոսել: Խոսքը քիչ եղավ:

Չկար այն խոսքը...

Միայն նայում են իրար և...

— Հը՛մ,— ժպտում է սա:

— Հա՛,— ժպտում է մյուսը:

Կրկին նայում են իրար ոտից գլուխ ու էլի... ժպտում.

— Հա՛, հը՛մ...

Է՛հ: Նախամարդիկ են, ի՞նչ են, թե՛ ապագայի մարդիկ: Ո՞ր կորավ լեզուն, այսքան միլիոնավոր տարիների լեզուն... «Հա՛, հը՛մ», սրանով խոսք ու զրո՞ւյց կլինի:

Բայց տե՛ս, եղա՛վ:

Եվ որքա՛ն նրբություններ, խոր մտքեր այս մի «հըմ, հա»-ի մեջ...

ԼԵՉՈՒ

(Էջ 235)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԿԱՏՈՒՆ

Ոչ մի խորեոգրաֆիական կրթություն հո չունի, չի անցել ոչ մի դպրոց: Բայց պիտի տեսնել, թե ինչպես է հատակից խլում ընկույզը, երկու ոտների վրա կանգնում, ետ-ետ գնալով գցում օղի մեջ, օղի մեջ բռնում ու իրանը ճկում և հանկարծ իր մի կողմ ցատկելը, ընկույզը օղի մեջ վեր նետելը մեկ է անում:

Չես հասցնում տեսնել անգամ, թե ինչպես է խլում ընկույզը թռիչքի մեջ և այդ ամենը անում է պարելով:

Դա պար է ճարպիկ խաղի, ճարպկության հետ միասին: Բայց և ի՛նչ շնորհալիություն, ի՛նչ ձևեր և ամեն վայրկյան նորանոր, անկրկնող, բազմազան ստեղծագործություն: Շարժումների ի՛նչ կուսական բնականություն:

ԿԱՏՈՒՆ

(Էջ 240)

ԳԱԹ ԳՖ N 860, էջ 80 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է առաջին անգամ, ինքնագրից:

Արտատպված է՝ Գերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԿՈՇԿԱԿԱՐԸ

Կոշկակարի փոքրիկ մի արհեստանոցի առջև երեխաներ էին հավաքվել ու հետաքրքիր նայում ներսը: Այնտեղ մի առանձին բան չկար: Սովորական՝ մի տուփի չափ ծակում, որի մեջ հագիվ երկու մարդ կտեղավորվեին: Եվ իրոք՝ այնտեղ մի արկղի վրա նստած էր կոշկակարը, որ գլուխը կախ՝ կոշիկ էր կարկատում: Նրա կարկատած կոշիկն էլ մի երևելի բան չէր, ոչ էլ արհեստանոցի պատին կպցրած մի երկու խունացած պատկերը կարող էին գրավել փոքրիկների ուշադրությունը: Բայց երեխաները հո՞ծ խմբով պաշարել էին արհեստանոցը:

Այնտեղ, վարպետի կողքին նստել էր մի տասը տարեկան տղա և շատ վարժ կարկատում էր կոշիկի տակը: Մերթ կուրծքը հայում էր կոշիկին և սուր դանակով կտրում կոշկատակի եզերքը, մերթ բզով ծակում ու շափկան դնելով մեջը մուրճով շնորհալի զարկում պնդացնում, մերթ թելը փաթաթում խոզի մազին, մոմում, սրբում:

Չէր նայում երեխաներին, լուրջ իր գործին էր: Վարպետը չէր խանգարում երեխաներին: Գործը գնում էր առաջ: Իսկ երեխաները

տարված, ժպիտները դեմքերին սառած և աչքերը լայն բացած նայում էին փոքրիկ աշակերտին:

Փո՛քր էր, գրավո՛ւմ էր...

ԿՈՇԿԱԿԱՐԸ

(Էջ 212)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1941, № 6, այնուհետև ԵԺ, հ. 1, 1946, ԵԺ, 1950, ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ-ԴՖ № 407 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀԵՐՈՍԱՄԱՅԻՐԸ

Որքան նման է նա իր զավակին: Կարծես իր զավակն է ծնել նրան: Դե այդպես է՝ լուսանկարիչը նկարահանել է նրան հետո, երբ արդեն հռչակվել է նրա զավակը: Նա հայտնի դառավ հերոսացածի շնորհիվ: Որքան նման է նա իր զավակին... Ահա նրա կամքի ուժով սեղմված շրթունքները, նրա բաց ու շիտակ դեմքը, անձնվիրության պատրաստ հայացքը:

Կանգնած է մայրը, նա բանվորուհի է, գործարանում, սեղանի մոտ, մկրատը ձեռքին և մի պահ մտորմունքի մեջ խորասույզ՝ նայում է հեռուն: Իսկ հեռուն, մայրը գիտե ինչ-որ մի տեղ օդում, կրակի մեջ այրեց իրեն նրա զավակը՝ հայրենիքի հաղթության համար:

Այդ իմացել է, գիտե մայրը...

Եվ չի ողբում նա: **Աշխատում է:**

ՀԵՐՈՍԱՄԱՅՐԸ

(Էջ 244)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 9 —10, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՃԱՆՃԸ

Նա վերջինն է իմ բնակարանում: Ինչպես է վերապրել նա դժնի դեկտեմբերը, ի՞նչպես է հայտնվել այս հունվարին՝ անհասկանալի է:

Բայց նա ապրում է և թռչում սենյակից սենյակ, պատուհանից պատուհան: Մեկ նստում է գրքիս վրա, թևիս, մեկ ճախրում է օդում: Բայց մեկ էլ որ չի՞ գալիս՝ բը՛ր՛զ՝ ականջիս մոտով սլանում անցնում, իսկույն երևակայությանս մեջ պատկերվում է ամառը, անտառի մի ոսկելույս բացատ, ծառերի շշուռը, մեղուների բզզյունները, գետի խշռոցը և հեռավոր կանչը՝ չգիտես հովվի՞, թե ինչ դաշտային աշխատողի...

Խոտերում օրորվում են ծաղիկները, վերևից ժպտում է երկնքի խոր, թավիշ կապույտը:

Եվ այսքան պատկերները զարթեցնում է իմ մեջ մի ճանճ...

Ո՛չ, չի նեղացնում, ուրախացնում է ինձ, գլուխը քա՛րը, թող ապրի այս մեկ ճանճը:

ՃԱՆՃԸ

(Էջ 200)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1941, № 1, այնուհետև ԵԺ, հ. I, 1946, ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ, № 406 պահվում է մեկ մեքենագիր օրինակ, որի վրա հեղինակը ուղղումներ է կատարել: ԵԺ, հ. II գրված է հեղինակի կատարած ուղղումների հիման վրա: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Ծոցատետրերից (ԳԱԹ ԴՖ № 858, էջ 5) մեկում Դեմիրճյանը ունի հետևյալ նշումը. «Ճանճը» մի ոտք ունի...»:

Առաջին տպագրությունների մեջ նախավերջին պարբերությունը չկա, իսկ վերջին պարբերությունն այսպես է. «Ո՛չ, ձանձրալի չէ, չի նեղացնում նա, թո՛ղ ապրի նա»:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԱՀՐ

Հասարակ լուսանկարը կանգնեցրել է նրա ողջ կյանքը. և՛ գազանաբար սպանությունները, և՛ խժոժությունը, և՛ սարսափ սփռելը, և՛ կանանց, երեխաների խոշտանգումները: Նա պիտի հրդեհեր ամբողջ երկրներ, պետք է տիրեր ողջ աշխարհին: Ահա այստեղ դադար առավ ամեն բան: Ընկած է նա մեջքի վրա, թևերը տարածել այդ օտար երկրի ընդարձակ դաշտի վրա: Նրա կողքին դադար է առել նաև նրա անհանգիստ մոտոցիկլը, որի հետև կաշվե պատյանի վրա նկարված է ոսկերոտի և գանգ:

Մա՛հ:

Ամենուրեք հռնդացնում էր նա իր այդ գանգակիր մեքենան և սլանում: Մահվան կրքով մոլեգնած՝ անցնում էր մարդկության բնակարանի՝ աշխարհի վրայով, նայում էր՝ երկրներ, ժողովուրդներ, և նրանց ուսերին տեսնում էր միայն գանգեր, գանգեր...

Ծարավի էր մահվան... Մա՛հ տվեք նրան, միայն մահ:

Եվ ահա գտել է նա այն, ինչին ձգտում էր մոլեգին ազահությամբ:

Բայց այն մահը, որ նա գտել է՝ այնպես չէ այլանդակ ու չար, ինչպես նկարված է նրա մեքենայի պատյանին: Ո՛չ: Իսկական մահը, ավելի գթառատ, քան ինքը, մի խաղաղություն է դրոշմել նրա դեմքին և հանգիստ փակել է նրա ազահ աչքերը:

ՄԱՀՐ

(Էջ 247)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄՐՋՅՈՒՆՆԵՐ

Մրջյուններ էին վխտում ճանապարհի վրա: Վազվզում արագ-արագ, խաչաձևում ճանապարհը, կտրում-անցնում ամեն ուղղությամբ: Եվ ինչ-որ շատ էին նրանք: Ահա նրանցից դիակիկներ կան այստեղ, այնտեղ: Այդ անցորդներն են ոտնակոխ արել նրանց, և երևում է, որ ամեն բոպե վտանգված է նրանց կյանքը:

Բայց... սա՞ ինչ բան է: Նրանք այստեղ մինչև անգամ բո՛ւյն ունեն: Ահա՛ թե ինչ: Եվ բույնը ուղղակի ճանապարհի վրա: Պաշար են կրում, ձվիկներ են դրել արևի տակ չորացնելու, հող են ածում բնից: Մարդիկ կարգին գործի վրա են այստեղ, աշխատում են տենդորեն: Բայց ի՞նչ խելք է այսպիսի զոհերով, այսքան անցորդների սարսափելի կոշիկների արանքում (երևակայո՞ւմ եք...) բույն ունենալ, չեռանալ այստեղից, ապրել հանգիստ, աշխատել, դեռ ուրախանալ, հուսալ: Եվ մինչև անգամ տևել...

Եվ նրանք չեն հեռանում, ապրում են այստեղ, աշխատում, ուրախանում, հուսում: Եվ տևո՞ւմ...

«Է՛հ, հայրենիք է» — խորհեցի անցա: Կներեք, չգիտեմ արդյո՞ք մրջյուններն է՞լ այդպես կնայեին գործին:

Գոնե ես այդպես խորհեցի:

ՄՐՋՅՈՒՆՆԵՐ

(Էջ 216)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 422 պահվում է մեկ թերի ինքնագիր:

Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԱՍՊԵՏՆ ԻՐ «ՕՐԴԵՆԻ»

Մտա մեքենագրուիւ մոտ մի փոքրիկ բան թելադրելու: Այնտեղ նստած էր քառասունի մոտ մի առողջակազմ երիտասարդ: Ասել նրա համար մռայլ չէր կարելի. բայց ինչ-որ ապրածի, շատ բաներ տեսածի, տաժանելի կյանքից խրատվածի տպավորություն էր թողնում նա:

Նա նստած էր անշարժ, թևերը կրծքին խաչած և խստահայաց, ներշնչված աչքերով նայում էր մի կետի:

Եվ զգացվում էր, որ խորասուզվել էր մի մտքի մեջ:

Ես թելադրեցի մի մանրանկար, որ գրել էր մեր գրողներից մեկը¹: Այնտեղ նա խոսում էր մահապատժի ենթարկված հերոսների վերջին խոսքի մասին: Որ շատ գեղեցիկ բաներ են ասել նրանք: Որ սակայն Հունաստանի հայրենասեր Կոստաս Ցակոսը ասել է. «Ո՛չ մի արցունք իմ մահվան առթիվ: Ո՛չ արցունքների, այլ միայն երգերի է արժանի խիզախների մահը»: Այո՛, ե՛րգ,— ասում է հեղինակը,— միայն ե՛րգ Կոստաս Ցակոսին, հզոր երգի է արժանի նա: Ե՛րգ՝ դա գերագույնն է մարդկային հոգու թռիչքի՝ ընդդեմ մահի և թշնամու հարվածի: Դա կլինի և՛ պսակ, և՛ պատիվ, և՛ տոնակատարություն հերոսին»:

Ես կրկնեցի վերջին խոսքերը:

— Շշա՛տ ճշմարիտ է,— լսվեց անձանդի թավ բարիտոնը գրամեքենայի փակող չխկոցների մեջ, որ խկոյն կտրեցին և նրա խոսքը գամվեց սենյակի լուռության մեջ:

Ուրեմն նա հետևում էր իմ թելադրությանը: Անսպասելի էր: Ես նայեցի նրան: Մենք համարեցինք մեզ ծանոթացած: Ես հարցրի նրան.

— Հավանեցի՞ք:

— Շատ ճշմարիտ է,— կրկնեց նա միայն իր խոսքը,— «Այո, միայն ե՛րգ, ո՛չ մի արցունք»: Մենք սկսեցինք զրուցել:

Մեքենագրուիին, որ ըստ երևույթին նրա ազգականուհին էր, սկսեց իր թղթերը ջոկջկել, դարսել: Խոսքը փոխվեց զանազան նյութերի վրա: Դուրս եկավ, որ նա գլխավոր հաշվապահ է եղել մի խոշոր արդյունաբերական օբյեկտի, եղբայրական ռեսպուբլիկաներից մեկում:

Ինչպես եղավ խոսք բացվեց ապրուստի մասին: Նա ասաց՝ իր ռոճիկը շատ համեստ բան է:

— Երևի այլ եկամտի աղբյուր չունեք,— ասացի ես:

— Ո՛չ,— գամեց նա, կարծես անախորժելով:

— Եվ չեք էլ ունենա:

— Ո՛չ,— դարձյալ գամեց նա:

Ես սպասեցի և կրկին.

— Գուցե մի հնա՛ր կարող եք գտնել:

Նա խիստ նայեց աչքերիս մեջ, և հանդիմանորեն.

— Ի՞նչ հնար...

— Որևէ... ի՞նչպես ասեմ... կողմնակի աշխատանք... կոմբինացիա (ինչո՞ւ ասացի այս հիմար բաները՝ չգիտեմ)...

Նրա աչքերը ծաղկեցին.

— Նախ՝ ես որտեղի՞ց ունեմ ինձ համար ժամանակ և հետո՝ ի՞նչ կոմբինացիա... Ես ինքս եմ որսում այդ կոմբինատորներին, հանձնում դատախազին:

Ես ճնշվեցի: Միայն մեղմելու համար խոսքս՝ ասացի.

...— Ուրեմն պետք է շատ հաշվով ապրեք:

— Եվ ապրում եմ շատ հաշվով,— շեշտեց նա,— ապա ի՞նչ: Ժամանակն այդպես է: Խի՛ստ: Հիմա եթե կասեն՝ «ապրել հաշվով»՝ «կա՛, ապրել հաշվով» (ձեռքը պատվի է բռնում քունքի մոտ): Կասեն՝ «նեղություններ կրել», «կա՛ նեղություններ կրել», «կովել»՝ «կա՛ կովել»՝ «մեռնել»՝ «կա՛ մեռնել»: Ապա ի՞նչ: Այդպես պետք է լինենք: Պատրաստ ամեն բանի:

Ես գորացրված զինվորական եմ, կովել եմ Հայրենական պատերազմում. այդպես եմ տեսել, այդպես եմ արել:

Եվ (սրտաշարժ պարզություն. չէր ուզում երևի սին խոսքեր ասած լինել) հանեց ծոցատետրը. այնտեղ իր լուսանկարն էր. զինվորական՝ մայրի աստիճանով, կուրծքը լի շքանշաններով...

Թերևս նա խստագնում էր, փայտը ծռում, գույները թանձրացնում:

Երևի: Չգիտեմ:

...Բայց ազդե՛ց:

ԱՍՊԵՏՆ ԻՐ «ՕՐԴԵՆԻ»

(Էջ 228)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 377 պահվում է մեկ ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից: 1 Նկատի ունի իր իսկ «Վերջին խոսք» մանրապատումը:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆՔՍԻ ԿԱՍՊԱՆԻԱՆ

(Տպավորություններ)

Առաջին իսկ ժամին, երբ ինձ վիճակվեց այցելել Էջմիածնի գավառը և դիտելու զարնանացանքս՝ ես չէի կարողանում սթափվել այն բազմապիսի խնդիրներից, որի մեջ ինձ զգացի կլանված՝ ինչպես ծովի խոր հատակում:

Հեռվից, ըստ երևույթին, լուռ գավառը որքա՛ն լցված է աղմկալից, եփվող կյանքով:

Գավգործկոմի շենքը: Ամենաբանուկ, ամենահետաքրքիր վայրը այս րոպեիս: Դա գավառական կյանքի շտաբն է, ուր ամեն կողմից վազում է գյուղացիությունը, որի սենյակները, միջանցքները, պատշգամբը, սանդուխքները ամեն րոպե լցվում են խուռն բազմությամբ:

Գյուղխորհրդի նախագահներ, լիազորներ, պատգամավորներ, շրջգործկոմ, գավմիլիցիա, սոսկ անհատներ՝ անընդհատ ելումտում են շենքը՝ բերելով դիմումներ, առաջադրություններ, բողոքներ, գործեր, տանելով վճիռներ, հրահանգներ, խնդիրներ: Դռնից մինչև սանդուխքները, պատշգամբը, միջանցքը՝ զանազան դիրքերով թափվել են երկշարք արևառ, պղնձադեմ գյուղացիներ— միջակներ և հողի պրոլետարիատը, և մազմզոտ, բրոնզե կրծքերը քորելով, պսպղուն, ծակող աչքերը պտտեցնելով այցելուների վրա՝ սպասում են համայնական գործերի վճիռ: Հեռախոսները զնգզնգում են, «չեն լսում»— ինչպես միշտ, կամ մեկը խռիռացնում է Աշտարակից: Ներսը չիսկչիսկում են գրամֆենաները, իսկ ավելի ներսը գյուղացի պատգամավորը կամ լիազորը հավար է զցել: Գավգործկոմի նախագահի առաջ, «տակտիկական հավար»՝ գործրինակ այս կարգով. «քանդվեցի՛նք, կոտորվեցի՛նք. կորա՛նք. տրակտորը չի գալիս, մյուս գյուղերը որ լծկան էլ ունեն, կեր էլ ունեն՝ տրակտորը զնաց հերկեց՝ մերը որ կեր չունի, լծկան չունի՝ մնաց անվար, նրանց ուղարկվում է ամեն բան, մեզ աչքաթող են արել»:

Որին անմիջապես հետևում է բանի Էության պարզվելը, այն որ կարգադրված է և հետևյալ օրը տրակտորներն անցնելու են այդ «կոտորվող» գյուղը և որ նրանք առաջինը՝ չեն կոտորվելու, երկրորդը՝ չեն քանդվելու և երրորդը՝ ամեն բան կգնա կարգին:

Ահա և զանգիբասարցի թուրքը: Հեղեղյալը— այսպես ասենք: Հիրավի դրությունը զվարճալիներից չէ, անշուշտ: Արաքսը գալիս լցվում կալնում է Քասախի, Սև ջրի, Գետառի, Չանգվի ջրերը, ողողում է Չանգիբասարը: Գյուղերը ջրի մեջ են: Աման-չաման, քոչ ու բարխանա ուղտերի վրա բեռնված քաշվում են գյուղեգյուղ, բլրեբլուր: Նրանց պետք է տեղավորել, ավերումներից ազատել, հաց, գործիք հասցնել և այլն: Ջուրը լցրել է նրանց արտերը: Նրանք զանգատվում են իրենց բախտից: Եվ սկսվում է «տակտիկական մի նկարագրություն»— ջուրը այնպես է ողողել բամբակի և ցորենի արտերը, որ «էլ չորացնելու հնար չկա»... միակ հնարը «չալթուկ ցանելն է»... թե չէ՝ այս տարվա ջուրը «էլ քաշվելիք չունի»... «բամբակի ժամանակն անցավ»— այսպես են հրահանգում «հեղեղումները»: Չալթուկի ատավիճում...

Իհարկե սրան էլ հետևում է իմաստուն բացատրությունը, որ բնական հեղեղումների դեմը արհեստական միջոցներով կառնվի, իսկ «արհեստական» հեղեղումների դեմ էլ «բնական» միջոցներ ձեռն կառնվեն և այդ երկուսնայա քասախներին կհարկադրեն տրոպկայանների հրապարակի փոխարեն ավելացնել բամբակի հրապարակները:

Չալթուկը Գավգործկոմում ժողովրդականություն չունի, և չալթուկիստը հեռանում է: Նրան ճամփու են դնում ավելի օգտակար խորհուրդներով և հավաստիացումներով, որ հացի, գործիքի, տրակտորի և այլ օգնությունները կարգադրված են և կկատարվի անհապաղ:

Ահա և մի այլ գյուղխորհրդի նախագահ: «Հեղեղման գործերով»: Խոսակցության մեջ պարզվում է, որ իրենց գյուղ ուղարկված կառավարական հացը կուլակներն են բաժանում չքավորներին:

—ԱՖֆերիմ գյուղխորհու՛րդ...

Այդ ո՞ր օրվանից այդպես քնքշացավ այդ կուլակ-աղաների սիրտը, որ այդպիսի սրտառուչ ժեստով պատրաստակամություն դրսևորեցին ուրիշի հացը ուրիշին բաժանելու:

Ուղտի ականջում քնած գյուղխորհրդի նախագահին բավականին խիստ բարեկամաբար հասկացնում են, որ իրենց գյուղի չքավորները կուլակների ողորմած միջնորդության կարոտ չեն դեպի սոցիալիզմ գնալու, և այնտեղ սոցիալիզմում շատ է շոգ աղաների համար:

Ահա և մի ուրիշ թուրք: Տրակտորը ուշացել է իրենց վարին, եկել է «հաջողացնելու»:
«Քանդվեցինք, կորանքը» բնաբան ընտրելով Գավգործկոմի նախագահի տեղակալին բացատրում է վարի, ցանքսի, բամբակի կարևորությունները: Տեղակալը գլուխը կախ մի բան է գրում. չի լսում նրան: Եվ պատգամավորը հուսահատ խտացնում է պատմությունը ամենասարյանական գույներով¹, որ տեղակալը վերջապես թողնի գրելը և իրեն լսի: Սակայն ո՛վ զարմանք. թուրքը հենց իր գործի մասին եղած կարգադրությունն է համապատասխան հասցեի ուղղած:

— Ա՛ռ:— Հետևյալը, ի՞նչ եք կամենում, ընկե՛ր:

«Քանդվեցինք, կորանքը» ուրախ-ուրախ հեռանում է, հերթը զիջելով հետևյալ «քանդվեցինք, կորանք»-ների:

Վաղարշապատցիներ են: Եգիպտերի անասունները լցվել են սրանց արոտներն ու... ի՞նչ թշնամություն,— ուտում են:

— Այդ արոտները եգիպտերին է հատկացված:— Հապա ի՞նչ: Դուք այգիներ ունեք, արտ ու բանջարանոցներ— բա եգիպտերը մի արո՞տ էլ չունենան:

Այգետեր-արտատերերը առաջին անգամն են լսում, որ իրենք այգի ու արտ ունեն և որ եգիպտերի անասունները ոչ մի թշնամություն չեն տածում դեպի վաղարշապատցիները, այլ պարզապես սիրում են... սովից չսատկել:

ԳԱՐՆԱՆԱՑԱՆՔՍԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ

(Էջ 106)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Բովանդակությունից կարելի է ենթադրել, որ գրված է 1920-ական թվականներին:

ԳԱԹ ԴՖ № 290, պահվում է մեկ ինքնագիր:

Տպագրվում է առաջին անգամ, ինքնագրից:

1 Նկատի ունի Մարտիրոս Սարյանի (1880—1972) գեղանկարչությունը:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԸՆՏՐՈՂՆԵՐԸ

Ամպամած, հանդարտ ու թեթև եղանակ է: Քանաքեռչիկի չորրորդ շինմասն ապրում է իր աշխատանքի օրը՝ լուրջ, խաղաղ, գործնական:

Բանվորները ցրվել են, որոնք ճնշման կամերայի, ջրանցքի կողմերը, որոնք ներքևի ձորը, որոնք շինմասի զանազան արհեստանոցներում:

Մուրճի զնգոցներն են խանգարում լռությունը:

Երկու օր առաջ տեղի է ունեցել Հայկական Գերագույն խորհրդի պատգամավորական թեկնածուների ընտրությունը:

Թեկնածուներն են՝ ընկերներ **Իոսիֆ Գրիգորյանը** և **Ռուբեն Շահբազյանը**:

Ընկեր Իոսիֆ Գրիգորյանը երկու տարի է, ինչ դուրս է եկել շինմասի աշխատանքներից: Նա թունելագործ բանվոր էր երկրորդ շինմասում, ստախանովական, շքանշանակիր, ՀԽՍՀ Կենտգործկոմի, ռայկոմի բյուրոյի, քաղկոմի անդամ: Նա է ստախանովյան շարժման հիմնադիրը Քանաքեռչիկում:

Ընկեր Շահբազյանը մասնագիտությամբ էլեկտրոմոնտոր է, բրիգադիր է եղել մոնտաժում, ուր եղել է ստախանովյան շարժման հիմնադիր և այժմ Քանաքեռչիկի կուսկոմի քարտուղարն է:

Ընտրությունների երեկոն անց է կացել արդեն: Նկարագրել այն այժմ հնարավոր չէ:

Մնում է վերարտադրել այն ուրիշ կերպ...

Եվ ահա պատմում են:

Խոսում են իրենց թեկնածուների մասին: Եվ այդ գրույցի մեջ նկատվում են թեկնածուների դեմքերը:

— Համեստ, նվիրված աշխատում է,— ասում են ընկեր Շահբազյանի մասին:

— Մեծի հետ մեծ է, փոքրի հետ փոքր,— բնորոշում են ընկեր Գրիգորյանին:

— Ամբողջ բանվորությունը հարգում է նրանց:

Խոսում են իրենց թեկնածուների շատ բարեմասնությունների մասին, նրանց կազմակերպչական ընդունակությունների մասին, Նկարագրում են նրանց դերը Քանաքեռչիկի բանվորության քաղաքական դաստիարակության և աշխատանքի կազմակերպման պրոցեսում: Սակայն շարունակ կրկին վերադառնում են մի հատկության, որ իրոք մեր ժողովրդի ամենից շատ գնահատված հատկությունն է:

Համեստությունը:

Գնում ենք բանվորների մոտ:

Կանոնավորման ավազանը: Այնտեղ աշխատանք է եռում:

Բանվորների մեջ նկատում եմ իմ հին ծանոթներին, ընկեր Բաբկենին և ընկեր Թուշճյանին:

Ընկեր Թուշճյանը պատ է շարում: Նրա առույգ վարդագույն դեմքը և կապույտ ծիծաղկոտ աչքերը ավելի զվարթ են այժմ:

— ԶՆ՝ ընկեր Գևորգ, մնացինք մինչև Քանաքեռնի ապարտումը:

— Մնացինք:

Քանաքեռնի կայանի շենքը, ջրանցքի պատերը և առհասարակ բոլոր շարված քարերը ամենագեղեցիկ հետքերն են այս նվիրված «սերնդական որմնադիրի» աշխատանքի:

Նրա հայրը շարել է, պապը շարել է և երևի նրա սերունդն էլ կշարի:

Խոսում ենք Քանաքեռնի պատգամավորական թեկնածուների մասին:

— Լավ, համեստ աշխատավոր են,— ասում է ընկեր Թուշճյանը:

Ահա մոտենում է և ընկեր Բաբկենը:

Հասարակ հողագործ բանվորն այժմ տասնապետ է: Մասնագիտությունը ձեռք է բերել գործնական աշխատանքի պայքարի մեջ: Նա ևս ընկեր Թուշճյանի նման Քանաքեռնի հիմնադրման օրից է այստեղ:

— ԶՆ՝ ընկեր Բաբկեն, էլի՞ այստեղ ես:

— Բա որտե՞ղ պիտի լինեմ:

— Հանգիստ չե՞ս:

Ինչի՞ պիտի հանգիստ լինի: Բաբկենն այն մշտական շարժիչ ուժն է, որին միշտ կտեսնես աշխատանքի պատասխանատու պոստերի վրա:

Նա մեծ հարգանքով խոսում է իրենց թեկնածուների մասին: Նա ևս նշում է, արդեն ինչպես երևում է ընդհանուր դարձած, այն վերոհիշյալ բնորոշ հատկության մասին, որ զարդարում է թեկնածուներին:

Համեստությունը:

Իհարկե միայն համեստությունը չէ այդ թեկնածուների հատկությունը: Նրանք իրենց գործը լավ իմացող, բարեխիղճ բանվոր են, նրանք իրենց մասնագիտությունը վերցնելով գործնական աշխատանքի դպրոցից՝ նույն կերպ էլ ավանդում են իրենց շրջապատողներին, նրանք լավ կազմակերպիչներ են աշխատանքի, նրանք քաղաքական-հասարակական գործիչներ են— բայց եկ տես, որ այս ամեն հատկությունների հետ սիրում են, որ համեստությունը բռնի առաջին տեղը:

Համեստությունն է, որ թույլ չի տալիս քարանալու, բյուրոկրատանալու, իրականությունը մոռանալու, նա է, որ մղում է առաջ գնալու:

— Ուրեմն գործերդ շա՛տ են, ընկեր Բաբկեն:

Կատակող տրտուռնջով աչքերիս է նայում:

Բաբկենը ագիտատոր է, պրոֆաշխատող:

Ժամանակ չկա:

Հետո ժպտում է.

— Բայց աշխատանքը լավ բան է,— ասում է նա և ի միջի այլոց օգնում է, որ բանվորները շուռ տան ցեմենտով լի վագոնիկը արկղի մեջ (Բաբկենի մշտական գիծը, որ միշտ նկատել եմ

առաջներում: Նա մի րոպե անգործ չի կարող կանգնել և չի կարող օգնության չհասնել այնտեղ, ուր ինքն անմիջական կապ չունի գործի հետ).— լավ բան է աշխատանքը, ուրախ բան է:

Աշխատանքի մեջ փոխվում ես, ուրիշ բան ես դառնում, սովորում ես, նոր բաներ ես հասկանում, առաջ ես գնում:

Այս ոգևորիչ ու առաջացնող խոսքերի ջերմությամբ համակված հրաժեշտ եմ տալիս Բաբկենին ու Գևորգին:

Դալլաքյան Հայկի բրիգադի մոտ եմ: Նա շարունակ մի տեղից մյուսն է վազում և հրամանատարի պես «կրակն ուղղում» այս ու այն կետի վրա:

Քարաբեկորներն ուղղակի կպել են իրար ու չեն ուզում բաժանվել:

Հոժկու բանվորը քլունգը խրել է արանքը և ճոճում է:

— Հա, հա, եղպես, զոռով կլի, խաթրով չի ըլի,— քաջալերում է բրիգադիրը:

— Բայց քարաբեկորը համառում է:

— Հը, չի ըլո՞ւմ:

— Իր կամքն ա՞, որ չըլի,— պատասխանում է տաքացած բանվորը:

ԸՆՏՐՈՂՆԵՐԸ

(Էջ 170)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1938, № 21: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԽՈՅԱՐԱՐԸ

— Կուզե՞ք տեսնել խոհանոցը:

Խոհանոցը:

Իսկույն պատկերացնում ես ահագին կաթսաներ պլիտի մեջ ամրացրած, կրակը տակին փոփռալիս, խոշոր շերտեր, աման-չաման և թևերը քշտած խոհարարը, որ բթացած դեմքը կերակրի շոգիին բռնել՝ խառնում է: Խոհարարը, որ ծառայում է հասարակության ստամոքսին, որը կյանքից մի ճաշակ ունի միայն՝ գաստրոնոմիական: Որի համար մարդիկ միայն ուտում-խմում են: Որի գործի գերազանցությունը, որակը մարդկային որովայնի հղիացումն է: Եվ բթացնելով մարդկային օրգանիզմը, ինքը ևս բթանում է, գիրանում, դառնում է ճարպագունդ:

— Գնանք, հետաքրքիր է:

Դուռը փակ է: Ուղեկցողս թխկացնում է: Մի խելացի, սիրալիր դեմք նայում է բացվող դռան արանքից:

— Համեցեք:

Ինքը խոհարարն է: Վարիչը խոհանոցի և սեղանատան: Դե կարևոր ֆրոնտ է նաև խոհանոցը: Բայց խոստովանենք, այդ կարևորությունը մենք շատ անգամ ըմբռնում ենք նույն չափ, որքան աստղագիտության կարևորությունը: Այսինքն՝ վնաս չունի, թող լինի նաև այդ:

Ընկեր Գրիգորյանին բացատրում է:

— Սեղանատունը երեք բանի է ծառայում, կուլտ բաժին, ակումբ, սեղանատուն: Երևակայում եք նրա մաքրությունը... Բա: Տարի ու կես է այստեղ եմ: Ես հիմնեցի ճաշարանը և մտքումսդի կատարելագործել: Մի կարծեք թե կարևոր չէ այս գործը: Այս հասարակական սնունդն է նրա գոյության հիմքը:

— Դիմագրկության դեմ ի՞նչ միջոցներ եք ձեռք առնում:

— Ամենքն իրենց գործին են ամրացրած, որոշ և հայտնի, ո՞վ կարող է դիմագրկություն անել: Ստուգում ենք և կարող ենք ստուգել:

— Ես հարցնում եմ. ամեն բանվոր ունի՞ իր առանձին, մշտական տեղը, ամանները և այլն, իմանա իր համարը:

— Այ հենց դրան էլ ձգտում ենք: Ակումբը բաժանել տվի, սպասում եմ մայիսի մեկին, որ կուլտբաժինն էլ հեռանա, այն ժամանակ սեղանատուներ կդառնա սեղանատուն: Էնպես սարքենք, որ քեֆներդ գա: Ապա մի կերակուրները տեսեք:

Ինչպես նկարիչն ասեր— ապա տեսեք կտավները:

— Վատ չէ, այնպես չէ՞: Ահա սա սուպ, կարող է բանվորը նաև բորշ վերցնել: Սա էլ կաշա: Ահա յուղը, տեսեք: Սա էլ լոբի կիրկաշ: Հիվանդների համար ջուկ դիետիկ կերակուրներ ունենք: Ահա:

Ցույց է տալիս բրնձով-կարտոֆիլով սուպ, կաթնեսպաս և կիսել:

— Երկրորդ կատեգորիա ենք, հասկանում եք: Բայց ինչ-որ ձեռքներս ընկնում է՝ լավ ենք պատրաստում, մաքուր, համով: Սա էլ մեծ նշանակություն ունի:

— Դուք հարվածային եք անշուշտ:

— Առաջ քաշված հարվածային,— ասում է ուղեկցողս: Երկու անգամ պարզևատրված է:

— Առաջ որտե՞ղ էիք:

— Չանագան հիմնարկներում: Շատ առաջ Անդրկասպյան երկրում, Բաքու: Ծը— չփացնում է լնդերքով,— առաջ ուրիշ բան էր: Առաջ ուրիշի փորն էինք լցնում: Առաջ ո՞վ էր մի բանի ձգտում: Բայց հիմի տեսեք, ես ոգևորված եմ (ուղղակի այս բառն էլ գործ է ածում): Ինչու... Որովհետև սա հասարակ գործ է: Այստեղ զգում ես, որ հավասար մարդ ես և կարևոր գործի վրա ես, Լենինն ասել է մեր մասին... Ուղղակի սիրում եմ գործը, հասկանում եք: Խոզանոց ունեմ, ես ինքս եմ հսկում: Տասնհինգ խոզ ունեի, 9-ը մորթել ենք: Վեցն էլ... ծանրած են, հասկանում եք, չուզեցի ձեռ տալ: Բայց պիտի բազա ստեղծեմ ինքնամատակարարման: Ամեն բան դրսից սպասելը լավ չէ: Հա,— հիշեց հանկարծ,— երեկոյան ծուկ ունենք, ապա մի տեսեք:

Եվ տանում է մյուս բաժինը, ցույց է տալիս ձուկը, վերցնում է մեկ-մեկ ափի մեջ, թափահարում:

— Բայց սնունդի որակի և քանակի վրա մեծ կռիվ ունեմ: 7-րդ և 8-րդ կոչման ռայխորհուրդներում ընտրվել եմ և այնտեղ դնում եմ շարունակ սնունդի բարելավման հարցը: Պետք է: Ձեռներդ ծալած որ նստես, գործը կմնա իր տեղը:

— Ուրեմն ուրիշ տեղ էլ եք աշխատում:

— Բա հասարակական բեռնումն... ինչպես կարելի է առանց դրան:

Ես նայում եմ նրան և մտածում: Ինչո՞ւմն է բանը: Մի՞թե սա կուրիոզ է, օրիգինալ այս մարդը:

Ահա նա՝ բոլորովին ինտելիգենտ դեմքով, խելացի, ժպտուն աչքերով մի մարդ, ոգևորված իր գործով ցույց է տալիս, բացատրում է, հայտնում է իր պերսպեկտիվների մասին: Այստեղ մի բան կա, որ պետք է նշել: Արդյոք խոհարարն է փոխվել, առաջվա բթացած տիպը, որ ծառայում էր մարդկանց որկորին և հիմա խոսում է Լենինի, Ստալինի և հասարակական բեռնման մասին: Այո, նա փոխվել է, նա հիմա նոր մարդ է, նոր տիպ, խորհրդային, հասարակական մարդու տիպը: Նա փոխվել է: Ուրեմն ինչու՞մն է բանը: Ինչո՞ւ եմ ես «հետաքրքրությամբ» զննում այս մարդուն, որ գրավում է իմ ուշադրությունը գործարանի այս անկյունում, «երկրորդական» մի բնագավառում:

Այո ես եմ, որ չեմ փոխվել և ինձ հետ միասին հազարավորները, որ խոհանոցի գործի վրա նայում եմ առաջվա աչքերով: Մենք պիտի փոխվենք:

Եվ նոր գործը նոր մարդու հետ գալիս է փոխելու մեզ:

Այո, հասարակական գործ է: Եվ սոցիալիստական շինարարության մեջ սա էլ ֆրոնտ է:

«Եվ կարևոր»— ինչպես ասաց ընկեր Գեորգոբիանին:

Ափսոս, որ չենք կարող լսել այն ինտոնացիան և շեշտը, որով նա ասաց այդ «կարևորը»: Այդ ձայնի մեջ արձագանք կար մեծ, բարդ և կարևոր գործի:

Սոցիալիզմի:

ԽՈՐԱՐԱՐԸ

(Էջ 120)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1932, № 4: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԽՈՐՉՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատուհանիս դիմացի տեսարանը տափակ կտուրներով հին տներ են, թաքնված բակեր, ծառերի մեջ կորած մի տարածություն, ապա գալիս է բլուրը, որի կրծքին սև, խառնիխուռն քարեր են երևում— դա հին գերեզմանատունն է:

Ոչինչ ըստ երևույթին չի խանգարում այդ բլրանիստ քաղաքամասի քնկոտ հանգիստը:

Երևանի այդ անկյունը մի տեսակ այգեստան է, ինքնամիտ մի վայր, ուր ծաղկում է հին Երևանը:

Հագիվ երբեմն շան հեռավոր հաչոց է գալիս այգիների խորքից, կամ կաչաղակի կռնչոց ծառերի արանքից:

Մի սարյակի ընտանիք է ապրում դիմացի ընկուզենու ճյուղի վրա: Ոչ բույն, ոչ ապաստան: Մի ճյուղ միայն— դա է նրանց բնակատեղին: Գարնան գալիս են, ամառը մնում այնտեղ, աշնան գնում: Երեք տարի տեսնում եմ նրանց կյանքը, ճանաչում եմ նրանց:

Կատարյալ հովվերգություն: Խաղաղ ինչպես ուղտի ականջում: Ոչինչ չի փոխվում այդ քաղաքամասում: Դեղնավուն ցեխապատներ, ծառերի կատարներ, թռչուններ և կատուներ՝ տափակ կտուրների վրա:

Բայց երկու տարի է մի ինչ-որ շենք՝ պատռելով դեղնավուն պատերը գլուխը վեր է հանում ծառաստանի միջից:

Ո՞վ է այդ հյուրը...

Թխկոց ու չխկոց է լսվում նրա պատերի տախտակամածից:

Որմնադիրները սողոսկում են, ելնում, իջնում: Շենքը բարձրանում է և տիրականորեն նայում իր շուրջը:

Հին տները կքած ծերուկների պես, դեղնած դեմքերը դարձրել դիտում են նորեկին, անծանոթի անախորժությունը զգալով, բայց լսում են և ընկնում իրենց հին խոհերի ծովը:

Օրերն անց են կենում:

Բլուրի կողմից ահա երեք տարի է թնոյուններն են լսվում: Չեմ իմանում— ջրանցքի համար ժայռն են պայթեցնում, թե հրանոթի վարժություններն են պարզապես: Թնոյունները սաստկանում են, մոտենում: Չվերջացա՞վ ջրանցքի գործը, ժայռը դեռ չէ՞ ճեղքված, և վերջապես ի՞նչ են քանդում, որ չի վերջանում:

Երեք տարի է այդ թնոյունները գալիս են, բայց ի՞նչ է կատարվում այն կողմը— չգիտեմ:

Սարյակները կրկին եկան այս գարնան և աշնանը գնացին, ծառերը մերկանում են, մոտ է ձմեռը:

Նույն տեսարանը, նույն անդորրը, նույն ծանոթներս— կաչաղակները, հավերը, շների խուլ հաչոցները: Արդեն գիտեմ, թե դիմացի խուլ ու նեղ փողոցը ո՞վ է մտնում և ո՞ր ժամին, ո՞վ է անցնում անկյունը և թաքնվում գնում իր նկուղը:

Ե՞րբ պիտի այս կիսավեր տները կամ շինվեն, կամ քանդվեն: Դա մի թաղամաս է, ուր բավիղային ուղիները տանում են ո՞վ գիտի որ միջնադարյան ծակուռը, խոնավ ու տխուր...

Վերջապես դիմացի տան պատն ու այգին, որ բռնում են տեսարանը...

Մի օր էլ դեպքի բերմամբ ընկերներով գնացինք դեպի դիմացի բլուրն զբոսնելու:

Բայց ի՞նչ պարզվեց:

Ամբողջ տարածությունը իմ բնակարանից մինչև գերեզմանների բլուրը մի ահագին քաղաքամաս լցված է նորագույն մեծ շենքերով: Գեղեցիկ ոճ, ահագին կորպուսներ, բազմաթիվ մասերով:

Շենքերի մեծ մասն ավարտված է, կան որ պատերը բարձրացած են, մյուսների հիմքը դրված:

Մի մասն էլ բնակեցրած են:

Դա մի փոքրիկ քաղաք է արդեն ուղիղ փողոցներով, ուրախ տեսքով:

Շենքերը փռված են Գնունու¹ փողոցի, գերեզմանաբլուրի ամբողջ տարածությունը և գալիս հասնում են ուղիղ իմ բնակարանի առջև:

Մի երկու տուն էլ եթե քանդեն՝ իմ բնակարանի առջև կբացվի ամբողջ քաղաքամասը— նոր քաղաքը:

Եվ այդ բլուրը իմ բնակարանի, իմ քթի տակին...

Երեք տարի է իմ քթի տակին նոր քաղաք է կանգնում և ես չեմ տեսնում:

Տեսել եմ հիդրոշենը, բամբակագույնը, Գյուլբանկը, Նոր հյուրանոցը, Հողփողկոմատի շենքերը, Համալսարանի շենքերը, Լենինականի Տեքստիլը, բազմաթիվ մեծ ու փոքր շենքեր, բայց չեի տեսել իմ բնակարանի առջևի, ինձ մոտիկ կանգնվող քաղաքը:

Հայաստանի խորհրդայնացման 7-րդ տարին...

Պետք է խոստովանել, որ երևանաբնակներս բավական անտեղյակ ենք մեր շինարարության: Չենք շրջում, չենք որոնում, չենք հարցնում:

Քանաքեռի բլրից նայելիս միայն պարզ երևում է, թե ինչպես հին քաղաքի ընդերքը պատռելով գետնից դուրս է գալիս նոր քաղաքը:

Երևանի տեսքը փոխվում է և արագ թափով: Վերևի այգիների ծառերի միջից կարմիր, սև քարերի և գեղեցիկ ճարտարապետական ոճի խաղերով հյուսվում են սքանչելի տեսարաններ՝ Նոր Երևանին հատուկ: Քաղաքը գեղեցկանում է:

«Հայաստանի շինարարությունը» լրագրական դարձված չէ, չի կարելի կարմիր թանաքով ջնջել: Դա առարկայական փաստ է, քարի, բետոնի, երկաթի շոշափելի փաստ, որ անհերքելի է խոսքերով...

Խորհրդային Հայաստանի շինարարությունը սկսվեց դանդաղ, շարունակվում է հաստատ քայլերով ու մոտ է այն օրը, որ կստանա տարերային թափ, մեծ համեմատությամբ:

Խորհրդային Հայաստանին պետք է խաղաղություն և ժամանակ միայն:

Եվ մի փոքր էլ «քթի տակին» եղած փաստերը տեսնելու առիթներ և կարողություն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Էջ 68)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1927, № 272: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Գնունի փողոց— պրոֆեսիոնալ հեղափոխական, մարքսիստ Բոգդան Կունյանցի (1878—1911) անվան փողոց Երևանում:

Արտատպված է՝ Գերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԿԱՏԱԿՆԵՐ

Արևածաղիկը ողջ օրը հետևում է արևի շարժմանը և շարունակ դեմքը նրան դարձրած այդպես պահում է նրա ծագումից մինչ մայրամուտը:

Իսկական արևապաշտ:

Չրադաշտական...

Երևակայեցե՛ք: Ամբողջ կյանքում լարված հետևում էր իր առողջության, կատարում էր առողջ կենցաղի բոլոր կանոնները, զգույշ էր ամեն մի վնասակար բանից և ի՞նչ... վերջը... շատ երկար ապրեց:

Իսկ նրա բարեկամը, որ ընդհակառակը, անհոգ էր այս բոլոր բաներում, անկանոն կյանք էր վարում, երևակայեցե՛ք... նա ևս երկար ապրեց:

Բայց ահա արդեն մի ուրիշը, որ և հետևում էր, և չէր հետևում կենցաղի կանոններին... նա ևս երկար ապրեց:

Փոքրահասակների ուսուցչուհին ելույթ ունեցավ գրողների գրական երեկոյին: (Ավելորդ է ավելացնել՝ մեծահասակների...):

Հիմա՝ խոսում է այսպես.

— **Երեխաներ:** Ուրեմն՝ այսպիսով, մենք տեսնում ենք... պետք է կարծել որ... Ես հույս ունեմ, որ երեխաներ, դուք մեր մանուկների ընթերցանության համար կտաք լավ գրքեր... Ուրեմն այսպիսով, երեխաներ, սպասում ենք ձեր պարտականության կատարմանը:

Շատ ծիծաղեցին:

Հագիվ գլխի ընկավ...

Շատ գրողներ նման են շոֆերի, որը մեքենան քշելիս՝ կարծես ստարտից թռչում է դեպի ֆինիշ, շտապում է արագ հասնել տեղ և տանից-օջախից հեռու՝ եթե երկու րոպե ուշ հասնի: Նրան շահագրգռում է այս երկու կետերից վերջինը միայն:

Ինձ՝ իբրև գրողի շահագրգռում է այս երկու կետերի միջին տարածությունը: Այնտեղ է կյանքը, ապրումները, խոհերը, տարածության զգացումը և ամեն բան:

Մի՛ թռչեք, կա՛նգ առեք ճանապարհին, դիտեցե՛ք, խորացե՛ք:

ԿԱՏԱԿՆԵՐ

(Էջ 240)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. II, 1956: ԳԱԹ ԴՖ N 403 պահվում է մեկ թերի ինքնագիր: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Չնայած որ «Երկոմտրեստը» հիմնավոր կերպով ջարդեց մեզ ճամփին, բայց այնուամենայնիվ Երևանի Գեղաշխի քաղկոմի շեֆընկալներս հասանք տեղ. № գունդը, որի կազմակերպման 8-րդ տարեդարձն էր տոնվում այդ օրը:

Մեզ դիմավորեցին ամուլգ, ամուղջ, չստլիկ կարմիրբանակայինները:

Առաջին ծանրակշիռ պարտականությունն եղավ շեֆընկալների և ենթաշեֆ բանակայինների լուսանկարումը, որից հետո, քանի որ դեռ վաղ էր՝ ցրվեցինք զորանոցի մասերը, բակը՝ դիտելու մեր կարմիրբանակայիններին:

Նրանք խմբված էին մարզադահլիճի շուրջը, ուր հավաքված էին նաև պիոներները և մարզական վարժություններ էին անում: Շրջեցինք բակը, ուր ծառատունկ էր սկսված և արդեն բսնել էր: Ակումբի վարիչի օգնականը մեզ տարավ զորանոցի ներսը: Միանգամայն մաքուր հատակը, դռները, անկողիները, լուսավոր սենյակներն ու թարմ օդը զվարթ տպավորություն էին անում: Լենինյան անկյունները իրենց առանձնահատուկ լուսավորությամբ տրամադրում էին ընթերցանության:

Պատի թերթերը լցվում են բանակում գրագետ դառած բանակայինների հոդվածներով, ուր շոշափվում են իրենց կյանքի հրատապ խնդիրները: Ուղղագրությունը զոհ է բերած անմիջականության, նախնական աստիճանի գրագետի ազատ արտահայտության: Եվ դա շատ լավ է: Գրելով կտավորեն, թող զինվորական մասսան անմիջապես խոսի, առաջ գա: Աչքի ընկնող ինքնուս նկարիչ է կարմիր բանակային Մուսոյանը: Ակումբի վարիչի օգնականը, որը հասարակ կարմիրբանակային էր՝ ամենալավ օրինակն է բանակային ակտիվի:

Բոլոր բացատրությունների մեջ— զուտ զինական և քաղաքատիրական— նա խոսում էր այնպիսի ընտիր տերմիններով և լոջմոլությամբ, որ՝ բացի հաճելի՝ այդտեղ զգացվում է գիտելիքների և բնագավառների այն ընդարձակ ծավալը, որ ընդգրկում է բանակայինի ուսուցումը:

Տեսանք մաքուր խոհանոցը, կոկիկ կոոպերատիվ խանութը և դուրս եկանք բակը:

Այստեղ սկսվել էր կարմիրբանակայինների և պիոներների հանդիպման հանդիսավոր արարողությունը, որի ժամանակ ողջույնի ճառ ասվեց պիոներական բյուրոյի կողմից, որին պատասխանեցին կարմիրբանակայինները:

Իսկ ներսը, սրահում, բացվեց հանդիսավոր նիստը, ուր ճառերով և ողջույնի խոսքերով հանդես եկան գնդի պահեստի հրամանատարը, ներկա հրամանատարը, շտաբի և Քաղբաժնի կողմից ընկեր Վեգիրովը: Երևանի Գեղաշխի քաղկոմի կողմից՝ ընկեր Թեմզյան, տեղի գավկոմի կողմից ընկեր Գարագաշ, Կոմերիտմիության գավկոմի կողմից ընկեր Աղավնի, կին բաժնի կողմից ընկեր Ասյա, կարմիրբանակայինների կողմից ընկեր Դավթյան, ընկեր Սարգսյան, գնդի կոմբեժի քարտուղարը, և մի քանի խոսքով նաև տողերիս գրողը:

Վերհիշվեցին գնդի մարտական անցյալից որոշ մոմենտներ, ընդգծվեց, որ այդ մարտական անցյալի դեպքերը, ուր գունդը մասսայորեն և անհատաբար ցույց է տվել հերոսական օրինակներ՝ կուտակվում է և կազմում գնդի պատմությունը և ավանդությունը, որ կրթում է գնդին և դառնում նրա ոգին:

Նկատելի էր կարմիրբանակայինների բարձր տրամադրությունը: Նրանք ջերմ ծափահարություններով ծածկում էին չխոսողներին, որով քանի գնում երեկույթը տաքանում էր և խանդավառվում: Գնդի հրամանատարը հազիվ կարողացավ սկսել իր ճառը, որ խանգարվում էր ուռանների և օվացիանների տարափից...

Երևում էր, որ կարմիրբանակայինները շատ են սիրում նրան: Նրա ճառը «ուռա»— ճառ չէր: Անգամ այդ հանդիսավորմոմենտին ընկեր հրամանատարը գնդի գովասանքների հետ միասին մի առ մի ընդգծեց այն հետագա նվաճումները, որին պետք է ձգտի գունդը:

Ընկեր Սարգսյանը, որին նույնպես խանդավառ ծափահարությունների առարկա դարձրին կարմիրբանակայինները՝ իբրև կարմրադրոշ բանակի բարձրագույն պարզևի արժանացած կարմիրբանակայինի՝ խոսեց այն մտքով, որ գուցե չպետք է հանգիստ քնի իր փառավոր անցյալի դափնիների վրա և պիտի զգաստ աշխատի իր թերությունները վերացնելու: Գնդի զինկոմը վերհիշեց գնդի մարտական և քաղաքական անցյալը, քաղաքացիական պատերազմի դրվագները, որ գնդի քաղաքական դաստիարակության գորեղ գործոնները պետք է լինեն: Կարմիրբանակայինների ոգևորված ծափահարությունների և ուռանների տակ փակվեց իրենց ուսուցչի այս ճառը ևս:

Այդ օրը զինական մրցություններ էին եղել, որի մեջ գնդի գնդացրային դասակը տարել էր մրցանակը: Գնդի հրամանատարը բեմից հայտարարեց և ընծաները մատուցանելով բացատրեց.

— Ածելվելու պարագաները՝ դասակին, իսկ այս ջրամանը դասակապետին, որ սառը ջուր խմի և լինի գլխով սառը, իսկ սրտով տաք...

Գեղաշխի քաղկոմը նվիրեց 4 շաշկի, 5 շախմատ և գրականություն:

Այնուհետև շեֆընկալների կողմից տրվեց պարերի և երաժշտության երեկո: Հանդես եկան ընկ. Վահրամի խորեոգրաֆիական ստուդիայի աշակերտները¹: Եղավ երգ և նվագածություն:

Երեկույթը փակվեց գիշերվա ժ. 12-ին մոտ:

Երեկոն անցավ շատ ուրախ և մի փոքր էլ մազալու— ես էլ քարվան խառնվեցի իմ ջութակով, որ տեղի չէր ունենա, եթե շեֆընկալներին ծրագիրը վերջին օրը չփոխվեր անկախ պաճառներով — Պետկոնսերվատորիան² չէր կարող մասնակցել, ինչպես որոշված էր, իսկ գուցե էլ չէր կարելի թողնել՝ առանց երեկույթի: Ուստի և ծրագիրը մի փոքր աղքատ եղավ: Ոչինչ, մյուս անգամ:

Գիշերվա ժամի 11 և կեսին հրաժեշտ տվինք գնդին և սկսեցինք ջարդ ու փշուր լինել «Երկոմտրեստի» վրա դեպի Երևան...

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

(Էջ 77)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1928, № 123: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Երևանի խորեոգրաֆիկ ստուդիան հիմնադրվել է 1921 թ. դեկտեմբերին: Ստուդիայի աշխատանքները գլխավորել է պարարվեստի մասնագետ (կրթությամբ բժիշկ) Վահրամ Արիստակեսյանը (ծնվ. 1899 թ.):

2 Երևանի պետական կոնսերվատորիան բացվել է 1923 թ. դեկտեմբերի 1-ին:

ԿԱՐՄԻՐԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԸ

1. ԸՆԾԱ

Չեմ հիշում կայարանումն էր, թե բանկոտայի խանութում:

Կանգնած էինք հերթի:

Ներեցե՛ք, սխալվում եմ: Հերթի մեջ էինք, բայց չէինք կանգնած: Իրար բոթում, դես-դեն էինք ընկնում, առաջ քշում, հետ մղվում:

Իսկական սվինամարտ:

Իսկ թշնամին, գործակատարը հանգիստ կանգնած էր իր դիրքերում: Մեր գրոհը, ահագին բազմության գրոհը նրան չէր վրդովում:

Նայեցի բազմությանը: Ո՛վ ասես չկար: Կին, երեխա, ծեր, երիտասարդ, գյուղացի, քաղաքացի: Բոթում են:

Դարձա հետ, ինձ անմիջապես կպած մի երիտասարդի.

— Ինչի՞ ես բոթում:

— Բա ի՞նչ անեմ:

— Ո՞նց թե: Բոթելո՞ւ համար ես աշխարհք եկել: Էլ ուրիշ գործ չունե՞ս:

— Բանի՞դ նայիր:

Ասաց ու բոթեց ավելի կոպիտ:

— Լսի՛ր,— ասի,— դու Կարմիր բանակում եղե՞լ ես:

— Ոչ,— ասաց դժգոհ ձայնով:

— Դե որ չես եղել,— ասի,— բոթիր, ինչքան ուզում ես:

Խառնվեցինք իրար: Քիչ-քիչ առաջ էինք գնում: Մի քիչ հետո այնքան մոտեցանք գործակատարին, որ ապրանքն երևաց:

Այստեղ արդեն ոչ թե բոթում էին իրար, այլ փրթում, թռցնում:

Կրկին հետ նայեցի: Մի երիտասարդ էլի: Կազմվածքի, դիրքի շարժումների մեջ մի ինչ-որ կանոնավոր բան կար: Բոթում էր, բայց ինձ թվաց, թե ինքը չէր, այլ ինքն էլ այլքի պես ինձ էր դիպչում: Գուցե և ինքն էր բոթում:

— Ընկեր ջան, ինչի՞ ես բոթում:

— Շտապում եմ, ի՞նչ անեմ:

— Ես էլ եմ շտապում:

— Բայց ես ավելի եմ շտապում, պիտի գնամ գյուղ: Ճամփա տվե՛ք:

— Ոչ, չեմ կարող:

Մի քիչ հետո կրկին նայեցի նրան:

Դեմքին ինչ-որ կանոնավոր բան ինձ գրավեց:

Բայց ի՞նչ կանոնավոր բան: Գիտակցություն, հանդարտություն, կա՞րգ, դիսցիպլինա՞:

Այո, կարծես այդպես մի բան: Հետո շորերը: Գյուղացու շորեր էին: Չէին սազում նրան: Նա ավելի կուլտուրական ֆիգուրա ուներ, քան իր արխալուղը և տրեխը:

— Դուք Կարմիր բանակում եղե՞լ եք,— հարցրի հանկարծ:

Նա մեղմ ժպտաց.

— Այո: Անցյալ տարի եմ գորացրված:

Հետ քաշվեցի և ճամփա բաց արի.

— Համեցեք առաջ:

— Ինչո՞ւ:

— Այնպե՛ս: Ի պատիվ նախկին կարմիրբանակայինի:

Նա մի քիչ էլ հետ քաշվեց, որ ինձ չբռնի և ասաց.

— Ո՛չ, ընկեր, դուք ընկեք առաջ:

— Ախր դուք շտապում եք գյուղ:

— Գյուղը տեղից չի փախչի, ոչ էլ ապրանքը: Ինչ որ դուք ինձ ընծա տվիք դա ամեն բանից բարձր է:

— Նաև ձերը բարձր է, ընկեր:

Չգիտեմ մեզնից որի՞ ընծան ավելի մեծ էր:

Բայց մենք իրար նվիրեցինք ամենամեծ ընծան:

2 ԵԶԸ

Մի սայլ էր կանգնած ամայի փողոցում: Չորս ակները խրվել էին ձյան մեջ և մի գույգ եզներ չէին կարողանում, ըստ երևույթին, քաշել ցորենի տոպրակներով բեռնած սայլը:

Եզներն առողջ էին և ուժեղ: Սայլապանը կարող էր զոռել, ծեծել: Եվ իրոք, եթե ծեծեր, նրանք սայլը կհանեին ձյան միջից: Երևի հանգստացնում էր եզներին: Հետո էլ թվաց, թե ինքն էր հանգստանում կամ ծխել էր ուզում:

Թերևս և ծուլանում էր...

Նայեցի իրան: Հագել էր նոր բրեզենտի վերարկու, բարձրավիզ կոշիկներ: Ինքն ամրապինդ, առողջ և հանգիստ:

Մի քիչ հետո նկատեցի, որ սպասում է մեկին:

Եվ իրոք փողոցի ծայրին երևաց մի երիտասարդ, որ եզան հետ վազում էր:

Բայց վազում էր ուրիշ տեսակ: Մի ձեռքը դրել էր եզան մեջքին և ինքը նրա կողքից վազում էր միաքայլ և տակտով: Եվ ուրախ-ուրախ բարձր հաշվում էր:

— Մեկ-երկու, մեկ-երկու, մեկ-երկու, մեկ-երկու:

Եզն էլ վազում էր,— Մեկ-երկու, մեկ-երկու, մեկ-երկու, մեկ-երկու:

Եվ կարգին: Այնքան կարգին, որ երիտասարդը հաշվում էր.

— Մեկ-երկու, մեկ-երկու, մեկ-երկու, ձա՛խ, ձա՛խ, ձա՛խ:

Եզն էլ կանոնավոր՝ «ձախ», «ձախ»...

Այսպես մեկ-երկու, մեկ-երկու, հետո՝

— Կա՛նգ առ:

Ու թևը բռնեց եզան աչքերին:

Եզը կանգնեց:

— Հետ դարձ:

Շուռ տվեց եզանը:

Սպասող սայլապանը հանդարտ առաջ եկավ, բռնեց եզան գլխից և լծեց:

Անցա: Մի քիչ հետո սայլը շարժվեց և շարժվեց առանց եզներին ծեծելու, առանց սայլապանների բղավոցների:

Կարիք չկար հարցնելու:— Երկուսն էլ նախկին կարմիրբանակայիներ էին:

Կարմիրբանակայինը ճանաչվում է զորացրված ժամանակ:

Դա միայն նրա կազմվածքի շիտակ գծերը չեն:

Նրա աչքերում նկատում ես և՛ վճռականություն, և՛ զգոնություն, և՛ գիտակցություն:

Կարմիրբանակայինը բանակից հետո մտնում է միլիցիա, կոլխոզ, գործարան, հիմնարկ և բերում է կարգապահություն, կուլտուրա:

Նա հեղաշրջում է մեր կուլտուրան: Նա ինքը մի կուլտուրական հեղափոխություն է բանակը թողնելուց հետո ևս կյանքում:

ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԸ

(Էջ 158)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1935, № 4: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Մեր կառավարությունը ֆաշիզմի գրոհի դեմ հայտարարեց հայրենական պատերազմ:

Ի՞նչ է դրա խորհուրդը: Պատերազմներ շատ են մղվել: Հարձակվել են պատերազմով, պաշտպանվել են պատերազմով: Հաղթել են պատերազմ սկսելով: Հաղթվել են պաշտպանվելով: Եղել է, որ մղել են ռևանշի պատերազմ— հատուցել են, վրեժ հանել և կրկին կամ հաղթել են, կամ հաղթվել:

Բայց հայրենական պատերազմը միշտ հաղթել է: Թերևս լավ կլիներ ուրիշ կերպ կոչել այդ պատերազմը: Որովհետև բոլորովին այլ է սովորական պատերազմը և այլ՝ հայրենական պատերազմը: Մեր փոքրիկ հայրենիքն ունեցել է շատ պատերազմներ: Արշակունիներից¹ սկսած մինչև Ռուբինյանները² մղվել են բազմաթիվ կռիվներ հաղթությամբ ու պարտությամբ: Բայց հայրենական պատերազմները միշտ առանձին տեղ են գրավում մեր պատմության մեջ: Նրանք մնացել են ոչ միայն գրքերում, նրանք վառ տպավորվել են ժողովրդի հիշողության մեջ: Հայ ժողովուրդը նրանցից էպոսներ է հյուսել: Հայկն ու Բելը՝ դա հայ ժողովրդի պայքարն է եղել ասորեստանյան բռնակալների դեմ, ինչպես Սասունցի Դավիթը՝ արաբական նվաճողների դեմ: Պարսկական կռիվները վառ պատկերացված են Փավստոսի գրքում³ իբրև դյուցազներգական պատմական էպոպեաներ:

Ռուս ժողովուրդը մղել է Ալեքսանդր Նևսկու⁴, Մինին-Պոժարսկու⁵, Սուվորովի⁶, Կուտուզովի⁷ և Կարմիր բանակի կռիվները: Դրանք բոլորը հաղթական կռիվներ են եղել:

Հայրենական պատերազմը ժողովրդի պատերազմն է: Դա այն պատերազմն է, երբ ժողովուրդը ինքն է կամենում մղել առանց թելադրության և քարոզի: Դա այն պատերազմն է, երբ «դանակը հասնում է ոսկրին», և ժողովուրդը օրհասական կռիվ է ելնում՝ փրկելու իր սրբազան հողը, երկիրը, ազատությունը:

Ֆաշիզմը մեր դեմ հանել է իր պողպատներն ու օդին, իսկ մենք դրա դեմ հանում ենք մեր պողպատներն ու ոգին: Ֆաշիզմը բերում է ստրկություն, բռնություն, սով, տանջանք, խավար, իսկ մենք տանում ենք ազատություն, կյանք, ուրախություն:

Ֆաշիզմը ժողովուրդ չունի իր հետևը, նրան ատում է իր ժողովուրդն ու բոլոր ժողովուրդները, իսկ մենք ունենք միակուռ մի ժողովուրդ, որին համակրում են ողջ աշխարհի ժողովուրդները:

Ֆաշիզմի պատերազմը վերին շերտերի պատերազմն է, իսկ մերը՝ ժողովրդի պատերազմն է:

Ֆաշիզմը չուզեց խաղաղ մնալ, ուզեց կռվել մեր ժողովրդի դեմ:

Մեր ժողովուրդը չէր ուզում կռվել, ուզում էր խաղաղ ապրել: Բայց հիմա, երբ ֆաշիզմը բաց արեց պատերազմի շղթաները՝ հիմա մենք էլ ենք ուրախ կռվելու, մենք էլ ենք ուզում կռվել, որովհետև վերջ կտանք ֆաշիզմին:

Այդպես էլ կլինի: Մենք կհաղթենք: Կհաղթենք, որովհետև մեր պատերազմը աշխարհիս ամենամեծ հայրենական պատերազմն է:

Մենք կբերենք հաղթություն ոչ միայն մեզ, այլև բոլոր այն ժողովուրդներին, որոնք տնքում են ֆաշիզմի ոտների տակ և սպասում են մեզ:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Էջ 174)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1942, N 19, այնուհետև ԳԹ, 1966, N26: Ինքնագիրը պահվում է ԳԱԹ ՍԳ ֆոնդ, № 130: Տպագրվում է ԳԹ, 1966, 26-ից:

1 Արշակունիներ — նկատի ունի հայոց պատմության արշակունյաց շրջանը՝ մ. թ. ա. 63 մ. թ. 428:

2 Ռուբինյաններ — նկատի ունի Կիլիկիայի Ռուբինյան հայկական թագավորությունը:

3 Փափստոսի գրքում — խոսքը վերաբերում է՝ Փափստոսի Բուզանդացույ Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832: Փափստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947, 1968:

4 Ալեքսանդր Նևսկի (1220—1263) — ռուս ականավոր զորավար: Առավել հայտնի են նրա հաղթական պատերազմները շվեդների և գերմանական ասպետների դեմ:

5 Մինին Կուզմա (Կուզմա Մինին Չախարով-Սուխորակով) — մեռ. 1618 թ., Պոժարսկի Դմիտրի Միխայլովիչ (1578—1642): Սրանք XVII դարասկզբին կազմակերպել և ղեկավարել են ռուս ժողովրդի հերոսական պայքարը լեհական և շվեդական զավթիչների դեմ:

6 Սուվորով Ալեքսանդր Վասիլևիչ (1730—1800) — ռուս մեծ զորավար:

7 Կուտուզով Միխայիլ Իլարիոնովիչ (1745—1813) — ռուս մեծ զորավար:

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

(Էջ 36)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1926, № 43: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀԱՅՐ

Երբ հարկ եղավ քաղաքը արագ կարգով էվակուել՝ ողջ ընտանիքը շատ մտածեց, թե ինչպես հետները տանեն տան զառամած տատիկին:

Մտածեցին, մտածեցին՝ բան դուրս չեկավ: Պետք եղավ թողնել նրան:

Միևնույն է, իրենք պետք է ոտքով գնային:

Ձյուն, սառնամանիք, հոգնություն, արկածներ...

Հետո՝ տատիկն էլ համարյա կույր էր, բավական խուլ, բավական խարխուլ մի շինվածք: Կգար՝ կմնար ճանապարհին... սոսկալի տեսարան:

Իսկ այստե՞ղ՝ դե ի՞նչ կարող ես անել, ճակատագիր է, մի բան կլինի, գուցե գտնվեն բարի մարդիկ, գուցե շուտով քաղաքը ետ կառնվի Կարմիր բանակի զենքով: Մի կերպ կազատվի նաև խեղճ տատիկը:

Խիստ ժամանակներ են. հնար որ չկա՝ չկա:

Այդպես էլ եղավ: Իրենք թողին քաղաքը, անցան սառած գետը, գնացին արևելք: Հետո կատարվեց այն, ինչ ենթադրում էին: Շատ նեղություն քաշեցին և բոլորովին չզղջացին, որ պառավին թողել են տանը: Այստեղ հիմա արդեն պարզ էր, որ նա անպայման կմնար ճանապարհին:

Օրեր անցան, և քաղաքը ետ առնվեց Կարմիր բանակի կողմից: Փախստականներից շատերն իսկույն վերադարձան հայրենի քաղաքը: Ընտանիքը ուշացավ. նա հեռու էր գնացել և դեռ նոր էր ճանապարհ ընկել դեպի տուն:

Մի օր, և դա քաղաքի վերագրավման չորրորդ օրն էր, երբ արդեն վերականգնվել էր լույսը, ջրմուղը և փռերը՝ փախած ընտանիքի հարևաններից մի քանիսը ներս մտան նրանց բնակարանը՝ նայեն ինչպես է տան վիճակը:

Եվ ո՛վ հրաշք...

Պառաժան ապրել էր: Ճիշտ է՝ տաժանելի օրեր էր քաշել: Համարյա կիսամեռ: Թե ի՞նչ էր կերել, ո՞րտեղից գտել և արդյոք կերել էր, թե ապրել իր հոգևարքը: Չես հասկանա: Ինքն է՛լ կարգին մի բան չասաց այդ մասին:

Մոտեցան պառաժին: Թույլ ընկած էր անկողնին: Մեռնո՞ւմ է, ի՞նչ է... Ո՛չ, կարծես ապրում է, ուզում է ապրել: Միայն չի տեսնում, չի հասկանում, թե ի՞նչ են ուզում իրենից: Նստել՝ խոսում են, նա էլ լսում է ու լռում:

Գնացին ու շտապով հացի քարտ հանեցին նրա համար: Հաց բերին:

— Առ, անուշ արա,— ասացին նրան:

— Ի՞նչ է դա,— խոպոտ ու մռայլ հարցրեց պառաժը:

Նա չար հայացքով նայեց իր այցելուներին: Չի հասկանում ովքեր են...

— Ստացիր հացդ, կեր, ուժի եկ:

Պառաժին նստեցրին տեղում, մոտեցրին հացի բոքոնը նրա մոմե ձեռներին: Նա շոշափեց բոքոնը: Բռնեց, պինդ սեղմեց, տարավ քթին և բոքոնի ձևից, հոտից հանկարծ ժպտաց կույր աչքերով և ծոր տվեց:

— Ի՞նչ, ուրեմն եկել է Սովետական իշխանությունը...

ՀԱՅՐ

(Էջ 223)

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1943, № 1, այնուհետև ԵԺ, հ. II, 1955: Ինքնագիրը չի պահպանվել: ԳԱԹ ԴՖ № 410 պահվում է մեկ մեքենագիր օրինակ: Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՀԻՂՐՈՇԵՆՆԻ ԲԱՑՈՒՄԸ¹

Գերադասում եմ ոտով: Եվ տեղ եմ հասնում թե չէ, էլ փորձ չեմ անում մտնելու կայանի շենքը— այլ ուղիղ բազմության մեջ:

Այսպես լավ է: Հիղրոշենն այնտեղ է, այդ բազմության մեջ: Նրա մեջն է և՛ հողը, և՛ ջուրը, և՛ մետաղը, և՛ կրակը:

Եվ նա—այդ բազմությունը—չի ուշացնում գրավիչ մի բանով իր մոտը քաշելու: Ռշտունցի կարճահասակ զուռնաչին դեմքի երակներն ուռցրած, գլուխը երերցնելով դժվաճանում է իր վայրի զուռնան, իսկ դիօլ ածողը բուռն զարկելով հրահրում է տազնապալից նվագը:

Մեծ շուրջպար է դառնում: Հիղրոշենի բանվորներն են, կարմիր բանդերը թևքերին: Պարում են լուրջ ու . . . հիմնավոր: Դրա համար էլ ամուր շղթայի պես կուռ օղակել են իրար թև թևի, ուս ուսի և ահա սկսել են համրատատան, պատի պես, իրար հետ, միաձուլվել: Նրանց արծվենի քթերը, ջլապիկո բազուկները և սուր աչքերն արդեն ցույց են տալիս, թե որտեղից են նրանք: Ռշտունցիներ, նարեկացիներ. . .

Դարեր են պարում նրանց պարի մեջ: Հին հեթանոսական ժամանակներ են տատանվում, կոտրատվում, ծեծծեքվում: Այդպես էին պարում մեհյանի շուրջը, հետո մատուռի շուրջը և ապա հիմա այս նոր շենքի շուրջը:

Նրանց միանում են նոր խմբեր, «բնիկ» գյուղացիներ և բանվորներ: Սրանց նայելով՝ մեջ են ընկնում պիոներներ, ապա կոմերիտ մի դերասան, մի բանթջակից և որպես լրացումն՝ կարմիրբանակայինները, որ եկել են իբր թե կարգ պահելու, բայց ամենբան կարգին է, թե պա՞րն է

ընկնում ոտները. . . չեն կարողանում հանգիստ դիտել— նրանք էլ են մեջ ընկնում և սրերն ու հրացանները ուներին չխկացնելով տաքացնում պարը: Արդեն խորհրդային Հայաստանը լրացավ:

Ռուս կարմիրբանակայինը, ատամները պսպղացնելով, ծիծաղում է սրանց գծության վրա: Բայց պարագլուխը շատ լուրջ է, և ա ինչ-որ նոր հիդրոկայան է սարքում և մի հարյուր տարվա պար է ծրագրել: Տաքացել է և «բիճա» Հարուլթը, ռշտունցի գաղթական, որ անցյալը փռել ոտի տակ՝ պար է գալիս վրան: Պարում են անցյալի վրա նրա ընկերները, ահա այն Նարեկացին, որ կրծքին օդանավային բարեկամների ընկերության նշանն ունի: Պարում է ամբողջ հայ աշխատավոր ժողովուրդը: Որքան թախիժ և ուրախություն կա այդ ամենի մեջ, որքան խորհրդանշան:

Հիդրոշենը, որ աշխարհ է եկել ջրի, հողի, քարի, մետաղի և . . . ժողովրդի միջից: Այդ մատուռանման շենքը, որի մեջ չի նստելու ոչ մի աստված և չի վառվելու ոչ մի մոմ, ուր կալանված է կայծակը, որ պիտի ծառայի ոչ թե մարդկանց ահաբեկելու, այլ լույս տալու:

Եվ այն մասսան, որը պարում է նրա շուրջը, որը դարեր շարունակ կառուցել է մեհյաններ, մատուռներ ու բերդեր և պարել է իր իշխանավորների համար, հիմա կառուցում և պարում է իր համար:

Եվ այն ռուս կարմիրբանակայինը, որը նույնպես մասնակցել է այդ հիդրոկայանի կառուցման և մասնակցել «ամեն տեսակետով»:

Եվ Օրջոնիկիձեն², Աղամալի-օլլին³ և Համբարձումյանը, որ արտասանում են ճառեր՝ նվազ պերճախոս, քան իրենց այդ գործը, իրական արդեն:

Եվ այս ամենի գլխին կանգնած այն շենքը, որի մեջ իրար են գալիս բնության «անհաշտելի» տարրերը—ջուրն ու կրակը—իբրև խորհրդանշան շատ տարրերի միացման, որ «անհաշտելի» է կարծում տգիտությունը, իբրև խորհրդանշան գիտության, աշխատանքի և բարօրության, որ կարող է ստեղծել միայն համաշխարհային աշխատավորական բանակը:

ՀԻՂՐՈՇԵՆԻ ԲԱՅՈՒՄԸ

(Էջ 42)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1926, № 117: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1926 թ. մայիսի 16-ին:

2 Օրջոնիկիձե Գրիգորի Կոնստանտինովիչ (1886—1937) — կոմունիստական կուսակցության և սովետական պետական ականավոր գործիչ: 1921—1926 թթ. աշխատել է Անդրկովկասում, սկզբում եղել է Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի կովկասյան բյուրոյի նախագահ, ապա՝ կուսակցության Անդրկովկասի երկրկոմի առաջին քարտուղար:

3 Աղամալի-օլլի Սամեդ Աղա (1867—1930) — պետական և հասարակական ականավոր գործիչ: 1921 թ. Ադր. ՍՍՀ հողժողովում, իսկ 1922—1929 թթ. Ադր. ՍՍՀ ԿԳԿ նախագահ:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՆՈՐ ԱՍՔ¹

Ասում են Կովկասի կատաղի գետերը խղիական հսկաներ են եղել, ասպատակել երկրներ, կռվել իրար հետ, առևանգել կույսերին և փոթորկալի սրընթաց արշավներով դողացրել են դաշտերն ու անդունդները:

¹ Ասք— ասվածք, պատմվածք:

Ասում են Կովկասի գոռոզ դոյակները սիրակարոտ կույսերի լուսեղեն արցունքներն են, որ նրանք լացել ու լցրել են լռանիստ հովիտների թախծալի բաժակներում: Գիշերների սև գաղտնարանում լացել են նրանք իրենց անազատ սիրո վիշտը, լացել անվերջ, ընկղմել իրենց սեփական արցունքների փերուզ լճերի մեջ:

Ասում են Կովկասի հոսող դոյակների պարիսպների հիմքում շաղախի հետ կենդանի աղջիկներ են թաղած, քարեր վրան շարած: Եվ իշխանագունների բերդերի պարիսպներից կաթում է նրանց աղի արցունքը և գիշերային մռայլը ականջ է դնում նրանց աղիողորմ միմուռները մինչև լույս:

Ասում են Կովկասի լեռների խավարակուռն զնդաններում դարերի քունն են վրդովել շղթայակապ Պրոմեթեոսներ¹, Արտավազդներ², Ամիրաններ³, որ ունայն գոռոցներով դրոդել են լեռնային անդունդները տակից ու սպառնացել դուրս ժայթքելու, կործանելու ամեն ինչ:

Բայց ո՞վ է ասել այս մռայլ ասք ու ասվածքները, ո՞վ է հյուսել այս սպառնալի, տխուր երգերը:

Խանդավառ գուսաններ՝ իրենց կրակոտ բամբիռների հնչյուններին հյուսել են այս վեպերը հնացող Կովկասի, թե՛ տխուր խրճիթների ստվերներում դարերով պատմել է այս հեքիաթները՝ անանուն, հանելուկային, հավերժական մեծ ժողովուրդը:

Հետ են գնում կորամեջք պառավ դարերը՝ շահիրների արցունքոտ սազերն ուսերին, լսում են հին երգերը ինչպես գիշերաժամի թախծալի հառաչանքներ, ցայտում է նոր դարերի առավոտը լույսի, ցնծության երգի հետ, բարձրանում են նոր մասսաներ, նոր շահիրներ:

Չնգում է նոր ասքը:

Եվ նա ասում է.

— Կովկասում ասպատակող, առևանգող, ավերող տարերային գետերը սանձվում են հիդրոների ամրակուռ պատվարներով, լծվում են ստեղծարար աշխատանքի՝ հանուն լույսի, շինարարության և կյանքի:

Հին տարերքը թափում է իրենից տիղմն ու կործանիչ բեկորը, իմաստավորում է իր տարերային թափը և փոխվում է նոր աշխատավորի և գիժ Զուռը, դարային Ձորագետը, կատաղի Ռիոնը, լոթի Արփաչայը մաքրագործվում են շինարար բանվոր գետերի: Ընկեր Զուռը, ընկեր Ռիոնը, ընկեր Արփաչայը այժմ գրված են պրոֆմիության մեջ՝ առաջվա խելթությունների փոխանակ՝ հիմա իբրև ստեղծարար ուժեր՝ լցնում են երկիրը ծաղկով, մեղրով, հացով, լուսով, գործարանների թնոյուններով:

Գետերը— Կովկասի աշխատավոր մասսաները:

Լճերը վշտերի հեղուկներ չեն այլևս, այլ ջրեր՝ կյանքի ու բարգավաճման:

Կույսերն էլ չեն ողբում իրենց անազատ սերն ու բռնության լուծը, նրանց միմուռներն էլ չեն խլանում չադրաների տակ, էլ նրանց գիշերաշուք ծամերը չեն հյուսվում անգույն բերդերի շաղախների հետ: Պարիսպները չեն բարձրանում էլ բռնության պաշտպանության համար: Հիմա պատերը սլանում են երկինք բարձրացնելով սոցիալիզմը, լեռների հաստաբեւտ զնդաններից դուրս են ժայթքել Պրոմեթեոսները, Արտավազդները, Ամիրանները, փշրտել են բռնության շղթան, ու արևի տակ հանդես են բացել: Չնգում է մի նոր ոսկի ասք գարնանացող մասսայի մասին:

ՆՈՐ ԱՍՔ

(Էջ 109)

Առաջին անգամ տպագրվել է «Արվեստի ֆրոնտում», 1930, № 2: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

1 Պրոմեթեոս (Պրոմեթևս)— հունական դիցաբանության հերոսներից մեկը, կիսաստված, որ գողացավ օլիմպիական կրակը և տվեց մարդկանց: Այդ արարքի համար Չևսը նրան շղթաներով գամեց Կովկասյան լեռներում մի ժայռի:

2 Արտավազը— հայոց լեգենդար թագավոր, որն, ըստ ավանդության, շղթայակապ բանտարկվել է Մասսի խորունկ վիհերից մեկում:

3 Ամիրան — Ամիրան Դարեջանի—Շոթա Ռուսթավելու «Վազրենավորը» պոեմի կենտրոնական հերոսներից մեկը:

Դեմիրճյանը այս երեք հերոսներին դիտում է որպես ժողովուրդների ազատագրության խորհրդանիշ:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՇԻՆԱՐԱՐՆԵՐԸ

Դա մի քառահարկ սովորական շենք է, որ այս ամառ բարձրացավ մեր տան դիմաց: Մեր բակը նեղացրին, վերցրին նրա կեսը այդ նոր շենքի համար: Եկան ինժեները, տեխնիկը, տասնապետները, նրանց հետ վարպետները, բանվորները, չափեցին, փորեցին հիմքերը, և սկսվեց կառուցումը:

Ուրիշ տրամադրություն է կապված նորակառույցի հետ: Հաճելի է նայել նրան, հաճելի է տեսնել նրա ծնունդը: Նա կարծես գետնի տակից գլուխը հանում է վեր, լցվում-աճում է որևէ հին տան բակում, ճեղքում կավե պարիսպները, ճաքեցնում նրանց ինչպես թռչունի ճուղը ձվի կճեպը, և դուրս գալիս: Մաքրում հեռացնում են կճեպները և մեջտեղ կանգնում է նորածին թռչունը— տունը: Գեղեցիկ, մաքուր, նախշուն:

Երիտասարդի է նման նորակառույցը— հուսալի և կենսալի: Նրա հետ նոր կյանք է ջերմանում: Նայում են վրան, և նա վանում է անցյալի տխուր մտքերը: Նա ինքը նայում է ապագային՝ քեզ էլ քաշում է դեպի այդ ապագան: Նա սպասում է, դու էլ սպասում ես:

Եվ համակվում ես նոր կյանքով:

Առաջին օրվանից նորակառույցի շուրջը ցանկապատվեց: Գրասենյակ, ճաշարան, հյուրանոց, առուներ, անցքեր, ուղիներ: Ձեռաց, ռացիոնալ, ամեն բան հաստատվեց, դառավ կենցաղ:

Եվ բակում այդ նոր կենցաղը մտցրեց իր սովորությունները, նոր կարգ ու կանոնը:

Դեռ նոր էր արշալույսը շառագունում, որ թաղի լռությունն սկսում էր թրթռալ: Ահա մեկ-մեկ հնչում են, լցվում քարտաշների մուրճերի տիկ-տակը: Նրանց մետաղային զնգոցները կլանում են իրար, ոստոստում առավիտվա ջինջ օդի մեջ: Մի փոքր հետո պայթում է մի խառնակոչ աղմուկ:

Երիտասարդներ են: Նրանք ոչ թե գալիս, այլ հարձակվում են հարայ-հրոցով, ուռաներով: Թվում է թե գիշերս դարան էին դրել քաղաքում և վճռելով լուսաբացին բերդն առնել՝ ահա գրոհ տվին և առնում են: Բոթբոթում են իրար, իրար մեջքի բռնցքահարում, վայր գցում, ծիծաղելով պայթեցնում այտերը: Դա աշխատանք չէ, այլ խաղ: Ուրախությունից ծղրտում են: Ո՛չ ամառվա կաշկանդիչ շոգը, ո՛չ կծող արևը, ո՛չ քար ու գերանի ծանրությունը չեն ազդում: Նրանք մոլուցքի մեջ են, կրքոտած: Աչքերում ինչ-որ տեսիլներ են խլրտում: Շտապում են,— մի հապճեպ է՝ կարծես աշխարհը մնացել է անկառույց, ու իրենք պիտի կառուցեն և հասցնեն մի ժամ հետո: Ստեղծագործական դիմ կա նրանց այդ խառնագոչ և մոլի աշխատանքի մեջ:

Հետո ուրիշ դիմ, ուրիշ հարձակում, խաղի ուրիշ ընթացք, ծանր քարաբեկորներ են գլորում, բարձրացնում, գերաններ են հաստատում լաստակի համար: Իսկ վերելակը, քարջարդ և շաղախող մեքենաները ճլվստում են, դրդում, դոփում գետինը:

Պատաշար վարպետն է միայն, որ լռախոհ կռացած պատի վրա՝ վերդիի է անում կոփած քարը, չափում ու նստեցնում շաղախի մեջ: Հաստատվեց քարը— վարպետը իմաստորեն նայում է նրանց կողքից և սրբագործում:

— Եղավ, թող մնա հավիտյան:

Ու ինքն էլ, որ առաջ հիմքումն էր, գետնի տակին՝ ահա կամաց-կամաց վեր է ելնում օդի մեջ, պատի գլուխը: Արդեն փոքր է երևում նա:

Աղմուկը չի դադարում ոչ մի րոպե: Անգամ, երբ զանգը հնչում է և շինարարները գնում են հանգստանալու, նրանցից ոմանք արտակարգ մի բան անում են պատերի տակ: Իսկ իրենք ճաշարանում կամ պարզապես քարերի վրա նստած՝ դեռ վիճում են, ծիծաղում, երգում: Հաղթական զորքի նման:

Կան որ գիշերներն էլ են աշխատում: Չարթնում են քնից: Մուրճերը զնգում են խաղաղ ու երազալից: Նրանք շատ չեն: Բազմակոչ սիմֆոնիայի մի մեղմացող շարունակության պես նրանք ձայն են պահում մի պահ, որ հետո սիմֆոնիան վերսկսվի առավոտյան:

Որքան խորհուրդ կա այս ամենի մեջ: Զուևո փախչում է, սկսում են խորհել այս շինարարների մասին: Սրանք պարզ աշխատավորներ են: Ժողովուրդը: Սկսում են խորհել նրա մասին: Դե, աշխատավոր ժողովուրդով լցված է ամբողջ աշխարհը, տեսել ենք նրա աշխատանքը և՛ հնում, և՛ ամեն տեղ— կապիտալիստական երկրներում:

Նա այլանդակվում էր, անդամալուծվում, մեռնում բռնակալ տիրոջ համար: Աշխատանքը տանջում էր նրան:

Բայց ժողովուրդը չէր ատում աշխատանքը, սիրում էր աշխատանքը:

Եվ ահա քսան տարի է, ինչ ժողովուրդը գտել է իր աշխատանքի մեջ այն, որ նրա դարավոր ծարավն է:

Ինչի՞ն է նա հիմա այդպես ուրախ, ինչո՞ւ է այդպես գոռում-գոչումով մոլուցքով վրա ընկնում աշխատանքի: Ինչո՞ւ է ուրախությունից ճչում, երգում: Իր կուշտ կյանքի, աշխատավարձի՞ համար միայն: Ոչ:

Ժողովուրդը հիմա գտել է իր հանճարի արտահայտությանը ձևերը—ահա թե ինչո՞ւ է կրքոտվում, մոլուցքի մեջ ընկնում: Նրա մեջ այրվում է իր շինարարական կիրքը հագեցնելու ծարավը: Նա կյանքից վեր սիրում է շենք ու շինություն՝ արդար, ամենքի համար, աշխարհի բոլոր աշխատավորների համար:

ՇԻՆԱՐԱՐՆԵՐԸ

(Էջ 167)

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1937, № 34: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՊԵՏՅՐԱՏԻ ՏԱԽՏԱԿԸ

Այսօր մեր Պետհրատը տոնում է իր հազարերորդ գիրքը¹:

Ինչպես ամեն հիմնարկ, ամեն կազմակերպություն, ամեն մարդ՝ Պետհրատն էլ ունի իր օրը:

Տոնական, ուրախության օրը:

Ամեն կողմից այսօր ողջույններ են ուղղվելու Պետհրատին:

Գրքի հոբելյարին, լուսավորության հերոսին:

Հիմնարկների, կազմակերպությունների ներկայացուցիչներն իրենց պատշաճ խոսքն են ուղղելու հոբելյարին:

Հազարերորդ գիրք...

Հազարերորդ գիրքը հաշված, դրած գրախանութի վիտրիններում, դարակներում, պահեստներում:

Հազարերորդ գիրք... Ահա նա դրած և մեր աչքի առջև:

Դիտեցեք նրա դիրքը, տեսքը, տառերը, թուղթը:

Ծանոթացեք նրա բովանդակության, ճանաչեցեք նրան, թող նա լինի ձեր մոտիկ ծանոթը, սրտակից բարեկամը:

1921 թվից մինչև 1929 թվի այս օրը Պետհրատի գրքի ջերմեռանդ վիճակագիրը որքան գիշերներ է լուսացրել և ցերեկներ մթնացրել գրի առնելով Պետհրատի գրքի դանդաղ թվահամարը, առաջին², երկրորդ, երրորդ, հարյուրերորդ, իննսուներորդ և վերջապես՝ հազարերորդ...

Հազարերորդ գիրք, որ ահավասիկ ձեր աչքի առջևն է:

Բայց ամեն տոնական օր՝ օր է նաև խորհրդածության:

Ահա մեր առջև հազարերորդ գիրքը:

Այսօր մարդու միտքը գնում է խորասուզվելու խորհրդային Հայաստանի ամբողջ տարածությունը՝ լուսավոր քաղաքներից՝ ավանները, գյուղերից՝ հյուղերը, մինչև քոչվորի վրանը, մինչև գոմերի մուկ անկյունը...

Մարդու միտքը թափառում է, խորհրդածում, պրպտում:

Ո՞ւմ ձեռքն է ընկած այս բոպեխ հազարերորդ գիրքը:

Քանի՞երորդ ընթերցողն է նա Պետհրատի:

Ո՞վ է նա, բանվոր, գյուղացի, կարմիրբանակային, կոմերիտ, պիոներ, ուսուցիչ, ծառայող, բատրակ...

Արդյոք կարդում է նա հեգելով, թե վարժ սլանում է գրքի վրայով, ո՞ր բառի կամ մտքի առաջ կանգ է առել նա և աչքերը սուզելով գիշերային խավարի մեջ ի՞նչ է մտածում նա, ի՞նչ է հաշվում, ի՞նչ է դարսում, անցյալի տխուր հուշերը, ներկայի ճիգն ու պայքարը, ապագայի լուսավոր տեսիլները...

Հազարերորդ գիրք այսօր. ո՞րերորդ ընթերցողն է այսօր:

Տա՛սը հազարերորդ, քսա՛ն հազարերորդ, հարյու՛ր, հի՛նգ հարյուր հազարերորդ:

Մասսան:

Որքա՛ն է այդ մասսան, որքա՛ն է մասսայացրած գիրքը:

Այդ վիճակագիրը չկա այսօր, ամենից դժվարը գտնելն է նրան:

Նա աներևույթ վիճակագիր է:

Նա թափառում է հիմա մեր երկրի գյուղերն ու հյուղերը և այս երեկո Հայաստանի իրականության տախտակի վրա գրում է մեզ անհայտ մի թվանշան:

Ահա այդ թվանշանը աներևույթ ներկով գրած, մի տախտակով ձեզ է բերվում այսօր, Պետհրատ:

Այդ տախտակն այսօր կկախվի քո այն պատվո տախտակի կողքին, որի վրա ամբողջ Հայաստանի հասարակայնությունը կարդում է.

— Հազարերորդ գիրք: Այդ տախտակը քո իսկական հաղթանակն է:

Առաջին անգամ տպագրվել է ԽՉ 1929, № 159: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնիսկ:

1 Հայաստանի պետական հրատարակչության 1000-րդ գրքի տպագրության առթիվ ԽՉ թերթի նույն համարում հրատարակվել է Ա. Մռավյանի «Կեցցե մասսայական գիրքը», խորհրդային գրողների ֆեդերացիայի ողջույնը՝ «Մասսայական գիրքը պետք է դառնա սոցիալիստական կուլտուրայի խոշորագույն լծակներից մեկը» կոչը:

2 Պետհրատի հրատարակած առաջին գիրքը՝ Կ. Մարքս, Վարձու աշխատանք ու կապիտալ, Ֆ. Էնգելսի ներածությամբ, թարգմ. Ստ. Շահումյանի, Պետական հրատարակչություն, 1, Երևան, 1921:

Արտատպված է՝ Գերենիկ Գեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՌԱԳԻՌՈՒՄ

Ջութակի հնչյուններ են ուտոտում, երբեմն սուրում, երբեմն մարում և մերթ հանկարծ սլանում երեկոյան ջինջ օդի մեջ: Հրաշալի թռչուններ են դրանք, որոնց շարժմանը հետևել չես հասցնում:

Մի երջանիկ երիտասարդ կոմպոզիտոր է անցնում Լայպցիգի գմբուխտի դաշտերով: Հովը խաղում և շնչում է նրա երկար մագերի ու լայնաթև փողպատի հետ: Նա կլասիկ է. հայեցողական մելանխոլիկ և հավասարակշիռ ու հանգիստ...

Բայց հովը նրա մագերի խռիվների մեջ դեռ խաղում է նրա պատանեկան օրերի «Ամառային գիշերվա երագի»¹ ժամանակական թրթիռներով: Նրա շուրջը ծաղկող գերմանական գյուղերի կոկիկ տների բնակիչներն իրենց հարսանիքներում եկեղեցուց հարսին տուն բերելիս նվագել են տալիս այդ ուլերայուրի «Հարսանեկան երգը»: Դա ամենաժողովրդական եղանակն է Գերմանիայում:

Երիտասարդը հրեական խանդավառությամբ (նա չի գգում այդ) խորհում է Հերդերի² մասին, որը պատմությունը դիտում էր իբրև պրոցեսի պրոգրեսիվ զարգացում, ըստ որում, այդ պրոգրեսի հիմքն էր համարում հումանիզմի նվաճումները՝ բանականություն, բարոյականություն և ազատություն: Նա առաջ է քաշում մարդկային բանականությունը, ժողովրդական ոգին...

Երիտասարդի սիրտն ուռչում է այդ վեհ մտքերի երազանքից:

Ջութակի հնչյունները հովի պես օրորվել սկսեցին անտառի բացատներում...

Երիտասարդի հոգում արձանի պես վեր ելավ մի հոյակապ դեմք: Դա նա էր, որ վերակոչեց երկրի ոգուն և որոնում էր բացարձակ ճշմարտություն, և հետո գնաց կլասիկ խաղաղության աշխարհը, այդ գեղեցիկ երևակայությունը³:

Բայց ջութակի հնչյունները ուրախությունից իրենց կորցրած ճախրում են և պարում անհնարին արագությամբ: Ահա, ահա նրանք օդում կդիպչեն մի բանի և կփշրվեն արծաթ ալիքների պես:

Այդպես էլ եղավ. նրանք ցնդեցին... Հենց որ նրանց դիպավ ռադիոյի խռպոտ շունչը:

Մենդելսոն Բարթոլդի⁴ կոնցերտը վերջացավ: Այժմ լսեցեք... Չարթնում են: Խուլ որոտում է Լևիտանի պատմական դարձող ֆրագը.

«Սովետական ինֆորմբյուրոյի կողմից»:

.

Գետնի մեջ կենդանի թաղվում են հրեաները և նրանց ճիչերը խլանում են հողի տակ... Գեղջկուհիները երեխաներին գրկներին վագում են բոցերի մեջը... Թնդանոթներն ավերում են, հրդեհները լափում են և՛ Մենդելսոնին, և՛ ինչ որ գեղեցիկ է թե «երևութականությամբ» և թե իսկության մեջ:

ՌԱԳԻՌՈՒՄ

(Էջ 221)

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ, հ. I, 1946, այնուհետև ԵԺ, հ. II, 1956: Ինքնագիրը չի պահպանվել:
Տպագրվում է ԵԺ, հ. II-ից:

1 «Ամառային գիշերվա երագ» — Մենդելսոն-Բարթոլդիի երաժշտությունը՝ գրված Շեքսպիրի համանուն պիեսի համար:

2 Հերդեր Իոհան Գոտֆրիդ (1744-1803) — գերմանական մտածող և գրականության տեսաբան: Մեծ ազդեցություն է գործել Գյոթեի և հակաֆեոդալական «Փոթորիկ և գրոհ» գրական շարժման վրա:

3 Նկատի ունի Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելին (1770-1831):

4 Մենդելսոն-Բարթոլդի Ֆելիքս (1809-1847) — գերմանական ականավոր կոմպոզիտոր, դիրիժոր, դաշնակահար և երգեհոնահար:

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՍԱԽԱԼ – ՏՈՒԹԱՆ¹

Եղե՛լ եք Սախալ-Տութան, անցե՛լ եք Էդ անապատ լեռնադաշտով: Ո՛չ մի ծառ, ոչ մի շուկ: Եվ զուր չեն ասել Սախալ-Տութան՝ մորուք-բռնող... այո՛, երբ պատանքած ձմեռը սառցե մատներով կճանկի մորուքդ ու հուպ կտա՝ նոր կիմանաս Էս բառի զորությունը: Ամառը բմբուտ գառան խոտն է նրա բնակիչը, ձիավոր հովը նրա վայրի այցելուն: Սա Էլ որ չի գալիս ու չափ գցում իր խելառ ձին, թռչում ժռռուների վրա ու պտտվում դաշտի մեջ՝ կռանում, գալարում է գառան խոտը և օձի պես շվացնում: Չըլդըր² լճի հարազատ զավակն է նա. նրա վայրի արգանդում է նա թոկերը կտրտել. Էնտեղից է փախել, ճամփին մարդ չի տեսել և սարերից չի իջել: Մռայլ ցինն է նրա խաղը դիտողը. ահա քարի գլխին ցցվել՝ նայում է իր ազատ հայրենիքին: Զամին ծռում է նրա պոչը, թռցնում փետուրը:

Ինչքան բարձր է Սախալ-Տութանը: Ապա բարձրացիր Էս մի բլուրն Էլ՝ և ձեռդ կկաշի երկնքի կապույտ առաստաղին:

Ուրիշները չեն սիրում Էս անապատի ամայությունն ու տրտմությունը. բայց դա իմ սերն է, իմ մոլությունը: Որ չեմ նայում նրա աված մաքուր դաշտերին՝ միտս է գալիս վայրենի մանկությունս: Եվ Էստեղից անցնելիս՝ ընտրում եմ ուշ իրիկունը, երբ հորիզոնի անդունդներում մարում է օրվա ճրագը և Սախալ-Տութանի ձորակներից խավար վիշապը չռում է իր սև ճանկերը և գալիս շնթռում լեռն դաշտի վրա: Նստում եմ տրոյկան, և ով որ ջարդվում է նրա վրա՝ ես հանգստանում եմ, առողջանում:

Դետք է տաք փաթաթվել. թեև ամառվա կեսն է, բայց քամիթրի պես է կտրում: Գնում եմք. ձիերը՝ զի՛լ, զի՛լ, զի՛լ, տրոյկան՝ չը՛խ, չը՛խ, չը՛խկ. իսկ Ե՛ս. ես չգիտեմ ինչ. մեջս մի վայրի կրակ է լցվում: Դառնում եմ կառապանին.

— Է՛, բարեկամ, քնե՛լ ես՝ ի՛նչ է:

Կառապանը շուռ է գալիս և ժպտում.

— Թռցնե՛մ երկու արասին:

— Ապա ի՛նչ. ինձ ինչի՞ տեղ ես դնում:

— Ի՛նչ իմանամ, աղա՛, ասում եմ չտաս:

— Է՛, սարսաղ հո չես, թոցրու:

Կառապանը հավաքում է սանձերը, փաթթում թևին, մտրակը պտտեցնում ու շրա՛խկ ձիերի մեջքին:

Կառքը սաստիկ թափահարվում է ու՝ տղա ես տրոյկից վեր մի՛ ընկնի: Թռչում է արագ, վտանգավոր և հաճելի չափերով: Ճամփի քարերը, փոսերը հալվում դառնում են մի հեղեղ, որ հետ է հոսում:

— Թռի՛,— գոռում եմ վայրենու պես: Մտրակը շվացնում է, ձիերը փռնչում, գլուխները հետ ծռում, բաշերը փոփռացնում: Ոտները ուռել, փոթ-փոթ են գալիս, աչքերը կատաղի են, քարերը կրակ են հանում:

— Տո թռի՛, հե՛րն անիծած աշխարքի:— Հանկարծ միտս է գալիս պատանության խելառություններս, թռչում եմ կառապանի մոտ, սանձը խլում ձեռներից ու թափ տալիս:

— Ահա՛ հա՛ հա՛ հա՛ պեծերդ կհանեմ,— մռնչում է վայրենացած կառապանը ու խելագարի պես ձաղկում ձիերին: Ահա մի վտանգավոր պտույտ. մոտն էլ մի փոս, քարերով լիքը. ջհանդամը, շրջվում է՝ շրջվի:— Տո քշի՛...

Ձիերը եռում են, եռում ես դու էլ. թռչում ենք պտույտն էլ, քարերն է՛լ, փոսերն է՛լ:

Ձիերի վագքը դանդաղում է. նրանք ոտները քաշ են գցում. հասնում ենք Սախալ-Տուֆանի ամենաբարձր կետին: Է՛հ, բավական է, երեք վերստ թռանք, կարծես մի վայրկյանում: Կառապանը սանձերը քաշում է: Ձիերը կանգնում են, նրանք փրփրակալել են:

— Ա՛յ մատաղ քեզ, Սևո ջան,— ասում է կառապանը, իջնում կառքից և գնում ձգում է ձիերի բաշերը: Նրանք խոր շունչ են քաշում:

Շրջակայքը լուռ է և մութ: Սարերն ու բլուրները անհեթեթ ձևերով պառկել՝ ականջ են դնում աստծուն: Հեռուն, ձորակում քամին շունչը պահում է և ականջ դնում զարմացած: Մի ծպտուն որ ասես՝ չկա հսկա լեռնադաշտում: Մաքուր լռությունից ականջներդ թշնամ են: Երբեմն միայն փռնչում է ձին և կոտրում լռությունը:

Մութն է, ոնց որ թանաքի ծով: Երկինքը պայծառ, խոր և հորիզոնի սև շրջանակը պատուհանից բացում է երկնքի կապույտ տափաստանը դեղին աստղերով ծաղկած, և ինչքան մոտիկ եմ երկնքին. գլուխս երկարած նայում եմ նրան, որ ավելի լավ տեսնեմ, թե ինչ բաներ են էն աստղերը: Եվ իսկապես՝ ի՞նչ կա նրանց վրա... ո՞ր եմ սլանում կրակե կառքերը: Ու գնում ենք. ձիերը, ես, կառապանը. գնում են և աստղերը...

Է՛հ, սիրում եմ Սախալ-Տուֆանը, ամեն անգամ, երբ գիշերով բարձրանում եմ նրա երկնամերձ սեղանին, ինձ թվում է, թե երկինք եմ գնում:

ՍԱԽԱԼ-ՏՈՒԹԱՆ

(Էջ 7)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Դատելով բովանդակությունից ինքնագրի ուղղագրությունից, պետք է գրված լինի 1910-ական թվականներին:

ԳԱԹ ԴՖ N358 պահվում է մեկ ինքնագիր:

Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից:

1 Սախալ-Տուֆան

— հավանաբար՝ Սախալ-Թուֆան, որ թուրքերեն նշանակում է մորուք բռնող: Այս տեղանունը հանդիպում է նաև ուրիշ վայրերում: Դ-ի նկարագրածը Կարսի կողմերում է՝ Չալթը լճի մոտակայքում:

Սախալ-Տուֆան տեղանվան մասին կա մի այսպիսի ավանդություն. «Տաթևից Հալիծոր գնալիս Դավիթ-Բեկը պատահում է Ֆաթալի խանի օգնականին: Սա ծաղրելով Դավթին ասում է. Դավիթ-Բեկ, մորուքդ բռնիր, նամազդ արա, վերջդ եկել է: Դավիթ-Բեկը պատասխանում է. Մենք այսպիսի տեղերում ո՛չ նամազ ենք անում, ո՛չ էլ մորուք բռնում, տղամարդ ես դիմացիր: Ասում է, թուրը քաշում, վրա է տալիս խանի ձիավորներին, բոլորին կոտորում է և դառնալով խանին ասում:

Մորուքի բռնի այ շուն, նամագդ արա, վերջդ եկել է, և թռցնելով նրա գլուխը նետում է Ռոտան գետի մեջ: Դրանից հետո այդ ձորի անունը դնում են Սախալ-Տութան (Մորուսակալ)»: (Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 45):

2 Զուլդու լիճ — պետք է լինի, Չալթր լիճ: Գտնվում է Կարսի նահանգի հյուսիս-արևելքում, ծովի մակերևույթից 1957 մ բարձրության վրա, շրջապատված բարձր լեռներով: Այս լճի մասին ևս կա մի ավանդություն (տե՛ս Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 81):